

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ժամանակակից գրական հայերենի լեզվական կառուցվածքի տարբեր մակարդակներում գործառում են զգալի քանակով տարբերակային ձևեր, որոնց քննությունն անհրաժեշտ է լեզվի նորմավորման ընթացքի դիտարկման, նոր ձևավորվող օրինաչափությունների բացահայտման և առհասարակ լեզվի զարգացման միտումների լուսաբանման ու գնահատման տեսակետից: Տարբերակներ կամ տարբերակային ձևեր տերմինը լեզվաբանական գրականության մեջ միանշանակ կիրառություն չունի. այն ըմբռնվում է և՛ լայն, և՛ նեղ իմաստներով: Ոմանք տարբերակները դիտում են որպես համանիշության դրսևորում, տարատեսակություն¹, ոմանք տարբերակներ են համարում իմաստով նույնական բաղմաձև միավորները² (ձևական տարբերակման շահին այս դեպքում շատ չի կարևորվում), իսկ ըստ ոմանց էլ տարբերակներն իմաստով բացարձակ նույնական, հնչյունական կազմով շատ քիչ տարբերվող զույգերը կամ շարքերն են³: Վերջին շրջանում տերմինի նեղ իմաստով գործածությունը ավելի մեծ տարածում է ստանում: Տարբերակները լինում են շեշտային հնչյունական կամ արտասանական, հնչութային, բառակազ-

¹ А. Н. Гвоздев. Очерки по стилистике русского языка. М., 1952, с. 30.

² О. С. Ахманова. Очерки по общей и русской лексикологии. М., 1957; Н. Г. Михайловская. Лексическая вариантность в списках древнерусских памятников; Е. С. Копорская. О некоторых факторах возникновения лексической вариантности в русском литературном языке XVIII—начала XIX в. В сб.: Литературная норма и вариантность. М., 1981.

³ Е. П. Шендельс. «Понятие грамматической синонимии» (Научные доклады высшей школы, ФН I, 1959, с. 80; Ф. П. Филин. О слове и вариантах слова. В кн.: Морфологическая структура слова в языках различных типов. М.—Л., 1963, с. 130—133; Р. П. Рогожникова. Варианты слов в русском языке. М., 1966; О. И. Москальская. Вариантность и дифференциация в лексике литературного немецкого языка. В кн.: Норма и социальная дифферен-

մական, քերականական⁴: Ներկա աշխատանքում բնության են առնվում հայերենի գոյականի քերականական կարգերում գործող տարբերակները:

Հայերենի քերականական (և ոչ միայն քերականական) տարբերակները հայերենագիտության կողմից մենագրական ուսումնասիրության շնորհիվ ենթարկվել: Որպես կանոն տարբերակային ձևերի առկայության, գործառնության ոլորտների ու ժամանակագրական սահմանների վերաբերյալ դիտողություններ արվել են այս կամ այն կարգի բնության կապակցությամբ⁵:

Հայերենի քերականական տարբերակների և նրանց նորմավորման հարցի բնությանը նվիրվել են մի շարք հոդվածներ⁶:

циация языка. М., 1969, с. 58; К. С. Горбачевич. Вариантность слова и языковая норма. Л., 1978, Л. К. Граудина. Вопросы нормализации русского языка: Грамматика и варианты. М., 1980, с. 107.

4 Տարբերակների դասակարգման հարցում ևս լեզվաբանները միասնական կարծիքի չեն. տե՛ս В. В. Виноградов. О формах слова. «Известия ОЛЯ», т. 3, вып. 1, 1944, А. И. Смирницкий. К вопросу о слове (Проблема тождества слова). Труды Института языкознания АН СССР, т. 4, М., 1954, О. С. Ахманова. Очерки по общей и русской лексикологии. М., 1957, Ф. Л. Филин. О слове и вариантах слова. Морфологическая структура слова в языках различных типов. М.—Л., 1963; Р. П. Рогожникова. Варианты слов в русском языке. М., 1966; В. А. Гречко. Однокоренные синонимы и варианты слова. Очерки по синонимике современного русского литературного языка. М.—Л., 1966; К. С. Горбачевич. Вариантность слова и языковая норма; Л. К. Граудина. Вопросы нормализации русского языка: грамматика и варианты.

5 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1955; Հ. Աճառյան, Կիսկատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, 1957; Գ. Բ. Զաճուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, 1974; Է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, 1967; Ս. Գ. Արաճաճյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, 1974; Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, 1970; Ռ. Ա. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, 1971; Գ. Լ. Գաբրիելյան, Ձևաբանական կառուցվածքի փոփոխություններ, «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում», 1973; Ն. Ա. Պառնասյան, Ձևաբանական և բարոքերականական համաիշխան ժամանակակից հայերենում, «Հայոց լեզվի կառուցվածքը», 1975; Ժամանակակից հայերենի արտասանական տարբերակները բնության են առնվել Բ. Ղարազուլյանի «Ժամանակակից հայերենի ուղղախոսությունը» (1974) մենագրության մեջ: Ժամանակակից գրական հայերենի խոսակցական տարբերակի հիմնական զուգաձևությունները նշվել են Հ. Լ. Զաքարյանի «Հայերենի հասարակական տարբերակումները Երևանում» աշխատության մեջ. տե՛ս «Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն», 1981:

6 Հ. Հաբոբյանյան, Բայական զուգաձևերի վիճակագրական պատկերը ժամանակակից հայերենում, ԲՆՀ, 1975, № 3; Ն. Ա. Պառնասյան, Ձևաբանական զուգաձևությունները ժամանակակից գրական հայերենում, «Տեղափոխարանության և խոսքի մշակույթի

Գոյականի տարբեր կարգերում գործող առանձին զուգահեռ ձևերի վերաբերյալ հայագիտության մեջ արտահայտված կարծիքների քննությունը թողնելով հաջորդ գլուխներին, որտեղ նշվում են այդ զուգահեռները, այստեղ փորձենք ներկայացնել դրանց առաջացման ու փոփոխության պատճառներին տրվող գնահատումները:

Մ. Արեղյանը մրցակցող ձևերի առկայությունը բացատրում է նախ անհատի լեզվում դրսևորվող փոփոխություններով: «Նոր կազմության ձևը մի անհատից սկսվելով՝ սկզբում ընդունվում է, հարկավ, մի շատ նեղ շրջանում. բայց հետզհետե շատերը լսելով այդ՝ յուրացնում են, նամանականդ, երբ սրանք էլ գտնվում են նույն լեզվական վիճակի մեջ: Նոր սերունդը, որի համար հին ու նոր լիզա,— քանի որ նա ամեն ինչ նոր է սովորում,— միակերպ ընդունում է թե՛ հինը և թե՛ նորը և երկուսն էլ անխտիր գործածում: Երբ նոր սերնդից բազմաթիվ անհատների մեջ լեզվի զարգացումն այն ուղղությամբ է ընթացում, որ այլևի նոր ձևն են գործածում, այն ժամանակ հին ձևը հետզհետե մնում է միայն հին սերնդի մեջ, որի հետ և վերջապես մեռնում է՝ բոլորովին մոռացության տրվելով: Այսպիսով, նոր կազմությունը, որ սկսվելով մի անհատից սկզբում անսովոր և նույնիսկ սխալ է համարվում, դառնում է կիրառության սովորական և «ուղիղ» ձև, որով և լեզուն փոխվում է: Բազմաթիվ այսպիսի փոփոխությունների հետևանքը լինում է արդեն լեզվի ընդհանուր փոփոխությունը, որը, սակայն, տեղի է ունենում դարերի ընթացքում շատ դանդաղ և անզգալի:

Մեր նոր լեզվի մեջ կապակցության ձևերի ու բառաձևերի տարբերությունները հնից՝ մեծ մասամբ այսպիսի անալոգիական նոր կազմություններով են առաջ եկած»⁷:

Հ. Աճառյանը հայերենի հոլովման փոփոխության ընթացքը ներկայացնելու կապակցությամբ խոսում է և հոլովական տարբերակների առկայության ու դրանց դանդաղ հաղթահարման մասին: «Նոր շրջանում, այսինքն միջին հայերենից հետո, լեզուն ձգտում է մի ուղղության. հոլովումը վերածել միաձևության: Այստեղ սկսում են բոլոր բառերը

հարցեր», 1979: Խ. Ղարազույան, լեզվական տարբերակները և դրանց գնահատումը, 129, 1980, № 7: Ա. Սարգսյան, Վերջին միավանկ բաղադրիչով բարդ բառերի հոգնակի թվի զուգահեռը ժամանակակից հայերենում, 129, 1979, № 4: Ա. Սարգսյան, -նում ածանցով բայանունների հոլովական զուգահեռը ժամանակակից հայերենում, 129, 1981, № 11: Լ. Հովսեփյան, Հ. Զաֆարյան, Գրական հայերենի նորամտորման պատմությունից, «Հայոց լեզու և գրականություն» (միջբուհական ժողովածու), սրբալ 1—2, 1982: Հ. Զաֆարյան, լեզվապալանմորման թուլատրելի սահմանների որոշման սկզբունքները, «Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր», 2-րդ թողարկում (պատրաստվում է սուպրություն) և այլն:

7 Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 45—46:

հոլովել ի հոլովման համաձայն: Այս եղավ լեզվի ընթացքը: Բայց որովհետև ոչ մի բարեփոխություն չի կարող միանգամից և ընդհանուր տարածվել, ուստի հոլովական բարեփոխությունն էլ միջնադարից սկսելով մինչև այսօր էլ չի հասել իր վերջին վախճանին»⁸:

Գ. Զահուկյանը հոլովի կարգում տատանվող զուգաձևերի առկայությունը բացատրում է ձևական, իմաստային ու պատմական գործոններով: Գործոնների փոխազդեցությունը ըստ նրա կարող է հանգեցնել միտումների համընկնման (որի դեպքում դուրանում է հոլովման տիպի որոշումը) և չհամընկնելու ու խաչաձևման. վերջին դեպքում գործում են խաչաձևության դոմինանտության և խաչաձևման զուգաձևության օրենքները⁹: Խաչաձևման դոմինանտության օրենքի էությունն այն է, որ տարբեր օրենքների ու օրինաչափությունների խաչաձևման դեպքում գերակշռում է հոլովման հիմքերից մեկը: Որպես կանոն գերակշռում է այն տիպը, որն ավելի շատ օրենքներով է պայմանավորված. այդպիսին լինում է մեծ մասամբ ամենից ավելի գործուն և ամենից ավելի տարածված տիպը: Խաչաձևման զուգաձևության օրենքը խաչաձևման դոմինանտության օրենքի հակադրությունն է. այս դեպքում տարբեր օրինաչափությունների ու պատճառների խաչաձևումից առաջանում են միևնույն բառի տարբեր հոլովման ձևեր¹⁰: Այսպիսով, ըստ Գ. Զահուկյանի, զուգաձևերի առկայությունը հետևանք է տարբեր օրենքների ու միտումների փոխներթափանցումների:

Ժամանակակից հայերենի բառապաշարի և լեզվի տարբերակների ու ոճերի քննության կապակցությամբ է. Աղայանը անդրադառնում է նաև բառային տարբերակներին, որոշակի հատկանիշների հիման վրա խմբավորում ու դասակարգում է դրանք և նշում դրանց տեղը համապատասխան համակարգերում¹¹: Հոլովական զուգաձևերի գոյությունը նա բացատրում է լեզվի համակարգում գործող օրինաչափություններով և տարբեր ոճերի առկայությամբ: Ըստ այդմ նա տարբերում է զուգաձևեր ըստ կառուցվածքի և զուգաձևեր ըստ ոճերի: Առաջին դեպքում բառերի՝ այս կամ այն ձևով հոլովումը պայմանավորվում է դրանց ձևական կամ իմաստային առանձնահատկություններով, երկրորդ դեպ-

8 Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 3, էջ 518:

9 Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, էջ 195:

10 Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը*, 1959, էջ 121:

11 Տե՛ս է. Բ. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, 1967, էջ 24—28, 277—278, Գ. Բ. Զահուկյան, է. Բ. Աղայան, Վ. Դ. Առափիյան, Վ. Ա. Քոսյան, *Հայոց լեզու*, I մաս, Ա. պրակ, 1980, էջ 300—328:

քում՝ գրական լեզվի կանոնական ու ոչ կանոնական, հին կամ ավանդաբար պահպանված և կամ հոլովման արդի համակարգին համապատասխանող այլ ձևերի համագոյակցությունը¹²։

Ինչպես երևում է հարցի համառոտ պատմությունից, հայերենագիտությունը տարբերակների նպատակադիր ու համակողմանի ուսումնասիրությունը չի զբաղվել։ Մեջբերվող և մի շարք այլ կարծիքներն, ինչպես արդեն նշվել է, արտահայտվել են քերականական տարբերկարգերի կամ բառապաշարի քննության կապակցությամբ։ Հաճախ տարբերակները ներկայացվել են ծանոթագրությունների, հղումների ձևով, քանի որ քերականագետների հիմնական նպատակը եղել է ընդհանրական, համակարգային երևույթների նկարագրությունը։

Տարբերակայնության հարցի նկատմամբ հայագիտության մեջ հետաքրքրությունն աճել է վերջին մի քանի տասնամյակներում, երբ խոսքի մշակույթի զարգացման հետ կապված՝ առավել մեծ ուշադրություն սկսեցին նվիրել գրական լեզվի նորմայի մշակման հարցերին։ Դեռևս լուծված չէ զուգահեռ ձևերի գիտական միասնական տերմինավորման հարցը։ Երևույթն անվանելու համար լեզվաբանական գրականության մեջ որպես համանիշներ գործածվում են մի շարք բառեր ու տերմիններ, ինչպես, օրինակ, զուգաձևեր, զուգաձևություններ, զուգահեռներ, զուգահեռություններ, երկձևություն, բազմաձևություն, կրկնակ ձևեր, տատանումներ, շեղումներ, նույնանիշներ, համանիշներ, տարբերակներ և այլն։ Վերջին տարիներին առավել տարածում են ստացել տարբերակներ, զուգաձևեր, զուգաձևություններ անվանումները։

Նորմայի և տարբերակման հարցերը ուսագիտության մեջ լայնորեն սկսել են լուսարանվել 1950-ական թվականներից սկսած։ Դրանց քննությանն են նվիրվել մի շարք թեմատիկ ժողովածուներ և բազմաթիվ առանձին հոդվածներ¹³։ Վերջին շրջանում լույս են տեսել և մենագրություններ, որոնցում քննվել են տարբերակման և լեզվական նորմայի փոխհարաբերության հարցերը¹⁴։ Սակայն այդ հարցերը դեռևս պատ-

12 է. Բ. Աղայան, *Եզված աշխ.*, էջ 277—278։

13 Вопросы культуры речи, вып. I—VIII (1955—1967), Русский язык и советское общество, М., 1968; Норма и социальная дифференциация языка, М., 1969; Актуальные проблемы культуры речи, М., 1970; Синонимы русского языка и их особенности, М., 1972; Русский язык по данным массового обследования, М., 1974; Ономастика и норма, М., 1976; Литературная норма и просторечие, М., 1977; Грамматика и норма, М., 1977; Языковая норма и статистика, М., 1977; Литературная норма и вариантность, М., 1981.

14 К. С. Горбачевич. Вариантность слова и языковая норма; Л. К. Граудина. Вопросы нормализации русского языка: Грамматика и варианты; Л. И. Сквацов. Теоретическая основы культуры речи. М., 1980.

վանում են գործնականում քիչ ուսումնասիրված հարցերի թվին: Վիճելի է մնում դեռևս այն հարցը, թե տարբերակման քննությունը լեզվի գիտական նկարագրության որ համակարգում պետք է լինի, թեև, հետըզհետե ավելի որոշակիորեն, նորման ու տարբերակումը դառնում են խոսքի մշակույթի տեսության հիմնական հասկացությունները: Ընդհանուր առմամբ վիճելի է և այն, թե լեզվական միավորների հասարակական գործառույթյան մեջ տարբերակային ձևերի առկայությունն օգտակար է, թե՛ վնասակար: Ն. Ն. Սեմենյուկն, օրինակ, տարբերակային ձևերին ընդհանուր առմամբ դրական գնահատում է տալիս, իսկ Ե. Պ. Շենդելսը՝ բացասական, գտնելով, որ տարբերակների առկայությունը հետևանք է նորմայի անբավարար մշակվածության¹⁵: Ընդհանուր առմամբ բացասական գնահատում է տալիս և Կ. Ս. Գորբաչևիչը¹⁶, թեև նա միաժամանակ նշում է, որ «հավելուրդային ձևերը լեզվական համակարգի տարրերի վերականգնումն անհրաժեշտ փուլն են կազմում և կարծեք հաշտեցնում իրար լեզվի նորացման մշտական ձգտումն ու յուրաքանչյուր նորի, անսովորի նկատմամբ լեզվի ունեցած պաշտպանական ռեակցիան»¹⁷:

1960 թ. գրած մի հոդվածում¹⁸ Օ. Ս. Ախմանովան, Յու. Ա. Բելչիկովը և Վ. Վ. Վեսելտսկին առաջ քաշեցին տարբերակները հատուկ ուսումնասիրության առարկա դարձնելու և լեզվաբանության մեջ առանձին գիտակարգ ստեղծելու գաղափարը: Նրանց կողմից այդ գիտակարգին տրվեց օրթոլոգիա (ուսմունք ուղիղ խոսքի մասին) անվանումը: Օրթոլոգիայի նպատակը պիտի լիներ լեզվի բոլոր մակարդակներում հանդես եկող տարբերակների ուսումնասիրությունը: Տարբերակումը պիտի լիներ օրթոլոգիայի հիմնական կարգը: Այդ կարգը պետք է արտացոլեր լեզվում հին և նոր որակ ներկայացնող գործառույթյան նման տարրերի համատեղ գոյակցությունը, տարբեր զուգահեռ ձևերի տարածման գործընթացները: Օրթոլոգիայի վերջնական նպատակը պիտի լիներ լեզվի զարգացման տվյալ փուլում տարբերակների գործառույթյան ու հարաբերակցության ճիշտ գնահատումը: Թեև օրթոլոգիական հայեցակետը զարգացում չապրեց¹⁹, այնուամենայնիվ ունեցավ այն դրական դերը,

¹⁵ *Տե՛ս* Н. Н. Семенов, Некоторые вопросы изучения вариантности. ВЯ, 1965, № 1, с. 55; Е. П. Шендельс, Понятие грамматической синонимии. «Научные доклады высшей школы». ФН, I, 1959, с. 80.

¹⁶ К. С. Горбачевич, Вариантность слова и языковая норма, с. 19.

¹⁷ Նույն տեղում, էջ 9:

¹⁸ О. С. Ахманова, Ю. А. Бельчиков, В. В. Веселитский. К вопросу о «правильности» речи. ВЯ, 1960, № 2.

¹⁹ Ն. Ն. Սեմենյուկը գտնում է, որ այդ գիտակարգի ստեղծումն ավելորդ է, քանի որ նորման ու տարբերակումը լեզվաբանական մասնավոր հասկացություններ են. տե՛ս

որ խոսքի մշակույթի տեսության մեջ առաջին պլան մղեց տարբերակման ու նորմայի ուսումնասիրության հարցը:

Ժամանակակից գրական լեզուների մեծ մասի (այդ թվում և հայերենի) նորման բնութագրվում է տարբերակային ձևերի առկայությամբ: Նորմայի յուրահատկությունները հաճախ որոշվում են տարբերակայնության տարածման շահերով, որը և հիմք է դառնում լեզվի զարգացման առանձին շրջանների բաժանման համար: Այդ իսկ պատճառով էլ նորմայի և տարբերակման (հաճախ դրանք գործածվում են միասնաբար՝ նորմայի տարբերակում) հարցերը հաճախ իրարից անկախ չեն քննվում: Ն. Սեմենյուկը նորմայի և տարբերակման միջև երկակի կախում է տեսնում: Եթե տարբերակման բնույթը՝ զուգակցված մի շարք հատկանիշներով, որոշում է գրական լեզվի նորմայի յուրահատկությունները, ապա, մյուս կողմից, հենց նորման է սահմանում թույլատրելի տարբերակների տիպերն ու քանակը և կարգավորում նրանց կիրառությունը²⁰:

Ռուսերենի բառի տարբերակայնության և լեզվական նորմայի հարցերի հանգամանալից քննությանն է նվիրված Կ. Ս. Գորբաչևիչի մեկագրությունը²¹: Աշխատության առաջին երկու գլուխներում առաջ են քաշվում ու մեկնաբանվում բառի տարբերակայնության ու «լեզվական նորմա» հասկացության հետ կապվող տեսական բնույթի մի շարք հարցեր, մյուս գլուխներում համապատասխան խմբավորումներով ներկայացվում են ռուսերենի բառի շեշտային, հնչութային ու ձևաբանական տարբերակները: Մեկագրության մեջ հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է տարբերակայնության ներքին պատճառների ուսումնասիրության վրա: Գորբաչևիչը, հերքելով բոլոր այն կարծիքները, թե տարբերակները լեզվում առաջանում են հասարակության տարիքային ու մասնագիտական տարբերություններից, գրական լեզվի ռճերի ճյուղավորված համակարգից ու գործառական բաղամասնությունից կամ գեղարվեստական խոսքի առանձին ժանրերի պահանջներից, գտնում է, որ դրանք միայն պահպանում են տարբերակները, դառնում մի տեսակ սնուցիչ միջավայր նրանց համար, երբեմն էլ որոշում են տարբերակների գործածման յուրահատկությունները: Տարբերակների առաջացման իրական պատճառները ըստ նրա այլ են. դրանք նա պայմանականորեն բաժանում է երկու խմբի՝ արտաքին և ներքին (ներհամակարգային): Արտաքին պատճառների թվին դասում է տերիտորիալ բարբառների ազդեցությունը, լեզվական շփում:

Կ. Ս. Семенюк. Некоторые вопросы изучения вариантности. ВЯ, 1965, № 1;

տե՛ս նաև՝ Ю. М. Скребнев. К вопросу об «ортологии». ВЯ, 1961, № 1.

²⁰ Н. И. Семенюк, նշված հոդվածը, էջ 55:

²¹ К. С. Горбачевич, Вариантность слова и языковая норма.

ները և այլն: Ներքին հիմնական պատճառներից է համարում համաբանութիւնի գործոնի ազդեցութիւնը, ձեռք և բովանդակութիւն անհամարժեքութիւնը, լեզվական համակարգի կառուցվածքային հնարավորութիւնների բազմազանութիւնը, տնտեսման միտումը, արտասանական դյուրութիւնի հասնելու ձգտումը և այլն և այլն²²: Կարևոր է նրա և այն հետևութիւնը, որ ներքին պատճառներն ստեղծում են տարբերակայնութիւնի ուժեղ գոտիներ, որոնց մեջ մտնող տարբերակային շարքերի անդամներն ունեն հարաբերականորեն կանոնավոր վերարտադրելիութիւն: Մինչդեռ արտաքին պատճառներն ստեղծում են տարբերակայնութիւնի թուլ գոտիներ, որտեղ նոր, գործող տարբերակները հակադրվում են հնացածներին կամ կանոնականները՝ ոչ կանոնականներին²³: Բառի տարբերակմանը նա տալիս է հետևյալ սահմանումը. «Բառի տարբերակները միևնույն բառի կանոնավորապես վերարտադրվող այն կերպափոխութիւններն են, որոնք պահպանում են ձևաբանական-բառակազմական կառուցվածքի, բառային ու քերականական իմաստների նույնութիւնը, և որոնք տարբերվում են կամ հնչյունական կողմով (հնչյունների արտաբերումով, հնչյութային կազմով, շեշտի տեղով կամ այդ բոլոր հատկանիշների համադրումներով), կամ ձևակազմական մասնիկներով (վերջածանցներ, թեքութիւններ)»²⁴:

Գորբաչևիչը բառի տարբերակ տերմինի նեղ ըմբռնման կողմնակից է: Ըստ նրա բառի տարբերակային ձևերում համընկնում են և՛ բառական, և՛ քերականական իմաստները:

Ռուսերենի ձևաբանական տարբերակները Գորբաչևիչը բաժանում է երեք խմբի՝ սեռային, ձևահնչյութաբանական ու վերջածանցային և ձևակազմական: Վերջինիս մեջ նա դասում է գոյականի հոլովի ու թվի, բայական առանձին կարգերի զուգաձևերը: Բառի ձևաբանական տարբերակներում նույնական են բառիմաստը, հնչյունական կազմի հիմնական մասը, քերականական իմաստը²⁵:

Կ. Գորբաչևիչը ձևաբանական տարբերակման առաջացման հիմնական պատճառ է համարում լեզվի հին կառուցվածքից ժառանգված հարացուցային տարբերութիւնների խաչաձևումը և համաբանութիւնի գործոնի ազդեցութիւնը: Զեռաբանական տարբերակների պահպանման գործում ըստ նրա դեր ունեն և հանրալեզվաբանական գործոնները (ժամանակակից հասարակութիւնի կուլտուրական մակարդակի և սոցիալական:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 23—24:

23 Նույն տեղում, էջ 24—25:

24 Նույն տեղում, էջ 17:

25 Նույն տեղում, էջ 138:

նկազմի փոփոխությունը, սոցիալ-մասնագիտական տարբեր խմբերի կողմից մրցակցող տարբեր ձևերի ընարությունը, գրային ավանդույթի դերի մեծացումը և այլն): Զևաբանական տարբերակների երկարատև գոյությունը ըստ Գորբաչևիչի նպաստում են մի շարք հանգամանքներ. դրանցից են՝ ձևաբանական կազմի դանդաղ փոփոխությունը, հասարակական ազդեցություններին նրա թույլ ենթարկվածությունը, ներլիզվական հակադիր ուժերի առկայությունը, հասարակական գնահատման անհամընկնելիությունը, նորմայի դանդաղ կայունացումը և այլն²⁶,

Մեծ է նաև Լ. Կ. Գրաուդինայի ներգրումը ուսերենի քերականական տարբերակների ուսումնասիրության գործում: Նրա մենագրության մեջ²⁷ լուսաբանվում են ուսերենի նորմավորման հարցերը, քննության են առնվում նորմայի սահմաններում գործող ձևաբանական տարբերակները: Գրաուդինան քերականական տարբերակների բնութագրական հիմնական հատկանիշը համարում է նախ և առաջ քերականական գործառույթի նույնությունը, որը առաջնալուծ քերականական իմաստների զուգորդային նմանությունից, հանգեցնում է քերականական տարբերությունների դիրքային չեզոքացման²⁸: Ի տարբերություն Օ. Ս. Ախմանովայի, Կ. Ս. Գորբաչևիչի և մյուսների²⁹, որոնք բառի տարբերակ հասկացության մեջ միավորում են և՛ բառային, և՛ քերականական տարբերակները, Գրաուդինան դնում է դրանց սահմանադատման հարցը, նկատելի տալով, որ հազարավոր բառեր ուղիղ ձևում տարբերակներ չունեն, և, հետևաբար, դրանց նկատմամբ կիրառելի չէ բառի տարբերակ հասկացությունը (համտ՝ тракторы-трактора, в цехе-в цеху): Նա առանձնացնում է բառի տարբերակ և ձևի տարբերակ հասկացությունները. վերջինիս տակ դնում է միայն քերականական տարբերակները: Գրաուդինան քերականական տարբերակները բաժանում է երեք խմբի՝ շարահյուսական, բառափոխական և բառակազմական: Բառակազմական տարբերակները նա մտցնում է քերականականի և ոչ բառայինի մեջ՝ նկատի առնելով այն, որ բառակազմությունը զբաղվում է բառաձևերի ձևաբանությամբ, թեև ավելացնում է, որ ավելի շուտ դրանք գտնվում են բառայինի ու քերականականի սահմանագծում³⁰: Այսպիսով, Գրաուդինան քերականական տարբերակման սահմաններն ավելի է ընդարձակում: Ըստ նրա ձևի տարբերակ և բառի տարբերակ հասկացություն-

²⁶ Նույն տեղում, էջ 138:

²⁷ Л. К. Граудина. Вопросы нормализации русского языка: Грамматика и варианты. М., 1980.

²⁸ Նույն տեղում, էջ 102:

²⁹ Sб'а О. С. Ахманова. Очерки по общей и русской лексикологии. М., 1957; К. С. Горбачевич, Вариантность слова и языковая норма.

³⁰ Л. К. Граудина, *Եզված աշխ.*, էջ 110:

ներն իրար հարաբերակցում են այնպես, ինչպես ընդհանուրը և մասնավորը: Գրառուդինան ընդունում է քերականական տարբերակների որոշման հետևյալ շահանիշները.

1. Քերականական են այն տարբերակները, որոնք ունեն քերականական ձևերի համակարգային բնույթի տատանումներ: Այդ պահանջը բավարար է, եթե առկա է ոչ պակաս քան երկու տարբերակ:

2. Տարբերակային ձևերի առկայության ապացուցման գործնական լավագույն միջոցը մի տարբերակը մյուսով փոխարինելու հնարավորությունն է:

3. Տարբերակների էական կողմերից մեկը քերականական իմաստների գործառական համարժեքությունն է: Նշվում է սակայն, որ այդ իմաստներում բացարձակ հավասարարժեքություն չկա: Նույնություն հաստատվում է այն համատեքստի սահմաններում, որտեղ հնարավոր է տարբերակների փոխարինելիությունը:

Ըստ իմաստների նույնության բնույթի, նա ընդունում է 2 կարգի հակադիր տարբերակներ: Առաջին տիպի դեպքում տարբերակայնությունը դրսևորվում է քերականական ձևի հիմնական իմաստի մեջ (նկատի ունի, օրինակ, հոլովական զուգաձևերը). նման դեպքերում համատեքստի ընդարձակումը պարտադիր պայման չէ: Մյուս տիպի դեպքում տարբերակայնությունը դրսևորվում է ոչ առաջնային իմաստներում: Նման դեպքերում առանց համատեքստի տարբերակային ձևերի նույնությունն ապացուցելն անհնար է: Առաջին տիպի տարբերակները կոչվում են դենոտատիվ կամ համակարգային, երկրորդ տիպի տարբերակները՝ կոննոտատիվ կամ համատեքստային³¹:

4. Համեմատվող քերականական կառույցները պետք է լինեն համասեռ: Սա նշանակում է, որ պետք է համադրվեն նույնատիպ կազմություններ (նույն բառի ձևեր են): Այսպիսով, ըստ Գրառուդինայի, քերականական տարբերակները գործառապես նույնական քերականական այն միավորներն են, որոնք տարբերվում են քերականական ձևի կանոնավոր անհամընկնելիությամբ³²: Մենագրության մեջ լայնորեն օգտագործվել են «Տարբերակների հաճախականական-ոճաբանական բառարանի փորձի»³³ տվյալները, որոնք հնարավորություն են տվել հեղինակին գնահատելու ոչ միայն տարբերակային ձևերի տեսակարար կշիռը քերականության մեջ, այլև դասակարգելու այդ տարբերակներն իրենց

³¹ Նույն տեղում, էջ 117:

³² Նույն տեղում, էջ 120:

³³ Л. К. Граудина, В. А. Ицкович, Л. П. Катлинская. Грамматическая правильность русской речи: Опыт частотно-стилистического словаря вариантов. М., 1976.

քերականական, ժամանակագրական և քանակական բնութագրերի ընդհանրության մեջ:

Ռուսերենի խոսքի մշակույթի բնագավառում վերջին տասնամյակներում ըննության են ենթարկվել նորմայի տարբերակման, գրական նորմաների կազմավորման ու զարգացման, դրանց գործառության արտալեզվաբանական ու լեզվաբանական գործոնների հարաբերակցության, նորմայի, որպես օբյեկտիվ-պատմական երևույթի և կոդիֆիկացիայի (կանոնարկման), որպես նորմավորական գործոնեություն, սահմանազատման, լեզվի կառուցվածքի ու նորմաների հարաբերակցության, նորմայի դինամիկ տեսության հարցերը³⁴: Այդ հարցերի տեսական մեկնաբանությունն է նվիրված Լ. Ի. Սկվորցովի «խոսքի մշակույթի տեսության հիմունքները» աշխատությունը:

Գրական լեզվի ուսումնասիրության, նրա նորմաների հաստատման և տարբերակային ձևերի գնահատության գործում մեծ ներդրում ունեն Պրագայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչները: Նրանք միանգամայն նոր մոտեցում են ցուցաբերել գրական լեզու հասկացության էության, նորմայի և կոդիֆիկացիայի տեսության, գրական լեզվի ոճական տարբերակների և խոսքի մշակույթի տեսության հարցերի նկատմամբ: Նշված և դրանց առնչվող հարցերի վերաբերյալ ուսումնասիրություններ են գրել Բ. Հավրանեկը, Վ. Մատեզիուսը, Ի. Կործինեկը, Ա. Եդլիչկան, Բ. Տրնկան, Ի. Վահեկը և ուրիշներ:

Գրական լեզվին տրվող շեխ լեզվաբանների գնահատությունը Ա. Եդլիչկան բաժանում է երեք շրջանի³⁵: Առաջին շրջանում (մինչև 1932 թ.) նույնացվում էին գրական լեզու և գրքային լեզու հասկացությունները: Գրական լեզվի հիմնական հատկանիշը համարվում էր լեզվական միջոցների և նորմայի պահպանողականությունը: Գրական լեզվին, որպես արհեստականի, հակադրվում էր ժողովրդական լեզուն: Վ. Մատեզիուսը հետագայում առաջինն է ընդունում գրական լեզվի առաձգական կամ ճկուն (էլաստիկ) կայունության գաղափարը:

Երկրորդ շրջանում մեծ ուշադրություն են սկսում դարձնել գործառական հայեցակետին: Նոր տեսությունը գրական լեզուն դիտում է որպես բազմագործառութային (պոլիֆունկցիոնալ) կազմավորում, որն իրրև յադպիսին տարբերվում է ժողովրդական միագործառութային (мо-нофункциональный) լեզվից: Այս շրջանում գրական լեզվի նորմայի

³⁴ Актуальные проблемы культуры речи. М., 1970; К. С. Горбачевич. Изменение норм русского литературного языка. Л., 1971; Л. И. Скворцов, Теоретические основы культуры речи. М., 1980 և այլն:

³⁵ А. Едличка. О пражской теории литературного языка. «Пражский лингвистический кружок», М., 1967, с. 545—556.

հիմքը համարվում է ավանդականությունը, բայց հաշվի են առնվում այն տարրերը, որոնք տարժամանակյա կտրվածքի տեսակետից նոր են, համաժամանակյա կտրվածքում՝ կենդանի, իսկ լեզվի հետագա զարգացման տեսակետից՝ առաջնահերթ, կարևոր: Հատկապես արդիական է համարվում լեզվի պատմական զարգացմամբ պայմանավորված՝ տարբերակայնության պրոբլեմը: Ուշադրություն է նվիրվում ուղղախոսական նորմաներին, լեզվի տերիտորիալ տարբերակումներին:

Երրորդ շրջանում առավել հրատապ է համարվում տերիտորիալ տարբերակների ուսումնասիրությունը: Քանի որ կողիֆիկացիան (կանոնարկում) իր բնույթով ստատիկ է, իսկ նորման՝ դինամիկ, պատմականորեն պայմանավորված տարբերակները մտցվում էին նորմայի մեջ՝ վերոհիշյալ հակասությունը վերացնելու և նորմայի ներքին դինամիկությունն արտահայտելու համար: Նորման զարգանում է տարբերակների շնորհիվ: Տարբերակները որպես կանոն լեզվի մի որակից մյուսին անցման ձևերն են, միաժամանակ և ժառայում են ոճական նպատակների բավարարմանը: Գրական նորմային պատկանող տարբերակները սահմանազատվում են ոչ գրական տարբերակներից, տրվում է դրանց գնահատումը: Գրական լեզվի նորման աչքի է ընկնում միասնականությունով: Մինչդեռ առօրյա-խոսակցական լեզվի նորմային բնորոշ են լեզվամիջոցների տերիտորիալ և հասարակական տարբերակումները:

Լեզվի մշակույթի ընդհանուր սկզբունքներում Պրագայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչները դնում էին գրական լեզվի գիտակցական մշակման հարցերը, որոնք պետք է իրագործվեին երեք ճանապարհով՝ 1) տեսական լեզվաբանական աշխատանքներով, 2) դպրոցում լեզվի ուսուցմամբ, 3) գրողի աշխատանքով, գրական գործունեությամբ: Լեզվաբանական տեսությունը ըստ նրանց պետք է նպաստի նաև գրական լեզվի քերականական կառուցվածքի կայունացմանը: Կանոնարկում կատարելիս պետք է հիշել, որ գրական լեզվի զարգացումն ու փոփոխությունն անխուսափելի իրողություն են և չպետք է ձևաբանական ամեն կարգի հնաբանություններ բերել որպես միակ գրական ճիշտ ձևեր և դրանով ավելի խորացնել գրական ու խոսակցական լեզուների տարբերությունը:

Վ. Մատեզիուսն իր «Գրական լեզվի կայունացման անհրաժեշտության մասին» հոդվածում քննադատում է այն լեզվաբաններին, որոնք փորձում են անտեսել գրական լեզվում մրցակցող, համագոյակից տարբերակների առկայությունը և հանդես են գալիս լեզվի պատմական մաքրության պաշտպանի դերում: Լեզուն զարգանում է փոփոխությունների միջոցով, իսկ այդ փոփոխությունները լեզվում գործող նորմաների տեսակետից սկզբնապես սխալ են համարվում: Եթե դրանց նկատմամբ կի-

րառվի պատմական մաթրոսթյան շափանիշը, դրանք առհասարակ քննադատութեան շին դիմանա: Մատեղիուսը նշում է, որ լեզվական նորույթը ժամանակին պետք է ձեռք բերի նորմայի նշանակութուն: Շատ արագ և կամ երկար ու համառ դիմադրութիւնից հետո դրա ընդունումը կարող է կործանիչ ազդեցութիւն ունենալ գրական նորմայի անհրաժեշտ կայունացման վրա: Սակայն չպետք է կարծել, թե ամեն տեսակի կամայականութիւն ու ազատութիւն թուլատրելի է լեզվում: Յուրաքանչյուր մշակույթ ունի կանոնների որոշակի ստորակարգութիւն և յուրաքանչյուր զարգացած լեզու կառուցվում է այդ կանոնների պահպանման սկզբունքով: Ստորակարգութեան այդ սկզբունքը ըստ Մատեղիուսի «համակարգի ողջ միասնութեան ճկուն, առաձգական կայունութեան մեջ է»³⁶: Նոր գրական շխիբների նորմաների կայունացման հիմքում նա դնում է վերջին 50 տարում շխիական գրականութեան մեջ պատմականորեն ստեղծված նյութը:

Բ. Հավրանեկն իր «Գրական լեզվի խնդիրները և նրա մշակույթը» ընդարձակ հոդվածում քննում է գրական լեզվի մշակման, նորմայի կազմավորման, գրական լեզվի գործառական տարբերակումների հարցերը: Գրական լեզվի նորման ի տարբերութիւն ժողովրդականի, առավել պարտադրական է ու գիտակցական, իսկ նրա կայունութեան պահանջը՝ առավել վճռական: Գրական լեզվի նորման երբեք վերջնական չի լինում: Գրական լեզվի նորման ունի գործառական ու ոճական տարբերակումներ: Հավրանեկը դնում է գրական լեզվի կայունացման ու լիակատար միասնութեան Մատեղիուսի պահանջին. ըստ նրա դա կարող է հանգեցնել գրական լեզվի համահարթման, որի հետևանքով գրական լեզվից դուրս կմղվեն բոլոր տատանվող զուգաձևերը, բառային ու քերականական համանիշները: Կեզուն այդ դեպքում կարող է զրկվել գործառական ու ոճական տարբերութիւնների իր բոլոր միջոցներից³⁷: Մյուս կողմից էլ Հավրանեկը դնում է գրական լեզվի ինտելիկտուալացման ու նորարարացման հարցը: Դա լեզվի զարգացման այն աստիճանն է, երբ ասույթը դառնում է առավել ճշգրիտ ու որոշակի, ընդունակ է լինում արտահայտելու մտքերի ողջ բարդութիւնն ու փոխադարձ կապը³⁸:

Հայերենի գոյականական զուգաձևութիւններն ուսումնասիրելիս աշխատել ենք հաշվի առնել խոսքի մշակույթի բնագավառում հաջող լուծում ստացած, ընդունելի դրույթները (նորմայի դինամիկ տեսութիւն, նորմայի և կողիֆիկացիայի հարաբերակցութիւն, հավասարաբեռ և

36 «Пражский лингвистический кружок», с. 381.

37 Նույն տեղում, էջ 346:

38 Նույն տեղում, էջ 350:

ոճական նշույթավորում ունեցող տարբերակների գնահատում, բառարաններում նորմաների մշակման արտացոլում և այլն):

Մեր աշխատանքում ևս տարբերակ տերմինը գործածվում է նեղ իմաստով: Մասամբ կրկնաբանությունից խուսափելու, մասամբ էլ մշակված տերմինագործածություն շունենալու հետևանքով տարբերակներ կամ տարբերակային ձևեր, զուգաձևեր կամ զուգաձևություններ անվանումները գործածում ենք որպես նույնանիշներ:

Չևաբանական տարբերակներ համարում ենք նույն բառի այն ձևերը, որոնք ունեն ձևով տարբեր (երբեմն ձևական տարբերակման շահիչ նույնպես փոքր է), իմաստով ու գործառութայամբ նույնական քերականական ձևույթներ (հմմտ.՝ զգացման||զգացումի, սյան||սյունի, արյամբ||արյունով, փոստանիշեր||փոստանիշներ, ստորակետեր||ստորակետներ, տեղներդ||տեղերդ և այլն: Սահմանման մեջ նշվող գործառութայան նույնականությունը ընդունում ենք որոշ պայմանականութայամբ, քանի որ բացարձակ հավասարաթեք կամ նույնարժեք տարբերակները փոքր թիվ են կազմում: Աշխատանքում նշվել են և մի քանի այնպիսի հնչյունական տարբերակներ, որոնք իրենց դրսևորումը գտնում են այս կամ այն քերականական կարգում (հմմտ.՝ հարս(ն)-հարսներ||հարսեր, ծունկ(ն)-ծնկներ||ծնկեր, մութ(ն)-մթնում||մթում և այլն):

Աշխատանքում քննության են առնվում ժամանակակից գրական հայերենի ներկա փուլի գրավոր տարբերակի գոյականական զուգաձևությունները³⁹: «Գրավոր տեքստերը հնարավորություն են տալիս հետևելու արտահայտության ձևերի փոփոխություններին և տրամադրում են քնական ու անհրաժեշտ համատեքստեր տարբերակային զուգբերի գործառական-ոճական, համադրական, դիրքային և այլ վերլուծություններ կատարելու համար»⁴⁰: Հիմնական ուշադրությունը կենտրոնացրել ենք գրական լեզվի նորմայի շրջանակներում գործող զուգաձևերի վրա: Փորձել ենք քննել տարբերակման մասնավոր որոշ դեպքեր ևս և լուսաբանել դրանց առաջացման պատճառները (եզակու, կիրակվա, դարվա և այլն):

Աշխատության հիմնական մեթոդը նկարագրականն է, որը ենթադրում է տարբերակների համաժամանակյա վերլուծություն: Լեզվական համակարգի որևէ կողմի համաժամանակյա կտրվածքում համատեղում

³⁹ Առկայացման կարգի զուգահեռ ձևերը դրսևորվում են շարահյուսական մակարդակում և մեր քննության նպատակից դուրս են: Չեն քննվում նաև բացառական, գործիական և ներգոյական հոլովաձևերի որոշիչ հոլով կիրառությունները որպես հնացած և ժամանակակից գրական նորմայից շեղվող ձևեր:

⁴⁰ К. С. Горбачевич. Вариантность слова и языковая норма, с. 6.

են անցյալի ու ներկայի տարրերը (հին և գործող նորմաներ) և ուրվագծվում է զարգացման հեռանկար ենթադրող տարրը (նոր նորմա): Համաժամանակյա նկարագրությունը չի բացառում նաև տարբերակային ձևերի պատմական վերլուծությունը, որը հնարավորություն է տալիս տեսնելու գրական նորմաների պատմականորեն պայմանավորվող փոփոխությունները լեզվի զարգացման հաջորդական փուլերում կամ միևնույն փուլի տարբեր հատվածներում: Փաստական նյութը բերվում է գործառական տարբեր ոճերից, հիմնականում գեղարվեստական գրականության լեզվից, որտեղ համադրվում ու խտացվում են տարբեր ոճերի լեզվատարրեր: Քերականական նորմաների փոփոխությունը ցույց տալու նպատակով հաճախ դիմել ենք և այն գրողների լեզվին, որոնք գործել են «հին և նորի սահմանագծում»՝ XIX դ. վերջին և XX դ. առաջին տասնամյակներում: Անշուշտ, այստեղ նկատի է առնվել և այն հանգամանքը, որ քերականական տարբերակները սոցիալական ազդեցություններին անմիջականորեն չեն ենթարկվում և փոփոխվում են պատմական երկարատև ժամանակի ընթացքում: Տարբերակների իմաստային կամ ոճական յուրահատկությունները ցույց տալու համար բերվում է համատեքստի համապատասխան հատվածը. ծիծ տարբերակները հավասարազոր են կամ ունեն ոչ էական ոճական յուրահատկություններ, մեծ մասամբ նշվում են միայն բառաձևերը (դենոտատիվ կամ համակարգային տարբերակներ):

Որպես տարբերակների գնահատման օժանդակ ու լրացուցիչ սկզբունք օգտագործել ենք և մեր կողմից արված վիճակագրական քննության տվյալները: Լեզվավիճակագրությունը վիճակագրական միջոցներն օգտագործում է քանակական բնութագրերի ուսումնասիրության և խոսքում ու տեքստերում լեզվական երևույթների բաշխումը ցուցադրելու նպատակով: Ընդ որում մասի ուսումնասիրության հիման վրա եղրակացություն է արվում ամբողջի վերաբերյալ⁴¹:

Հոլովական մի շարք զուգաձևեր աշխատանքում քննվում ու վիճակագրորեն ներկայացվում են առաջին անգամ: Ցույց են տրվում այդ զուգաձևերի գործառության ոլորտները, տարածման շափերն ու պատճառները, նրանց զարգացման ու փոփոխության գործընթացները:

Զուգաձևերի վիճակագրական քննությունը հնարավորություն է տալիս հանգելու օբյեկտիվ եզրակացությունների, խուսափելու սուբյեկտիվ գնահատումներից կամ կանխատեսումներից և, որ ավելի կարևոր է, տալիս է մի շարք վիճելի հարցերի վերջնական պատասխանը: «Զուգաձևերի առկայությունը լեզվում առաջ է բերում նորմավորման, զուգաձևերի համապատասխան գեահատության անհրաժեշտություն, և այդ

⁴¹ *Տե՛ս* В. И. Кодохов. Общее языкознание. М., 1974, с. 246.

նպատակով կատարված հատուկ, նպատակադիր ուսումնասիրությունները լեզվի մշակույթի համար ունեն առաջնահերթ նշանակություն: Ցավոք, տարբերակային կամ զուգահեռ ձևերի հետ կապված խոսքի կուլտուրայի խնդիրները մեզ մոտ դեռևս չեն արժանացել պատշաճ ուշադրության»⁴²: Ներկա ուսումնասիրությունը ինչ-որ չափով լրացնում է նըշված այդ բացը:

Աշխատանքում արվել է և գոյականի հոլովման տիպերի վիճակագրական քննություն, որը հնարավորություն է տվել մեզ նախ հայերենի ամբողջ բառամթերքից առանձնացնելու գոյականական բառապաշարը, ապա դասակարգելու այն ըստ հոլովումների քանակական բնութագրերի և ձևական ու իմաստային որոշակի հատկանիշների հիման վրա ներկայացնելու հոլովման յուրահատկություններ ունեցող խմբերը (ի-ով վերջացող, սակայն ի հոլովման պատկանող բառեր, հոլովական տատանումներ ունեցող բառեր, բարդության մեջ վերաիմաստավորվող և ի հոլովման անցնող բառեր և այլն): Այդ բառացանկերը և վիճակագրական տվյալները կարող են օգտակար լինել գոյականի հոլովման հարցերն ուսումնասիրողների համար և օգտագործվել մասնագիտական գրականության մեջ:

Աշխատանքում առաջին անգամ են քննվում նաև միավանկ վերջնաբաղադրիչով փոխանուն ածականների, փոխառյալ բարդությունների, ստացական հոգնակիի զուգաձևերը, նշվում դրանց առաջացման պատճառներն ու զարգացման միտումները:

ՉՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՈՎԻ ԿԱՐԳՈՒՄ

ԸՄԻՉԱՆՈՒՐ ԿԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գոյականի քերականական կարգերում գործառող տարբերակային ձևվերից ամենից ավելի գործունեն ու տարածվածը հոլովական զուգաձևերն են: Որպես լեզվի կառուցվածքային հնարավորություններով պայմանավորվող ձևեր, դրանք պահպանվել են պատմական առավել երկարատև ժամանակի ընթացքում: Հոլովական զուգաձևերը ժամանակակից գրական հայերենին անցել են լեզվի զարգացման նախորդ փուլից՝ կրելով տարբեր կարգի փոփոխություններ: Որոշ զուգահեռ ձևեր պահպանվել են իբրև հնաբանություն (հմմտ.՝ մահու, դարու, հուսո, լուսո, թաքստյան, ժողովրդյան և այլն): մի շարք զուգաձևեր տեղի են տվել ավանդական հոլովումների առջև (հմմտ.՝ օղիի, լոբիի, մարդի, վստահությունով):

⁴² Թ. Վարդույան, Լեզվական տարբերակները և դրանց գնահատումը, «Լրաբեր», հաս. գիտ., 1980, № 7, էջ 38:

դրանց գործածությունը լեզվին տալիս է խոսակցական ոճի երանգավորում. մի շարք զուգաձևերի գործառույթյան շրջանակներն ընդարձակվել են (—ում ածանցով բայանունների ի-ով ձևեր, երբեմնի և հիմքատարրով միավանկ բառերի ի-ով ձևեր և այլն): Որոշ զուգահեռ ձևեր գործառական տեսակետից գրեթե նույն արժեքն են ստացել (անկողնու||անկողնի, աստծու||աստծո):

Հոլովման տատանումները դրսևորվում են առավելապես գոյականի եզակի թվում: Եզակիի հոլովման բազմազանությունը հատուկ է սեռական-տրական հոլովաձևին, որով և որոշվում է գոյականի հոլովման բնույթը: Այս հոլովաձևի եզակիի թեքույթների թիվը ժամանակակից գրական հայերենում հասնում է տասնչորսի¹: Այդ թեքույթներն են՝ ի, ու, աճ, ո, ա, յաճ, ոջ, վա, վաճ, այ/ո, (ը)/ե, ի/ու, ու/ա, ու/վա: Ո, ա, վաճ, ու/վա թեքույթներից յուրաքանչյուրը գործառում է մեկ կամ մի քանի՝ դրանցով բարդված բառերում՝ սիրո, աղջկա, մահվան, անվան. յաճ-ը և (ը)ե-ն հնացած ու ոչ գործուն ձևեր են և գործառում են դարձյալ սահմանափակ թվով բառերում: Հիմնական թեքույթներն են՝ ի, աճ, ոջ, վա, այ/ո, ի/ու, ու/ա: Քանի որ նշված տասնչորս թեքույթն էլ արտահայտում են հոլովական նույն իմաստը, հաճախ հնարավոր է լինում առանձին հոլովումների մեջ մտնող մի շարք գոյականների՝ տարբեր գործոններով (իմաստային, ձևական, ձևաիմաստային և այլն) պայմանավորված և պատմականորեն ավանդված հոլովման բազմազան ձևերը փոխարինել առավել տարածված ու ընդհանրականի ձգտող ձևով, տվյալ դեպքում՝ ի հոլովիչով: Տարբերակայնությունը լեզվում առաջանում է համակարգի թույլ օղակների վերակառուցման անհրաժեշտության պահանջից: Այսպիսով, հոլովական զուգաձևեր են կազմում այլ հոլովումների պատկանող մի շարք բառերի ի-ով ձևերը, որպես հոլովման համակարգում ամենալայն գործառություն ունեցող ձևի տարածման և համակարգի միասնականացման միտումի արտահայտություն: Որպես կանոն տարբերակային այդ ձևերը երկշարք են. հմմտ.՝ ի>ու||ի.—խեցու||խեցիի, ան||ի.—զգացման||զգացումի, ու>ա||ի.—ձյան||ձյունի, ոջ||ի.—տալոջ||տալի, վա||ի.—գիշերվա||գիշերի և այլն: Որոշ բառաձևեր ունեն եռաշարք տարբերակներ. հմմտ.՝ վան||ու||ի.—մահվան||մահու||մահի, ո||ու||ի.—սիրո||սիրու||սերի. ան||վա||ի.—ձմռան||ձմեռվա||ձրմեռի և այլն:

Տարբերակային ձևեր մասամբ առկա են և բացառականում: Բացառականի տարբերակային ձևերը մի շարք դեպքերում և սեռական-տրա-

¹ Տե՛ս Գ. Բ. Զահալյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, 1974, էջ 188:

կանի, և՛ ուղղականի հիմքով կազմվելու հետևանք են (հմմտ.՝ մահից|| մահվանից, օրից||օրվանից, սկեսուրից||սկեսուրչից և այլն): Այսպիսով, բացառականում առկա են առավելապես հիմքային տարբերակներ:

Գործիականում հոլովական տատանումներ ունեն—ում ածանցով բայ-անոճները (ծագմամբ-ծագումով), մասամբ՝ —ուրյուն ածանցով բա-ռերը (ուրախությամբ-ուրախությունով): Գործիականի բ-ով ձևը հատուկ էր հին հայերենի և ներդրական հոլովման պատկանող բառերի հարացույցին. ժամանակակից հայերենում այն —ուրյուն ածանցով բա-ռերի գործիականի միակ ցուցիչն է: Եթե բացառականի հիմքային բոլոր տարբերակներում միշտ պահպանվում է ց հոլովակազմիչը, ապա գոր-ծիականի՝ ուղղականի հիմքից կազմվող տարբերակներում առկա է ով-ը, սեռական-տրականի հիմքից կազմվողներում՝ բ-ն:

Ի, ի>ու հոլովման պատկանող բազմաթիվ բառեր թեք հոլոված-վերում ունեն հնչյունափոխված ու անհնչյունափոխ հիմքերով տարբե-րակներ (հմմտ.՝ բլրի||բլուրի, կամրջի||կամուրջի, հովտի||հովիտի, մոխ-րի||մոխրի, ուղով||ուղիով, հայելում||հայելիում և այլն): Նշված բա-ռաձևերի հիմքերի տարբերությունները թեև ինքնին վերցրած ձևաբա-նական որևէ արժեք չունեն, սակայն շխատանքում քննվում են որպես հոլովի կարգում դրսևորվող հնչյունական զուգաձևություն արտահայտու-թյուններ:

ՋՈՒԳԱԶԵՎԵՐԸ ՍԵՌԱԿԱՆ-ՏՐԱԿԱՆ ՀՈՒՎՈՒՄ

Ինչպես հայտնի է, սեռական-տրականի թեքություններից ամենատարած-վածը ի-ն է: Ի հոլովման պատկանող բառերը կազմում են արդի հայե-րենի գոյականական բառապաշարի 68,5 տոկոսը (էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից» բառաքաղված 66300 գոյականից 44500-ը ի հոլովման պատկանող բառերն են)²: Այդ բառերը ժամանա-կակից գրական հայերենում ձևաբանական տարբերակներ չունեն: Եթե նկատի առնենք և այն, որ ի-ով հոլովվում են բոլոր փոխանունները և բոլոր անունները հոգնակի թվում, ապա պարզ կլինի, թե որքան մեծ է ի-ի քնդգրկումը հոլովման համակարգում: Լեզվի զարգացման բոլոր փու-լերում էլ գործել է ի-ի՝ այլ հոլովումների վրա տարածման միտումը³ և ներկայումս էլ այդ գործընթացը շարունակվում է: Ավելացնենք նաև, որ ի հոլովման են նաև այլ հոլովումների պատկանող առանձին բառե-րի և տարբեր վերջնաբաղադրիչներով բարդությունների՝ իմաստային

² Տե՛ս Ա. Սարգսյան, Գոյականի հոլովման տիպերի վիճակագրական բնութագրերը արդի հայերենում, «Լրաբեր», հաս. գիտ., 1984, № 5:

³ Տե՛ս Գ. Բ. Զաքուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, 1972, էջ 165:

տարբերակումներ ունեցող ձևերը. հմմտ.՝ ամսվա||ամսի, բայց՝ մեղրամսի, օրվա||օրի, բայց՝ աշխօրի, մոռ, բայց՝ ֆաղաֆամայրի, տառամայրի և այլն: Նույնը պետք է ասել և կրոնական ծագման հասարակ գոյականների ու դրանցից առաջացած հատուկ գոյականների հոլովման տարբերությունների մասին. հարուրյան և Հարուրյունի, համբարձման և Համբարձումի, մկրտման և Մկրտումի, գալստյան և Գալուստի. (հմմտ. նաև՝ շահման, Շահումի): Ի-ով են հոլովվում նաև բաղադրյալ աշխարհագրական անունների ու անձնանունների՝ պատմականորեն ավանդված քաղաքացած ձևերից իմաստային տարբերակում ունեցող ձևերը. հմմտ.՝ Սեվանա լիճ, բայց՝ Սեանի շրջան, Վարագա վանք, բայց՝ Վարագի գիրք: Պատմական որոշ անուններ ներկայանում են հին և նոր տարբերակներով. Գողթան գավառ և Գողթնի գավառ, Նոյան տապան և Նոյի տապան և այլն:

Ի-ով են հոլովվում նաև ի-ով վերջացող մի շարք բառեր (ի-ով վերջացող բառերը որպես կանոն ու հոլովման են): Դրանք –տեղի, –կաշի վերջնաբաղադրիչով բառերն են, մի շարք բուսանուններ, փոխառյալ բառեր և որևէ հիմունքով չխմբավորվող այլ բառեր: № 1 աղյուսակում մասնակի կրճատումներով ներկայացնում ենք այդ բառերի ցանկը, որ բառաքաղել ենք է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից»: Անշուշտ, ի-ով վերջացող և ի-ով հոլովվող բառերի քանակը նշված ցանկով չի սահմանափակվում:

Գ. Բ. Զահուկյանը նկատի ունենալով այն, որ ի-ն սեռական-տրականի բոլոր թեքույթներից (հոգնակիի ձևերի հետ միասին նա 18 թեքույթ է նշում) ամենատարածվածն է և շատերին կարող է փոխարինել նրանց հատուկ դիրքերում, թեքույթների ամբողջությունը կոչում է ի-ի խումբ⁴:

Գրական հայերենում սեռական-տրականի զուգահեռ ձևեր չունեն նաև ու/ա (ներքին ա) հոլովման պատկանող –ուրյուն ածանցով բառերը, որոնց թիվն անցնում է 11600-ից և տուն, շուն բառերն ու սրանցով բարդված ձևերը, որոնց ընդհանուր գումարը հասնում է 280-ի (268 բառ բաղադրվում է տուն բառով. շուն բաղադրիչն ունեն 12 բառ): Ա ներքին հոլովման պատկանող բառերը կազմում են գոյական բառապաշարի 18 %-ը: Այսպիսով, ի-ին հաջորդող և երկրորդ կենսունակ ա հոլովումը կազմող բառերի մեծ մասը ևս տարբերակային ձևեր չունի: Սեռական-տրականում տատանումներ չունեն և ու հոլովման պատկանող բառերը (140

⁴ Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 188:

Ի-ով վերջացող և Ի-ով հոլովվող բառեր

-Տեղի վերջնաբազաղրիչով բառեր	Բուսանուններ	Փոխառյալ բառեր
1	2	3
<p>աղբատեղի աղոթատեղի այցատեղի այցետեղի } առևտրատեղի ավանդատեղի աքոտատեղի աքոտրատեղի բանակատեղի բնակատեղի բնատեղի գերեզմանատեղի դիշերատեղի գործատեղի գարանատեղի գրոսատեղի գրուցատեղի</p>	<p>ա յ ծ ա տ եր ե ի ե ր կ ծ ո ս լ ի թ մ բ ի ժ ա յ ու թ մ բ ի ժ ա ն տ ա թ թ զ ի ժ ա ն տ ա խ ն ձ ո թ ի ժ ա ն տ ա ս ա լ ո թ ի լ ա յ ն ա տ եր ե ի լ ա փ ու ի լ ե դ ա կ ի լ ի մ ո ն ի լ ու թ մ ը ղ ի ժ ա յ թ ի կ ա լ ի կ ղ թ ի հ ա ս ա լ ա ո թ ի հ ա ց ա ս ա ղ ի հ ն ղ կ ա ն շ ի հ ու ն ա ս լ ի</p>	<p>ա լ ի բ ի ա ր ա խ շ ի գ ո ղ լ ի - մ ո ղ լ ի ժ յ ու ը ի լ ե գ ի խ ա ր ա կ ի բ ի խ ա ր ս ա լ ի կ ե ս լ ի կ ու լ ի մ ա կ ի մ ո թ ֆ ի մ ու Ֆ ա լ ի յ ա ն կ ի շ ա ս ս ի</p>
<p>թ առատեղի թ աք ս ա տ ա տ ե ղ ի ժ ո ղ ո վ ա տ ե ղ ի իջևանատեղի խոստովանատեղի խոսատեղի խորհրդատեղի</p>	<p>կ առ ա փ ն ա տ ե ղ ի կ ն տր ո ն ա տ ե ղ ի կ ո ծ ա տ ե ղ ի կ ո շ ն ա կ ա տ ե ղ ի կ ո վ ա տ ե ղ ի կ ր ա կ ա տ ե ղ ի կ ու տ ա կ ա տ ե ղ ի հ ա յ ա տ ե ղ ի հ ա ն դ ի ս ա տ ե ղ ի հ ն ձ ա ն ա տ ե ղ ի հ ու շ ա տ ե ղ ի ճ ա հ ճ ա տ ե ղ ի ճ ա ր ա կ ա տ ե ղ ի մ ա կ ա ղ ա տ ե ղ ի ն ս տ ա տ ե ղ ի շ ե ն ա տ ե ղ ի շ ու կ ա յ ա տ ե ղ ի ո ղ ո թ մ ա տ ե ղ ի ո տ ն ա տ ե ղ ի ո ր ս ա տ ե ղ ի ս յ ա հ ա կ ա տ ե ղ ի ս չ ա շ տ ո ն ա տ ե ղ ի ս չ ա հ ն ս տ ա տ ե ղ ի ս չ ա յ մ ա ն ա տ ե ղ ի ս կ գ բ ն ա տ ե ղ ի</p>	<p>շ շ ի շ ե ր բ ե ղ ի ջ ա մ ի ջ ի բ ի ղ ի ջ ու ն ղ լ ի ո ս ր ի } ո ս ր բ ի } ու ե գ բ ի ս ի կ շ ի ս ո թ ա յ ի } ս ու բ ա յ ի } ց ու ն ա մ ի ֆ ե բ մ ի</p> <hr/> <p>Ա յ լ բ առ եր</p> <hr/> <p>ակնդի ա յ ծ ա վ ա յ թ ի անդի անտունի աբջաղի ծ ա դ կ ա ս ա ղ ի կ ի ս ա ր փ ի</p>
<p>Աղգութ յան անվանումներ</p>		<p>ո թ թ ա ճ ճ ի } ո թ թ ն ա ճ ճ ի } ս յ ո թ ս ա կ ա թ ի ս ղ ա ղ ի ս ե թ մ ն ա ճ ճ ի ս կ յ ու ա ղ ի ս ս ղ ի</p>
<p>բ ե լ ու ջ ի (ն ե բ) խ ա լ ղ ի (ն ե բ)</p>		

1	2	3
<p>ծիծաղատեղի կալանատեղի կալատեղի կանգնելատեղի կառանատեղի</p>	<p>կյուրի (ներ) կոմի (ներ) մարի (ներ) չուքչի (ներ) սամի (ներ) սամողի (ներ)</p>	<p>կերակի կրակքաշի հակուրջի հաստաղի հոռի հրարփի ճճի միասայրի նազելի</p>
<p>-կաշի վերջնարագադրելչով բառեր</p>		
<p>այծակաշի } այծեկաշի } գոմշակաշի } գոմշեկաշի } դարսողակաշի թավշակաշի</p>	<p>թղթակաշի կիսակաշի կրկնակաշի կուսակաշի շաղրենակաշի ջորեկաշի</p>	<p>վերիդի տատի տնկի փշամոլի } փշամուլի } փայտաճճի քալաղի քաղցրավենի քուշի</p>

բառ, կազմում է 0,21 %-ը) և այլ հոլովումների առանձին բառերն ու բառախմբերը: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ արդի հայերենի գոյականական բառապաշարի ավելի քան 88 տոկոսը կազմող բառաշերտը հոլովական զուգաձևեր չունի: Սա վկայում է այն մասին, որ ժամանակակից հայերենն ունի հոլովման կուռ ու միասնական համակարգ, որտեղ բացարձակորեն գերիշխում են ընդհանրական կազմութունները: Պետք է նկատի ունենալ և այն, որ մնացած 12 %-ը կազմող գոյականներից 9,9 %-ը բաժին է ընկնում -ում ածանցով բայանուններին, որոնց ի-ով զուգահեռ ձևերը՝ բառաշերտի մասնակի ընդգրկմամբ, գործառում են հիմնականում գեղարվեստական գրականության լեզվում: Այսպիսով, սեռական-տրականի տարբերակային ձևեր ունեն և ներքին հոլովման պատկանող որոշ բառեր ու դրանցով բարդվող ձևերը, ան հոլովման պատկանող բառերը, ու, ոչ, վա, վաև հոլովումների մեջ մտնող առանձին բառերն ու բառախմբերը:

1. Ու>ա||ի. Ա ներքին հոլովման պատկանող բառերից զուգահեռ ձևեր կարող են ունենալ 114-ը: Այս 114 բառից 60-ը կազմում են սյուն բաղադրիչով բառերը. անուն վերջնաբաղադրիչով կա 35, անկյուն վերջնաբաղադրիչով 12 բարդություն. ձյուն և արյուն բառերն ունեն համապատասխանաբար 4 և 3 կազմություն: Գիտական ոճում նշված բառերը գործառում են ավանդականորեն կանոնական համարվող և հոլովիչով (հմմտ. լայն գործառություն ունեցող հետևյալ բառակապակցությունները. անկյան, եռանկյան, քառանկյան և այլն կողմեր, արյան շրջանառություն, արյան ճնշում, սնդիկի սյան բարձրություն, տեղումներ ձյան տեսքով և այլն): Գործառական մյուս ոճերում և հատկապես գեղարվեստական գրականության լեզվում լայնորեն կիրառվում են ի-ով ձևերը: Օրինակներ՝ Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ձյունի շունչը (ԱԲ, Երկ., 1, 1976, էջ 72): Աթոռների սպիտակ երեսները փայլում էին ձյունի մաքրությամբ (ՆԴ, ԵԺ, 1, էջ 68): Ձյունի համատարած սպիտակության մեջ մի քանի քարաբլուրներ երևացին (ԽԴ, ՌԿ, 1979, էջ 339): Իր ցուրտ անկյունի կիսախավարից հերթապահ կինը մեզ նայում էր կծու ատելությամբ (ՀՄ, Մ, էջ 142): Վասակը փուլ է գալիս թախտի անկյունի վրա (ՆՁԷ, էջ 285): Հենվել էին այս ու այն անկյունին (ԴԴ, ԵԺ, 2, 1977, էջ 61): Կարծես սյունի վրայից նայող Անդոն չէր (ԱԲ, Երկ., 1, էջ 249): Սյունի վրա պլպլում էր ձեթի ճրագը (ԳՄ, ԵԺ, 2, էջ 337): Մի երեխա կանաչ ուռենու ճյուղը պարզեց հեռագրասյունին (ՆՁԷ, էջ 238): Բոլորը խոնվեցին տրակտորասյունի առաջ (ՆՁԷ, էջ 95): Մեզ էր նայում բարակ հողասյունին կանգնած մի վիթխարի ժայռ (ԽԴ, ՌԿ, էջ 211): Ի-ով տարածվող ձևերը գործառական տեսակետից էական տարբերակումներ չունեն և-ով ավանդական ձևերից:

Միևնույն հեղինակի մոտ կարելի է հանդիպել երկու ձևերի կիրառու-
թյանն էլ՝ այս կամ այն տարբերակի որոշ նախապատվությամբ: Ստորև
բերվող ղուգահեռ օրինակները վերջված են հեղինակային լեզվից և վե-
րաբերում են միևնույն ստեղծագործությանը:

Ձյան վրա արյունը սառել է (ՎԹ,
ԿՀՀԾՎ, 1966, էջ 101):

Յորենի դեղերը կարող են մնալ
աշնան անձրևների և ձյան տակ
(ՆՁՀ, էջ 578):

Ձյան տակ կորցրեց կացիւնը (ՀՄ,
ՄՎ, 1978, էջ 140):

Քայլեցին սպիտակ ձյունի վրայով
(ՎԹ, ԿՀՀԾՎ, էջ 15):

Նստեցին ձյունի պես փայլուն
սփռոցով ծածկված կլոր ճաշա-
սեղանի շուրջ (ՆՁՀ, էջ 519):

Տղան ձյունի պատնեշ էր բարձ-
րացրել (ՀՄ, ՄՎ, էջ 86):

Անկյուն բառի ղուգահեռ կիրառություններից տարածման միտում ունի
ի-ով ձևը. անկյան ձևը որպես մաթեմատիկական տերմին գործառու
է հատկապես դիտական լեզվում: Հանդիպում են բառի փոխաբերական
նշանակությամբ ղուգահեռ կիրառություններ: Օրինակներ՝ Այսօր գաղ-
թական են, հացի, անկյունի կարոտ (ՍՁ, ԵԺ, 10, 1964, էջ 177): Եվ
աննկատելիորեն սկսվեց օտարացումը, առանձին անկյան անհրաժեշ-
տությունը (Շ. Թաթիկյան, Ի՞նչ գույնի են լինում ճայերը, 1969, էջ
306): Ձուգածե կիրառություն ունի և տեսանկյուն բառը: Օրինակ՝ Այս-
տեղ է, որ Արաքսամանյանը իր հերոսներից մեկի հետ մոտենում է այն
տեսանկյանը, որից Սավոն կերևար իբրև դրամատիկական կերպար
(Արվ., 1960, № 3, էջ 30): Տեսածը ենթարկել իր սեփական տեսանկյու-
նին՝ նշանակում է տեսնել աշխարհը՝ «իր աշխարհի» աչքերով (ՎՓ,
Երկ., 1, էջ 23):

Սյան և սյունի մրցակցող ձևերից տարածման միտում ունի սյունի
ձևը: Պատահական չէ, որ էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական
բառարանում» սյուն բառով բաղադրված 60 բառից 32-ն ունեն ղուգածե
թեքություններ: Պետք է նկատի ունենալ և այն, որ հղում ունեցող բառերը
հաճախ քերականական բնութագրություններ չեն ստանում: Գիտական
ոճում գործառուղ անաբգամբի սյունին գամել, խայտառակության սյու-
նին գամել (ՍՀ, 1948, № 15) դարձվածում կայունացած է սյունի ձևը:
Անուն և արյուն բառերի ի-ով կիրառությունները թեև բավական տա-
րածված են, սակայն ա-ով ավանդական ձևերին հավասարաթեք չեն
և ունեն խոսակցական ոճի երանգավորում: Օրինակներ՝ Անգինը համա-
ձայն չէր նրա հետ, բայց անունի, պատվի հարց էր (ՍՁ, ԵԺ, 1, էջ
472): Արմենի անունին են հարգանք մատուցում (ՀՄ, Մ, էջ 429): Նրա
դեմքն այլալված է, աչքերն արյունի հոսանքից կարմրած (Շիրվ., ԵԺ,
4, 1959, էջ 201): Մազերը կպել էին գետնին ու գլխի մոտ լերդացած

արյունին (ՍԶ, ԵԺ, 2, 1960, էջ 410): Տարածված են նաև անուն-ով բաղադրվող բարդութունների ի-ով ձևերը. հմմտ.՝ բայանվան||բայանունի, դերանվան||դերանունի, մականվան||մականունի: Բերենք ի-ով կիրառությունների բնագրային վկայություններ գործառական տարբեր ոճերից: Որակական ածականները որոշիչ հոդով վերածվում են փոխանունի (ԸՊ, Գոյ., առ. հայ., 1960, էջ 56): Շաբաթ անունը սովորաբար հոլովվում է օր լրացյալի հետ շաբաթ նույնանունի հետ շարժական համար (ԲՆԸ, 1976, № 3, էջ 199—200): Ազգանունի ուսական վերջույթը ցույց է տալիս, որ նրանք բոլորն էլ XVIII դարից են (Գար., 1971, № 8, էջ 14): Կանչողը փորձելիս է եղել հին ծաղրանունի թարմությունը (ՀՄ, Օգ., էջ 12):

Իմաստային տարբերակում ունեցող ձևերը հոլովվում են ի-ով, օրինակ՝ Ապագայում արտադրանքի տեսակների ցանկը նախատեսվում է հասցնել 800 անունի (ՍՄ, 1979, № 1, էջ 72): Հավանաբար իմաստային տարբերակման հիման վրա է գործածվել տունի ձևը հետևյալ օրինակում. ... Բանաստեղծ Շեհզին... շորս հազար ոտանավոր տունի մեջ երգել էր Ֆաթիհի հաղթանակները (Իս., Երկ., 3, էջ 61):

№ 2 աղյուսակում ներկայացվում է ա||ի զուգադրությամբ տարբերակների գործառության պիճակագրական բնութագիրը: Աղյուսակը կազմվել է XX դ. սկզբից մինչև 70-ական թթ. ընկած ժամանակաշրջանի՝ հայ գեղարվեստական արձակի առանձին նմուշների հիման վրա: Ընտրանքի ծավալը 100—120 էջ է:

Եթե նկատի չունենանք առանձին բառերի միաձև կիրառությունները՝ կապված հեղինակների՝ ավանդական կամ տարածվող ձևերին նախապատվություն տալու հակումների հետ, ապա կարելի է եզրակացնել, որ երկու ձևերն էլ հավասարապես գործառում են գեղարվեստական գրականության լիզվում: Ժամանակային գործոնը տվյալ դեպքում էական դեր չի կատարում: Ի-ով ձևերը գործառում էին նաև ժամանակակից հայերենի զարգացման նախորդ հիթափոլում: Օրինակներ՝ Առանց արյունի ազատություն չկա (Բ, ԵԺ, 9, 1958, էջ 273): Այս ձևով ձյունի երես շտեպանք (Բ, ԵԺ, 3, 1955, էջ 385): Մի առավոտ՝ տավարը հանդ տանելու ժամանակ Գուրտունիս գտա արյունի մեջ շաղախված (ՂԱ, Երկ., 1979, էջ 626):

2. Ան||ի. ա) Գրական հայերենում բավական տարածված են անհոլովման պատկանող բառերի ի-ով ձևերը: Անհոլովման պատկանում են -ում ածանցով բայանունները, գրաբարում և հիմքատարր ունեցած մի շարք միավանկ բառեր, գառուն, աշուն, ամառ, ձմեռ, մանուկ բառերը: Ան-ը ժամանակակից հայերենի երրորդ կենսունակ հոլովումն է (ի-ից և ա-ից հետո)՝ շնորհիվ ում ածանցով բայանունների քանակային

կազմի գերակշռության. ան հյուվման պատկանող մոտ 6540 բառից ավելի բան 6380-ը -ում ածանցով բայանուններն են. դա կազմում է գոյականական բառապաշարի 9,9 %-ը: -Ում ածանցով բայանունների գործառութչունը խիստ ընդարձակվել է լեզվի զարգացման ներկա փուլում: Այս կապակցութչամբ Գ. Զահուկյանը գրում է. «Վերջին ժամա-
Ա Ղ Յ Ո Ս Ա Կ № 2

Աղբյուրներ	ա-ով ձևեր					ի-ով ձևեր				
	անկյան	ածական	արյան	ձյան	սյան	անկյանի	անունի	արյանի	ձյանի	սյանի
Ա.Բ. Երկեր, 3, «Մթնա- ձոր» շարքը	—	1	2	—	—	1	1	—	26	1
Ի.ս., Երկեր, 3, Պատմը- վածքներ	—	—	2	—	—	1	1	3	—	—
Ս.Զ., ԵԺ, 1, «Խնձորի այ- դին» շարքը	—	1	—	—	1	—	1	—	2	—
Հ.Բ., ԸՆ, 1, «Սպիտակ գիրք», «Եփրատի կա- մուրջի», «Մայրենի լեզու»	—	—	6	—	—	—	—	—	—	1
Մ.Գ., «Մարութա սարի ամպերը»	—	1	1	1	—	—	1	—	—	—
Հ.Մ., «ՄԵՆՔ ԵՆՔ, մեր սա- րերը»	—	2	1	1	—	—	1	—	—	—
Վ.Պ., «Գեղատուն «ԱՆԻ»	—	—	1	—	—	1	1	—	1	—

նականերս արևելահայ գրական լեզվում լայն տարածում է ստացել անորոշի փոխարեն բուն գոյական անունների գործածութչունը՝ ոչ առանց ուսուցչական աղղիցութչյան: Այս բանը հանգեցնում է վերացական արտահայտութչյան հնարավորութչունների ուժեղացման և, հասկանալի պատճառներով, առանձնապես լայն շափեր է ընդունում գիտական և պաշտոնական-գործարարական ոճերում⁵:

Գիտական ոճը ընդհանուր առմամբ աչքի է ընկնում գրական նորմալի առավել ավանդապահութչյամբ, այս իսկ պատճառով էլ այդ ոճում գերազանցապես պահպանվում են բայանունների սեռական-տրականի կանոնական ան-ով կազմութչունները: Այս ոճում առկա են ի-ի միայն առանձին դրսևորումներ. օրինակներ՝ Այս դեպքում էլ, սակայն, խախտվում է սահմանումի ճշգրտութչունը (էԱ, ԺՀՀԽ, էջ 79): «Վսեմի» ու «գեղեցիկի» վերացական անհասանելիութչունը տեղի է տվել կյանքի

⁵ Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսութչյան հիմունքները, էջ 506, 147

ռեալիստական պատկերումին (ՀնԳՊ, 3, էջ 75): Հայերենի հոդերը քննը-
վում են առանց լրացուցիչ բացատրության ու վերապահումի (ՀԲ, ՀեՄՈՒ,
էջ 288): Արդյոք այդ լեզուն մերձակից է հայերենին, թե երկար շփումի
հետևանքով շատ բառեր հայերենից անցել են այդ լեզվին (ՀԶ, 18/8,
1980): Բայանունների ի-ով կիրառություններ ամենից ավելի հանդի-
պում են գրականագիտական, արվեստագիտական բնույթի գործերում:
Օրինակներ՝ Առանց վարանումի կարելի է ասել, որ այս շարքերը Ռ.
էլիրեկյանի մեծագույն նվաճումն են (ԳԹ, 2/2, 1979): Մենք հետևում
ենք արտիստի յուրաքանչյուր մտքի փայլատակումին (ԳԹ, 5/10, 1979):
Հարությունն իր ստեղծագործական ծաղկումի մեջ է (Գար., 1979, № 4,
էջ 22) և այլն:

Բայանունների հոլովական տատանումների մասին նշվել է հա-
յերենի քերականական կառուցվածքի ուսումնասիրությանը նվիրված մի
շարք աշխատություններում: Այսպես, Ս. Պալասանյանը գրում է, որ
-ում (ումն) վերջավորությամբ բառերը «կարող են անխտիր հոլովիլ և
առաջին կանոնավոր հոլովման վրա. վերջինը ավելի ընտանեկան լեզվի
մեջ. օծման և օծումի, խավարման և խավարումի, խոստամար և խոս-
տումով: Ամեն մարդ ճանաչում է ուսման օգուտը: Որդուս ուսումի
տվի»⁶: Պետք է ենթադրել, որ նա «ընտանեկան» (խոսակցական) լեզվի
ձևերը գրական լեզվում հանձնարարելի չի համարում, քանի որ բա-
յանունները հեղինակային լեզվում հանդես են գալիս միայն ան հո-
լովմամբ:

Մ. Աբեղյանը և հիմքատարրով բառերի հոլովման փոփոխության
մասին գրում է. «Գրաբարի «ն» բունն ունեցող անունները կորցնելով
բնի այս բաղաձայնը՝ մասամբ արդեն շուռ են եկել «Ռ» հոլովման, ինչ-
պես՝ ոտն, մատն, սերմն, մասն և այլն դարձել են՝ ոտ, մատ, սերմ,
մաս. ոտի, մատի, սերմի, մասի. ձևերի, կաթի, ակի, արեգակի և այլն:
... Այս բառերը, մասամբ սեռական-տրականն ունին հին «Ան» կազ-
մությամբ, ինչպես՝ գառան, դռան, եզան, մկան, նռան: Այսպես նաև
ում (հին՝ ումն) ածանցով կազմվածները՝ ուտում-ուսման, խավարում-
խավարման և այլն»⁷: Բայանունների սեռական-տրականը հեղինակի լեզ-
վում, համաձայն իր գնահատման, զուգաձև կազմություն ունի՝ ան-ով
ձևերի գերակշռությամբ. ի-ով ձևերից են՝ հեգումի, ընդհատումի (էջ
9), պայթումի, թուլացումի (էջ 92), շրջումի (էջ 98), առեմանումի (էջ
105), տարբերակումի (էջ 167), լրացումի (էջ 204) և այլն:

Հ. Աճառյանը նշում է բայանունների հոլովման առանձնահատկու-

6 Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Քիֆլիս, 1906, էջ 109—110:

7 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 345:

թյունները ինչպես արեւելահայ, այնպես էլ արեւմտահայ գրական տարբերակներում. «Ում հանգող գոյականները սեռականում լինում են սըղմամբ -ման. ինչ. խավարման, շարժման, համբարձման, քաղման, կործանման և այլն: Այս ձևերը արեւմտահայոց մեջ ալիելի սովորական են, քան առաջին հոլովման համաձայն՝ խավարումի, շարժումի, համբարձումի, քաղումի, կործանումի և այլն: Հակառակն է արեւելահայ գրականում, ուր ալիելի սովորական է -ումի, քան -ման ձևը (շարժումի, քան շարժման)»⁸:

«Ժամանակակից հայոց լեզու» աշխատության երկրորդ հատորում նշվում է շատ բայանունների ի հոլովման ենթարկվելու միտումի մասին և եզրակացվում է, որ «գրանց համար առայժմ առավել օրինաչափականը ան հոլովումն է»⁹:

է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ի հոլովման պատկանող բառեր են համարվում աչքաբարբում, ապրում, զարբնում, ժամանցում, խաղախնայում, խարխափում, խմբում, խնդում, խնդում, խնկում, ծաղկածլում, միտում, ներապրում, սիրահատում, վերջնօծում, տարացուցում, տեղում բայանունները: Այսպիսով, բայանունների հոլովական տատանումների մասին նշել են գոյականների հոլովման հարցերը քննող շատ քերականագետներ: Պարզելու համար, թե ինչ հարաբերակցությամբ են գործառում ան-ով և ի-ով ձևերը, կատարել ենք վիճակագրական քննություն:

Ինչպես արդեն նշվեց, բայանունները գործառում են հիմնականում գիտական և հրապարակախոսական ոճերում, որտեղ դրանց ի-ով ձևերը սակավադեպ են: Իսկ ինչպիսի՞ն է նրանց գործառությունը գեղարվեստական գրականության լեզվում: Գեղարվեստական գրականության լեզվաոճական առանձնահատկությունների պահանջով ու թելադրմամբ (ոճերի ու ձևերի ընտրություն աղատություն, ոճական անմիատարրություն, արտահայտչականություն, վանկաքանակի, հանդի, բարեհնչյունություն, տաղաչափական այլ կանոնների սլահպանման անհրաժեշտություն և այլն) գրականության լեզվում, հատկապես շափածո խոսքում, ի-ով ձևերի գործառություն սահմաններն ընդարձակվում են: № 3 աղյուսակում տրվում է գրական մի շարք երկերում գործածված բայանունների սեռական-տրականի զուգահեռ ձևերի վիճակագրությունը: Այդ զուգաձևերի զարգացման ընթացքը դարասկզբից մինչև մեր օրերը ներկայացնելու նպատակով աղյուսակը կազմել ենք ըստ հեղինակների ժամանակագրական հաջորդականության:

⁸ Է. Աճառյան, Կիսկատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 700:

⁹ Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնայան, Է. Ա. Օհանյան, նշված աշխ., էջ 93:

Աղբյուրներ	աճ-ով ձևեր	ի-ով ձևեր
Ալ. Երվանդազի, Երկերի ժողովածու, 4, 1959	13	—
Նար-Պոս, Երկերի ժողովածու, 3 («Մահը»), 1955	24	1
Ավ. Իսահակյան, Երկեր, 3, 1959	23	9
Ե. Չարենց, Երկերի ժողովածու, 5, 1966	28	9
Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, 2, 1977	18	1
Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, 10, 1964	15	10
Ա. Բակունց, Երկեր, 1, 1976	13	4
Ն. Զարյան, Հացավան, 1955	64	2
Գ. Մամաթի, Երկերի ժողովածու, 2, 1967	28	3
Վ. Թոթովենց, Կյանքը հին հոռմեական ճանապարհի վրա, 1954	7	3
Վ. Անանյան, Հին վրանի փոքրիկ բնակիչը, 1978	9	5
Ս. Կապուտիկյան, Խճանկար հոգու և քարտեզի գույներին, 1976	78	51
Հ. Մաթևոսյան, Մառերը, 1978	30	2
Ընդամենը՝	350	100

Ի՞նչ հետևություններ կարելի է անել աղյուսակից. ա) գեղարվեստական արձակում ևս գերազանցում են բայանունների աճ-ով ընդհանրական կազմութիւնները, բ) ի-ով ձևեր տարբեր շափերով առկա են գրեթե բոլոր երկերում, գ) ի-ով ձևերի գործածման հակում նկատվում է բոլոր բանաստեղծների¹⁰ և որոշ արձակագիրների ստեղծագործութիւններում, դ) նկատվում է նաև զուգաձևերի նման հարաբերակցութիւն դարասկզբում և ներկա փուլում ստեղծագործող գրողների լեզվում: Դա բացատրվում է առհասարակ քերականական զուգաձևութիւն դանդաղ փոփոխութիւնը, քանի որ լեզվի կառուցվածքի կատա-

¹⁰ Բայանունների ի-ով ձևերի զգալի կիրառութիւն կա Հ. Թումանյանի հոգվածներում. մշակումին (ՀԹ, ԵԺ, 4, 1951, էջ 312), բոճկումի (էջ 318), հայաչնչումի (320), որոշումին, օտարացումի (344), ճնշումի (365), կռչումին (398), իրաբանցումի (320) և այլն: Թումանյանի բանաստեղծական խոսքին բայանուն գործածութիւնը բնորոշ է:

քիլագործման ու միասնականացման միտումին հակադրվում է ավանդական ու կանոնական համարվող ձևերի պահպանման պահանջը: Ի-ով ձևերը տարածում ունեն նաև գեղարվեստական հուշագրության լեզվում (հմմտ.՝ Զորյան, Կապուտիկյան): Բայանունների ի-ով ձևերն ազատորեն գործածվում են չափածոյում: Ի-ով բառաձևերը մեկ ձայնավորով, հետևաբար և մեկ վանկով ավելի են ան-ով ձևերից ու ավելի բարեհունչ են և ան-ով սովորական, տարածված ու շեղոթ ձևերից տարբերվում են իրենց ձևի ինքնատիպությամբ, ուստի և անհրաժեշտության դեպքում փոխարինում են նրանց: Օրինակներ՝

Խենթ հուզումի անուշ խոսքեր,
Պաղ մարդոցից խորը պահված,
Անջատման պես տխուր խոսքեր,
Հոգուս լույսեր մթնշաղված ... (ՎՏ, Երկ., 1956, էջ 11):
Մերթ գինեխեղդ հարսանքատուն,
մերթ քաղումի թափոր,
Մերթ մոր կուրծք ես մանկան շրթին
մերթ անյունի սափոր (ՀՇ, ՔԶ, 2, 1964, էջ 236):
Նա պարզել է ձեռքը անշեղ,
Տալիս է զարթնումի նշան (ԵԶ, ԵԺ, 3, 1964, էջ 33):

Ձևերի նման ընտրություն է արվել առաջին քառատողում վանկաքանակի պահպանման, երկրորդում՝ հանգավորման նպատակով. երրորդ օրինակում ընտրվել է բարեհունչ ձևը:

Նկատենք, որ որոշ բանաստեղծների բայանունների սեռական-տրականի զուգահեռ ձևերից նախապատվությունը տալիս են ի-ով ձևերին: Այսպես, Վ. Տերյանի բանաստեղծություններում (Երկեր, 1956 թ.) ի-ով ձևերը գործածվել են 15, ան-ով ձևերը՝ 5 անգամ. հմմտ. հուզումի (էջ 11), արբեցումի (12), մոռացումի (14), անկումիս (31), հիացումի (37), սուկումի (46), քաղումի (48, 70), հանդիպումի (62, 196), հատուցումի (105), բաժանումի (107), քափառումի, մոլորումիս (180), բեկումիդ (228) և՛ անջատման (11), մոռացման (65), միացման (100), հիացման (135), հուզման (346): Կարելի է վստահորեն ասել, որ չափածոյում բայանունների ի-ով ձևերին առաջին լայն քաղաքացիություն տվողը մեզանում Վ. Տերյանն է: Ի-ով ձևերը գերազանցում են նաև Ե. Չարենցի պոեզիայում. 19 բայանուն 31 անգամ գործածվել է ի-ով, 12 բայանուն 23 անգամ՝ ան-ով (տե՛ս Ե. Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, 1984):

«Արդի հայերենի բացատրական բառարանն» ունի նորմավորող բընույթ, այդ իսկ պատճառով էլ բայանուններից զուգաձև հղումման նշում

են ստացել միայն առում, խնկարկում, խոստում, ծալում, կապտում¹, կապտում², կառուցում բառերը: Իրականում զուգաձև հոլովում ստացող բայանունների թիվը շատ ավելին է: Ի-ով ավելի հաճախ հոլովվում են գրքային, քիչ գործածվող կամ նորակերտ այն բայանունները, որոնց ան-ով հնչյունափոխված կազմությունները բաղաձայնների կուտակման հետևանքով անբարեհունչ են, երբեմն էլ դրանցում բառի սկզբնաձևը հըստակ չի գիտակցվում. հմմտ.՝ արյունման և արյունումի, զարբնման և զարբնումի, նմլման և նմլումի, սավառնման և սավառնումի, բրբուման և բրբումի, մեկնման և մեկնումի, հսկման և հսկումի, զմայլման և զմայլումի, պղպշման և պղպշումի, զսպման և զսպումի, թռչնման և թռչնումի, կապտման և կապտումի, կայծկլտման և կայծկլտումի, կանգնման և կանգնումի, պաշտման և պաշտումի, սրտմտման և սրտմտումի, վրձնման և վրձնումի, ֆամման և ֆամումի¹¹ և այլն: Գրական տարբեր ոճերում ի-ով հանդես են գալիս ամենից ավելի մտածական, հուզազգացական և հարակից նշանակության բառերը. դրանցից են՝ հարցում, հուզում, ըմբռնում, դիտում, մտածում, իրարացում, ընդվզում, լքում, սպասում, զգացում, նվիրում, զմայլում, հիացում, պոռթկում, խոկում և այլն:

Որոշ բայանունների ի-ով հոլովումը թեև դրվում է իմաստային տարբերակման անհրաժեշտութայամբ. հմմտ. անցման տարիք և անցումի լուսակիր, անձնագրի գրանցման կետ և «20-րդ դարի հայ բանաստեղծի տողերում կա արձագանքը պատմահայր Խորենացու անմահ գրանցումի» (ՍԿ, ԽՀՔԳ, էջ 191): «Ժամանակի հոլովումի մեջ ամեն ինչ փոխվել է, քանդվել» (ԶԳ, Ասք Նգա, էջ 101) և այլն: Այսպիսով, գեղարվեստական գրականութայան լեզվում առկա են բայանունների ի-ով ձևերի զգալի կիրառություններ, որոնք ունեն որոշ ոճական լուրահատկություններ: Ի-ով ձևերը նույնպես կանոնական են, քանի որ գործառում են գրական նորմայի շրջանակներում և ի-ի տարածման միտումի արտահայտություններ են, սակայն ունեն գործառութայան ավելի նեղ ոլորտ և այս իմաստով էլ ան-ով ընդհանրական ձևերին հավասարաթեք չեն:

բ) Ան հոլովման են պատկանում նաև հնում և հիմքատարր ունեցած միավանկ բեռ, բուռ, գառ, դուռ, եզ, թռռ, լեռ, ծոռ, ծունկ, ձուկ, մուկ, նուռ բառերը, տարվա եղանակների անվանումները՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ և մառուկ բառը: Նշված բառերի ու դրանցով բարդված ձև-

11 Որոշ բայանունների սեռական-տրականի ձևերը համանուններ են կազմում ման-ով ածանցական ձևերի հետ. հմմտ. եռման ջուր (եռացող ջուր) և եռման կետ (եռալու կետ), ելման գետ (ելած գետ) և ելման դրություն (ելնելու դրություն) և այլն:

վերի թիվը Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» հասնում է 155-ի: Դրանցից ավելի քան 120-ը ժամանակակից հայերենում ի-ով զուգաձևեր չունեն. դրանք ձուկ (170), մուկ (26), դուռ (25) բառերով բարդվող ձևերն են: Տատանումներ ունի մնացած բառերի մի մասը. հմմտ. բեռ-եզնաբեռ, հակաբեռ, նավաբեռ, շալակաբեռ, ուղեբեռ, ուսաբեռ. մանուկ-մայրումանուկ, տղամանուկ. լեռ-ժայռալեռ, նախալեռ. գարուն-պառավագարուն. թոռ-աղջկաթոռ. բուռ, եգ, գառ, ծոռ, ծունկ, կուռ, նուռ, փուռ, աշուն. ձմեռ-երկարաձմեռ, ծանրաձմեռ, ձյուն-ձրվեռ: Սեռական-տրականի զուգաձև կազմութուն կարող են ունենալ և նմանատիպ այն բառերը, որոնք բառարանում ստացել են միայն ի նշումը. դրանք են՝ էշաբեռ-իշաբեռ, ուղտաբեռ, ծովեգ, սառցալեռ, կիսածունկ, հրաշամանուկ, նորամանուկ, փեսամանուկ, օձամանուկ: Ինչպիսի՞ գնահատութուն է տվել հայ քերականագիտութունը նշված խմբի բառերի հոլովման տատանումներին: Ս. Պալասանյանը գտնում է, որ դրանց ի-ով ձևերն ավելի հատուկ են ընտանեկան (իմա՝ խոսակցական — Ա. Ս.) լեզվին: Որպես օրինակ նա բերում է փռան հաց և փռնի հաց, գառան միս և գառնի միս կազմութունները¹²: Մ. Արեղյանը առհասարակ ի հոլովման շեղարկվող գոյականների հոլովումը ժամանակակից հայերենի համար դիտում է որպես շեղում: Նա գտնում է, որ երբեմնի և բունն ունեցող այս անունները, կորցնելով բնի այդ բաղաձայնը, մասամբ անցել են ի հոլովման, մասամբ էլ պահպանում են սեռ.-տր.-ի հին անով կազմութունը, ինչպես՝ գառան, դռան, եզան, մկան, նռան¹³: Հ. Աճառյանը այդ բառերի հիմնական հոլովումը համարում է ան-ը, սակայն գտնում է, որ որոշ բառեր կարող են հոլովվել և ի-ով. թվարկված բառերի մեջ և հիմքատարրով միավանկ բառերից են՝ նուրի, ծունկի¹⁴:

Նշված խմբի բառերի սեռական-տրականի հոլովման տատանումները միանշանակ չեն: Ինչպես արդեն նշեցինք, 155 բառից ավելի քան 120-ը կազմում են ձուկ, մուկ, դուռ բառերով բարդութունները, որոնք հոլովվում են ավանդական ան հոլովմամբ: Դրանց ի-ով ձևերը (հմմտ.՝ ձուկի, մուկի) կանոնական են արևմտահայ գրական լեզվում. ժամանակակից արևելահայ գրական լեզվում այդ ձևերը կանոնական չեն: Հանդիպող որոշ կիրառութունները վերաբերում են կամ նախորդ ենթափուլի գրական լեզվին կամ ժամանակակից գրական լեզվի խոսակցական տարբերակին: Օրինակներ՝ Այդ գերանը մի վիթխարի կետ ձուկի նմա-

12 Տե՛ս Ս. Պալասանյան, նշված աշխ., էջ 109:

13 Տե՛ս Մ. Արեղյան, նշված աշխ., էջ 345:

14 Հ. Աճառյան, նշված աշխ., էջ 700:

նությամբ տարածված էր նրա առջև (Ր, ԵԺ, Հ. 7, էջ 219): ...Սառայում էր հայտնի հարուստ Սափարյանի ձկն առևտրական գործում (ՎՏ, Երկ., 1956, էջ 463): ...Կաթը տանեմ կատվին տամ, կատուն մոռնիկն շղիպ- շի ... (ՂԱ, Երկեր, 1979, էջ 649): Փռեցին նոր, ծաղկազարդ մոմլաթը, վրան շարեցին ասեսներով միս, երշիկ, թթու կաղամբ, ձկն պահածո ... (ԳԹ, 24/6, 1983): Ան||ի զուգադրությամբ հանդես եկող բառաձևերը գործառուպես հավասարաթեք չեն. ծնկան||ծնկի, բռան||բռի, փռան|| փռի, շրթան||շրթի-շուրթի զուգահեռ ձևերից առաջին եզրի բառաձևերը ներկա փուլի գրական կանոնի տեսակետից հնացող կամ արդեն հնա- ցած են: Օրինակներ՝ Երդիկից լուսնի կաթնագույն շողքն էր ընկել Շա- հանի բռան արծաթենրի վրա (ԱՔ, Երկ., 1, էջ 421): Վարսիկը սկսեց ցուցամատի եղունգով փորփրել ծնկան վրա ընկած շրջաղճատի ծա- ղիկը (ԴԴ, ԵԺ, 3, 1977, էջ 381): Մարթան ... նստած նոր վառած թոնրի շրթան մոտ, շերտիք ձեռքին, կերակուրներին էր նայում (Ր, ԵԺ, 1, 1955, էջ 513): Նրանց կերածը փռան սև հաց էր (ՆԴ, ԵԺ, 1, էջ 73): Եզներն իրենք են իրենց ոտով գնում և վզները լծան տակ կոխում (ՆԴ, ԵԺ, 3, էջ 31): Հետևյալ օրինակներում ընդգծված բառաձևերը բարբա- րային են և ծառայում են խոսքի ոճավորման նպատակին. Դա եզնա- լծան ... հեծանի տնքոցն է (ՀՄ, ՕԳ, էջ 204): ... Թզան մուրաբա կար (ՀՄ, ՕԳ, էջ 200): Բարբառային-խոսակցական են նաև որոշ բազմամասնի բառերի ան-ով ձևերը: Օրինակ՝ Մուշեղի թիկունքը տաքացնում էր ... կտրանը փոված թթենու ճյուղը (ԳԹ, 17/2, 1978): Քնեցին կտրանը (ԴԴ, ԵԺ, 3, էջ 70), բռնրան և այլն:

Բեռ, գառ, եզ, բռ, ծոռ բառերի սեռական-տրականի զուգահեռ ձև- վերը գործառու են գրական նորմայի շրջանակներում: Օրինակներ՝

Տղան կանգնած էր բեռան կող- քին (ՀՄ, ՄՎ, էջ 158):
Գառան բուրդի պես մազեր ուներ գլխին (ԱՔ, Երկ., 1, 40):
Սպիտակ եզան հետ մտանք բակը (ԱՔ, Երկ., 1, էջ 195):
... Սայլին նայելիս տեսնում էր կնոջը՝ բռանը գրկած (ԱՔ, Երկ., 1, էջ 167):
Քեռի Թորոսը հիշեց իր ծոռանը (ՄԳ, ՄՍԱ, էջ 43):

Ուզում էր դուրս պրծնել այդ բե- ուրի տակից (ԴԴ, ԵԺ, 2, էջ 203):
Մենք գառի ոսկորները նետում էինք նրան (Իս., Երկ., 3, էջ 138):
Ամեն մեկը իր հերթին ջուր է հրամցնում եզին (ՄԳ, ՄՍԱ, էջ 92):
Աթո ամին փաթաթվել էր բոռին (Իս., Երկ., 3, էջ 249):
Քեռի Թորոսին Երևան տարան, որպեսզի իր անունը ընծայի ծոռին (ՄԳ, ՄՍԱ, էջ 29):

Բերված փաստերը վկայում են այն մասին, որ հիշյալ բառերի հոլովման նորման դեռևս կայուն չէ: Ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում և Հ. Բարսեղյանի «Ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանում» այս խմբի բառերի հոլովումներին տրվել են գրեթե միանման բնութագրումներ՝ նշելով և՛ աև-ը, և՛ ի-ն. հմմտ.՝

	ՍՄ, ՀԲԲ	ԷԱ, ԱՀԲԲ	ԺՀԲԲ	ՀԲ, ՈՒՈՒՏԲ
բեռ	ան	ի կամ ա	ի և ա	ի, ա
բուռ	ի	ի կամ ա	ի և ա	ի, ա
դառ	ո՞ր կամ ուան	ան	ա և ի	ի, ա
կղ	ան	ա և ի	ա և ի	ան, ի
թոռ	ուան կամ ուի	ան	ի	ի, ա
ծոռ	—	ի կամ ա	ի	—
ծունկ	(ծնկան) ծնկի	ի	ան, ի	ան, ի

Նկատենք, սակայն, որ նշված բառերի ի-ով ձևերն ավելի հատուկ են սեռական-տրականի խնդրային կամ պարագայական կիրառություններին: Օրինակներ՝ «Պատասխանեց Արտաքին Գործոցն աստուծո զառին վայել խոնարհություն (ԳՄ, ԵԺ, 2, էջ 397): Լուծ քաշելու ժամանակ է, որ եզին առաջնություն են տալիս (ՀԶ, 16/9 1981, էջ 4): Հիմա հոր ազգանունը անցնում է որդուն, իսկ հետո՝ բռնին, ծոռին (Գար., 1981, № 3, էջ 52): Նայեց ծերուկին և կոշկի ծայրով լուռ զարկեց նրա ծնկին (ԴԴ, ԵԺ, 3, էջ 240): Ես եղել եմ Տեր-Զորում, Կարսում, նայել եմ Մուսա լեռին (ՎՊ, ԴԱ, 1973, էջ 142):

Ա-ով հոդավոր տարբերակները մեկ վանկով ավելի են և չեն համապատասխանում լեզվի խնայողության սկզբունքին. հմմտ՝ ...Բռանս մեջ կհավաքեմ (ՆԴ, ԵԺ, 3, էջ 85): Տես բռանդ գլուխն ինչ է եկել (ՀԹ, ԵԺ, 3, 1949, էջ 198): Տղան ... սեղմվում էր բռանը (ՀՄ, ՄՎ, էջ 158): Վահանը արմունկով ծնկանը հենված ծխում էր (ՆԴ, ԵԺ, 3, էջ 94): Նշված խմբի որոշ բառեր կայուն բառակապակցություններում գործածվում են միայն ա-ով. եռան գինի, զառան դմակ, եզան լեզու և այլն: Մունկի գալ, ծունկի բերել հարադրավոր դարձվածներում սովորական է ի-ով ձևը: Մեկան գալ ձևը հնացած է. օր.՝ ժողովուրդն ու զորքը ծնկան եկան (Մուր., ԳՄ, 1939, էջ 335):

Գրական լեզվում լայն տարածում ունի և մթան մեջ||մութի, մթի մեջ մրցակցող տարբերակների գործառությունը. օրինակներ՝ Իր հին շվին ... փշում էր անկողնի մթան մեջ իրենց ներսի ձայներին ականջ պահողների համար (ՀՄ, ՄՎ, էջ 204): Ոտքը մթի մեջ դիպավ իր սահնակին (ՀՄ, ՄՎ, էջ 158): Հմմտ. նաև՝ մթան մեջ||մթի մեջ (ԴԴ, ԵԺ, 2, էջ

№ 4 աղյուսակում ներկայացվում է և հիմքատարրը կորցրած միավանկ բառերի սեռական-տրականի տարբերակային ձևերի գործառությունների վիճակագրական պատկերը: Աղյուսակը կազմվել է XX դարողների գեղարվեստական արձակի նմուշներից: Բացառվել են Ի-ով հանդես չեկող ձևերը: Նկատի չեն առնվել հնչյունական տարբերակները: Ընտրանքի ծավալը 100—120 էջ է:

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ գեղարվեստական գրականության լեզվում գերակշռում են երբեմնի և հիմքատարրով բառերի անով կազմությունները: Առանձին գրողների մոտ նկատվում է որոշ բառերի կամ ավանդական կամ տարածվող ձևին որոշակիորեն նախապատվություն տալու հակում:

Գրական նորմայի շրջանակներում է գործում նաև մանուկի ձևը. օրինակներ՝ Մի ուղևոր տեսավ լացող մանուկին ... (Իս., Երկ., 3, էջ 55): Բողոքին կանգնեց մանուկի առջև (էջ 114): Եվ հենց մարագի մոտ, փողոցում, կնքում է մանուկին (ԱԲ, Երկ., 1, 1964, էջ 639) և այլն: Այս ձևերը գործառում էին նաև նախորդ ենթաշրջանի գրական լեզվում. օրինակներ՝ ինչով կարող ես գոհացնել հաց խնդրող մանուկին (Մուր., Եժ, 1, 1951, էջ 484): Մամիկոնյան իշխանը հրամայեց կանչել ... Արտավազդ մանուկին (Բ, Ս, էջ 449): Ընդհանրականը մանկան ավանդական ձևի գործառությունն է:

գ) Տարվա եղանակներից ամառ, ձմեռ անվանումները հանդես են գալիս անվավա զուգադրությամբ: Ի-ով ձևերը հազվագեղ են և հատուկ են առավելապես բանաստեղծական ոճավորված խոսքին: Օրինակներ՝ Իսկ ե՞րբ եք մտադիր դառնալու այդ դարնանային երկրից դեպի մեր գառունի երկիրը (ՎՏ, Երկ., 1956, էջ 643): Դա նվիրական Հիմալայի գրկումն էր, հավերժական գառունի պարտեղում (Իս., Երկ., 3, էջ 337): Եկավ պայքարը, ցուրտը ցրեց- Եվ ձմեռի տեղ-տեսանք գարուն (ԵԶ, Եժ, 3, 1964, էջ 338): Դժվար չէ նկատել, որ բերված օրինակներում ընդգծված բառաձևերն ունեն փոխաբերական գործածություն: Ի-ով կիրառություններ նկատվել են նաև XIX դարի երկրորդ կեսի գրական լեզվում. օր.՝ Անձյուն, դառնաշունչ ձմեռին հաջորդեց անանձրև գարուն (Բ, Եժ, 8, էջ 269—270): Տարվա եղանակների վա-ով հոլովումը առաջացել է ավելի ուշ՝ դրանցում առկա ժամանակային իմաստի ընդգծման պահանջով:

Գրական լեզվում ամռան||ամառվա, ձմռան||ձմեռվա տարբերակները զուգահեռաբար գործածվում են, երբ հանդես են գալիս իբրև բնու-

թյան երևույթներ մատնանշող կամ դրանց առնչվող անվանումների վերագրերներ: Օրինակներ՝

Ամռան իրիկուն էր

(ԱՔ, Երկ., 1, էջ 55):

Ամռան շոգին ... կպառկի ծառի
ոտքի տակ (ԱՔ, Երկ., 1, էջ 88):

Ձմռան գիշերից մի քիչ դեռ կար
(ԱՔ, Երկ., 1, էջ 147—148):

Այդ տարվա ամռան արձակուրդը
անցկացրի հին Բյուզանդիոնի...
պատմական մի անկյունում
(ՎՓ, Երկ., 1, էջ 66):

Ձմռան սկիզբն էր... (ԱՔ, Երկ.,
1, էջ 147):

Ամառվա տաք երեկո էր

(ՎՓ, Երկ., 1, էջ 202):

Ամառվա շոգին կանաչը խանձ-
վում է (ԱՔ, Երկ., 1, էջ 65):

Ամառվա լուսնյակ գիշերները մեր
դռան գերանների վրա նստում
էինք ... (ՀԹ, ԵԺ, հ. 3, 1949,
էջ 117):

Ամառվա արձակուրդի օրեր էին
(ՎՓ, Երկ., 1, էջ 79):

Մինչև ձմեռվա սեզոնի սկիզբն
աղատ էի ... (ՎՓ, Երկ., 1, էջ
198):

Ամռան||ամառվա, ձմռան||ձմեռվա տարբերակներում համատեղում են լեզվի զարգացման տարբեր շրջաններում առաջացած օրինաչափությունները: Երկու ձևերն էլ գրական ու կանոնական են, վա-ով տարբերակում ժամանակային իմաստը կարծեք ավելի է ընդգծվում: Սակայն, երբ տարվա եղանակների անվանումներին առնչվում են ոչ թե դրանց անմիջաբար կապվող, այլ հատկացվող-հանգամանքներ, ժամանականշտությունը խիստ ընդգծվում է, և այդ դեպքում գործառնելի է դառնում միայն վա-ով ձևը: Օրինակներ՝ Դրան կոչում էին սրահ և ծառայում էր որպես ամառվա բնակարան (Բ, ԵԺ, 3, 1955, էջ 99): Ամառվա սպիտակ ժիլետը փայլում էր ձյունի մաքրովթյամբ (ՆԴ, ԵԺ, 2, 1955, էջ 461): Բոլորը հագել էին ամառվա համազգեստ (ՎՓ, Երկ., 1, էջ 80): Երեխայի մոր համար ձմեռվա մի փափուկ շալ առան ... (ՍԶ, ԵԺ, 1, էջ 311):

Յ/ի> ՈՒ||Իի այսպիսի տարբերակներ ունեն ու հոլովման պատկանող բառերը: Ու հոլովման են ենթարկվում ի-ով վերջացող բառերը և մառդ, ամուսին, անկողին, աստված բառերն ու սրանցով բարդվող ձևվերը: Դրանց թիվը է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» անցնում է 1840-ից. իրականում ու հոլովման պատկանող բառերի քանակը նշվածից շատ ավելին է: Ինչպիսի՞ մեկնարանություններ է տվել հայերենի քերականագիտությունը նշված խմբի բառերի հոլովման տատանումներին: Ս. Պալասանյանը ի-ով վերջացող որոշ հասարակ գոյականների ի-ով հոլովմանը տալիս է հետևյալ գնահատությունը. «Կան մի քանի ի վերջացած բազմաթվանկ բառեր, որոնք ի պահում են և հոլովում են առաջին հոլովման վրա՝ այսպես՝ հայելիի, ածե-

լիով, բանալիից և այլն, որ եթե կանոնավոր հոլովինք, կարող են շփոթվել անձի և բանալի բայերի հետ: Այսպես հոլովում են հայ և մանավանդ օտարազգի հատուկ անունները, Անիի հաղար ու մեկ եկեղեցին. Գարիբալդիի հայրենասիրությունը»¹⁵: Մոտավորապես նման կարծիք է հայտնում է Մ. Արեղյանը. «Կան «ի» վերջացած բառեր, որոնք «ի» հոլովման ձևով են հոլովվում՝ «սիրելիի» և ոչ «սիրելու», որ «սիրել» բառի ձևն է: Երբեմն նաև՝ հայելիի, գվարճալիի, Անիի, այլև օտարազգի անունները՝ Գարիբալդիի, որոնք հոլովվում են նաև՝ հայելու, Անու, Գարիբալդու»¹⁶: Աճառյանը արևմտահայերենի ազդեցությամբ ու հոլովման է համարում միավանկ մարդ, հեղ, ծով, տղա (սեռ. տղու), շահ, ժամ, դար, հայ, գլուխ, էջ (իշու կամ էշու) բառերը, ավելացնելով նաև, որ սրանք ևս հետդհետե անցնում են ի հոլովման. «Արևելյան գրականում արդեն սովորական են դարձած ծովի, տղայի (տղի), շահի, ժամի, դարի, հայի, գլխի, էջի (իշի), նույնիսկ մարդի ձևերը. կարելի է դեռ ասել մարդու, շահու, բայց ո՛չ ծովու, հայու և այլն... Արևելյան հայերենը նույն հոլովման է ենթարկում նաև ի վերջացող բաղմավանի բառերը. ինչ. գինի-գինու, այգի-այգու, այգուց. գարի-գարու, գարուց. կեկեղեցի-կեկեղեցու, կեկեղեցուց, նույնիսկ հատուկ անունները. ինչ. Բաֆֆի-Բաֆֆու, Բաֆֆուց, Շամախի-Շամախու, Շամախուց և այլն: Բայց այս վերջին կետումն էլ կան տատանումներ, և հատուկ անունները սկսել են հոլովվել նաև առաջին հոլովման ձևով. ինչ. Ալի-Ալու, Ալիի, բց. Ալուց, Ալիից, նույնիսկ Բաֆֆի-Բաֆֆիի, Բաֆֆիից և այլն: Սովետ. Այստ., 1945 թ., ապր. 29. էջ 2, սյունակ 5-րդ, կարդում ենք. «Զերբակալի են Մուստոլինիին, Պավլոյինիին, Ֆարինաչչիին, Բուֆֆարինիին և Գրացիինիին»¹⁷: Գիտնականի այս մեջբերումից կարելի է ենթադրել, որ օտարազգի հատուկ անունների ի-ով հոլովումը 20-րդ դ. առաջին տասնամյակներում դեռևս լայն տարածում չունի: Օտարազգի հատուկ անունների զուգաձև հոլովման մասին նշում է նաև Գ. Սևակը: «Ուղղականում ի-ով վերջացող մի շարք բառեր, մանավանդ օտարազգի հատուկ անուններ, ենթարկվում են նաև ի հոլովման՝ պահպանելով իրենց հիմքի ի-ն և»¹⁸ [ընդգծումը մերն է.—Ա. Ս.]:

է. Աղայանը նշում է այն տատանումները, որոնք առկա են ալի, ելի ածանցներով ածականների գոյականական կիրառություններում. «(ՈՒ) այս վերջավորությունն ստանում են ուղղականում ի վերջավորություն ունեցող բառերը, իբրև բայանուն գործածվող անորոշ դեր-

15 Ս. Պարսաեյան, նշված աշխ., էջ 108:

16 Մ. Արեղյան, նշված աշխ., էջ 344:

17 Զ. Աճառյան, նշված աշխ., էջ 698:

18 Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955, էջ 267:

բայը, ալի, ելի ածանցներով կազմված գոյականները, հաճախ նաև
այդ նույն ածանցներով կազմված ածականները գոյականաբար գոր-
ծածվելիս (թեև դրանց համար ավելի սովորական է ի վերջավորու-
թյամբ տրական-սեռականը) և անկողին, մարդ, ամուսին, ձի, թի, դի
բառերը, որոնք ուղղականի նյութական վերջավորություն չունեն»¹⁹:

«Ժամանակակից հայոց լեզու, հ. 2» աշխատության մեջ նշվում է,
որ մարդ, ամուսին, անկողին, տղամարդ բառերը մինչև XX դ. սկզբը
ները ենթարկվում էին նաև ի հոլովման. բերվում են բնագրային հա-
մապատասխան վկայություններ²⁰:

Ու հոլովման պատկանող բառերը, ըստ զուգաձևության դրսևոր-
ման առանձնահատկությունների, կարելի է բաժանել մի քանի խմբի.
ա) հասարակ գոյականներ, բ) հատուկ գոյականներ, գ) փոխանուն
ածականներ, տ) փոխառյալ բառեր:

ա) հասարակ գոյականներ. լեզվի զարգացման նախորդ ենթա-
փուլը՝ XIX դ. վերջը և XX դ. առաջին տասնամյակները, բնորոշվում
է ի-ով վերջացող հասարակ գոյականների տարբերակային ձևերի առատ
կիրառությամբ. օրինակներ՝ դափնիի (Ր, ԵԺ, 1, 1955, էջ 225), կաղնիի
(ն. տ., 215), գոտիի (Ր, ԵԺ, 3, 1955, էջ 245), գերիի (Ր, ԵԺ, հ. 7,
1956, էջ 232), ուտենիի (Ր, ԵԺ, 5, 1956, էջ 218), դերձակունիի (ՌՊ,
Երկ., 1950, էջ 366), իշխանուհիի (ն. տ., 397), քչևամիխս (ն. տ., 322),
պատանիի (ն. տ., 393), գինիի (ն. տ., 362), լոբիի, օղիի (Մուր., ԵԺ,
6, 1963, էջ 236), բաճալիի (Մուր., ԵԺ, 7, 1965, էջ 69), աղակիի
(Մուր., ԵԺ, 1, 1951, էջ 81), խեցիի (Մուր., ԳՄ, 1939, էջ 208), կղզիի
(Վրթ. Փ., ԵԺ, 2, 1958, էջ 71) և այլն:

Լեզվի զարգացման ներկա փուլում ի-ով վերջավորվող հասարակ
գոյականների ի-ով գործառույթունները խիստ սահմանափակվել են:
Գրական լեզվի գրավոր տարբերակում զուգահեռ հոլովմամբ հանդես
են գալիս ալի, ելի ածանցներով որոշ գոյականներ միայն (բանալու||
բանալիի (ՍԶ, ԵԺ, 2, 1960, էջ 366), ունելու||ունելիի (ՍԽ, ՄՍ, էջ
188), ածելու||ածելիի և այլն): Ի-ով տարբերակներ ունեն և մի շարք
այնպիսի գոյականներ, որոնք նույնպես հակված են թեք հոլովաձևե-
րում բառի սկզբնաձևը պահպանելու, մի բան, որ հնարավոր չէ ի>ու
հերթագայության դեպքում. հմմտ.՝ սոնու||սոնիի, կահ-կարասու||կահ-
կարասիի (ՍԿ, ՔԴՔ, էջ 311), շոգու||շոգիի (ԵԶ, ԵԺ, 5, էջ 84), կիսանդ-
րու||կիսանդրիի (ՍԿ, ՔԴՔ, էջ 467), լեղու||լեղիի, աղու||աղիի և այլն:
Սակավ դեպքերում տարբեր հոլովումներն ընտրվում են բառի տար-
բեր իմաստները նշելու նպատակով: Օրինակներ՝ Ցեխի մեջ կորած

¹⁹ Է. Բ. Աղայան, նշված աշխ., էջ 241:

²⁰ Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառեալյան, Հ. Ա. Օհանյան, նշված աշխ., էջ 91:

դեմքը կնճռոտ կաշու պես է (ԴԴ, ԵԺ, 2, 1977, էջ 270): ...Պատուվող կաշու ձայնով ճշաց շար իրիցկինը (Ն. տ., էջ 88—89): Նրա դեղնամոմի դեմքը կաշվի տակ արդեն պարզ գծագրվում էր՝ իբրև պարկը գցած գանգ... (Ն. տ., էջ 92): Ավելի հաճախ զուգաձևերում իրենց արտացոլումն են գտնում գրական լեզվի ավանդական և գործող նորմաները: Օրինակ՝ Նա, հիրավի, կաշուց դուրս էր գալիս... (ՆՁԷ, էջ 227): Մենք այստեղ կաշվից դուրս ենք գալիս... (ՆՁԷ, էջ 227): Ռոմանտիկ ոճի կոշիկը պատրաստվում է շերտից (փափուկ այծակաշիի լաբից) (ԳՏ, № 12, 1974, էջ 52):

№ 5 աղյուսակում ներկայացվում է ի-ով վերջացող հասարակ գոյականների սեռական-տրականի ձևերի գործառությունների վիճակագրությունը: Նախ տրվում է ամեն մի բառաձևի միանգամայ գործածության քանակը, փակագծերում նշվում են բոլոր կիրառությունները: Ընտրանքի ծավալը 100—120 էջ է:

Ա Ղ Յ Ո Ս Ա Կ № 5

Ազգյուրներ	ու	ի
Իս., Երկ., 3, Պատմածրներ	37 (120)	—
ԱԲ, Երկ., 1, «Մթնածոր» շարքը	47 (183)	—
ՍԶ, ԵԺ, 1, «Մնձորի այգին» շարքը,	29 (107)	—
ՄԳ, «Մարութա սարի ամպերը»	20 (98)	—
ՀՄ, «Մոտոտոս»-ից՝ «Մենք ենք մեր սահերը»	29 (49)	—
ՎԳ, «Դեղատուն Անի»	12 (28)	—
ՀԲ, ԸՆ, 1, «Մպիտակ դիրքը», «Եփրատի կամուրջին», «Մայրենի լնդու»	18 (72)	1 (7)

Վիճակագրությունից պարզվում է, որ ի-ով վերջացող հասարակ գոյականների ի-ով հոլովումը ժամանակակից գրական լեզվին հատուկ է: Աղյուսակում զուգաձև կիրառություն է ստացել միայն էֆենդի բառը. էֆենդիի ձևը կիրառվում է արևմտահայ խոսքում: Անշուշտ, նշված խմբի բառերի զուգահեռ ձևերի գործառությունների բնույթը միայն բերված վիճակագրությամբ ներկայացնելը բավարար է: Նյութի ավելի լայն ընդգրկումը հնարավոր է դարձնում եզրակացնելու, որ գրական լեզվում ի-ով ձևեր թափանցում են նաև խոսակցական լեզվից: Օրինակներ ... Իզուր էր Կարո Դարայանը... դժբախտ նավաստիի նման թարթել իր տարտամ կրակը մաղութանման մուժում (ԵԶ, ԵԺ, 5, էջ 229): Գերազանցի ոչ մի կոթ դեռ ոչ մի անգամ այսպես չի մատուցվել ոչ մի հնձվորի (ՀՄ, Մ, էջ 90): Մեր պարտեզի բարձր բարդիի վրա...երկու արագիլ իրենց բույնն էին հյուսել (Իս., Երկ., 3, էջ 325): Դեղձենիի ծաղկի շուքը թրթռում է նրա ժպտուն այտերի վրա (Ն. տ.,

էջ 363): Սակալ հանդիպում են և արևմտահայերենի ազդեցութիւններ: Օրինակներ՝ Եվ ինքն էլ մի ամբողջ աշխարհ է կարծես... հայ բնաշխարհից պոկված մի բեկոր... որին հպվելով երևի ուժ ու ոգի են առնում իր համշէնցի հայրենակիցները, հաղորդվում հայ հոգիին... (ՍԿ, ԽՃ., էջ 290): Եղբւանիի և շահոքրամի բուրմունքով խնկված... պատշգամբը՝ չի հեռանա իմ հիշողութիւնից (ՎՓ, Երկ., 1, 1979, էջ 53): Ինձ մոտեցավ նույնպես Արուսյակը իր հոր, բարձրահասակ ու պատկառելի Դարբասյան էֆենդիի հետ... (ՎՓ, Երկ., 1, էջ 74):

Գրական լեզվի դարգացման նախորդ փուլում ի հոլովմամբ հաճախ էին հանդես գալիս նաև ի-ով շվերջավորվող մարդ, ամուսն, անկողին բառերը. օրինակ. մարդի(ն) (Բ, Եժ, 10, 1959, էջ 130—131, ՊՊ, Եժ, 2, 1953, էջ 490, ՂԱ, ԸԵ, 1956, էջ 622), ամուսնի (Բ, Եժ, 3, 1955, էջ 280, ՌՊ, Երկ., 1950, էջ 344), անկողնի (Բ, Եժ, 3, 1955, էջ 484, ՂԱ, ԸԵ, 1956, էջ 646): Ներկա փուլում ամուսնի ձևը բոլորովին գործածական չէ. մարդ բառի ի-ով կիրառութիւնները գեղարվեստական գրականութիւն լեզվում խոսակցական ոճի արտահայտութիւններ են և գրական ու կանոնական չեն համարվում. օրինակներ՝ սիրում էր նրան որպես մարդի և որպես նկարչի (ՍԶ, Եժ, 4, 10, էջ 238): Ամոթ է քեզ պես տղամարդին, որ այդպես փալաս ես դառնում (ԳԳ, Եժ, 2, 1977, էջ 372): Բա՛, ինձ թողիր առանց իմ մարդի (ն. տ., էջ 437): Փողոցում կանգնել էր մի կին, տղամարդի գլխարկով (ԱԲ, Երկ., 1, էջ 135): Տասնութ տարեկան դարձավ՝ աղջկան մարդի ես տալիս ու դրանից հետո նա մարդիմն է (ՀՄ, Ծ, էջ 417): Ուղարկեցին Մմակուտ մարդի (ՀՄ, Օգ., էջ 341) և այլն: Անկողին բառի հոլովական տատանումները պահպանվում են նաև ներկա փուլում. հմմտ.՝ անկողնու (ԱԲ, Երկ., 1, էջ 140, Իս., Երկ., 3, 1959, էջ 48, 83, ՄԳ, ՄՍԱ, էջ 32) և անկողնի (ՆԶԷ, էջ 87, Թոթ., ԿՀՀԾՎ, էջ 15, ԴԴ, Եժ, 4, 2, էջ 76, ՍԶ, Եժ, 4, 1, էջ 485) և այլն: Անկողնու||անկողնի ձևերը կարելի է համարել մրցակցող դուզածակեր: Միևնույն հեղինակի լեզվում և հաճախ միևնույն ստեղծագործութիւն մեջ հանդիպում են և՛ ու-ով և՛ ի-ով հոլովված ձևեր. հմմտ.՝ անկողնու (ՀՄ, Օգ., 1967, էջ 217, ՍԶ, Եժ, 4, 1, 1960, էջ 344, Երկ., 1, 1976, էջ 140) և անկողնի (ՀՄ, Ծ, 1978, էջ 90, ՍԶ, Եժ, 4, 1, 1960, էջ 485, ԱԲ, Երկ., 1, 1976, էջ 143) և այլն:

Այս խմբի բառերի շարքը կարելի է դասել և արդեն հնաբանութիւն դարձած աղախին բառը, որը գրական լեզվում ունի դուզածակ գործառութիւն. հմմտ.՝ աղախնու(ն)՝ (ՄՆ, ԸԵ, 1945, էջ 221, ՆԴ, Եժ, 3, էջ 256, Շիրվ., Եժ, 5, 1959, էջ 327, Իս., Երկ., 3, էջ 228, ԽԴ, ՌԿ, 1979, էջ 309) և՛ աղախնի(ն)՝ Շիրվ., Եժ, 4, 1959, էջ 330, ՆԴ, Եժ, 2, էջ 99, ՍԶ, Եժ, 1, էջ 352) և այլն:

Գրեթե հավասարաթիվ են աստծու||աստծո տարբերակները. օրինակներ՝ Աստծո այս արարքն ամենևին չէր համապատասխանում այն աստծու կերպարին, որն իմ տատն էր ստեղծել ինձ համար (ԳՄ, ԵԺ, 2, էջ 357): Ամեն ինչ կախված է աստծո ողորմությունից (ՍԶ, ԵԺ, 7, 1962, էջ 11): Գուսաններն աստծու մարդիկ են (ՍԶ, ԵԺ, 7, 1962, էջ 15): Նա ... այդ պահին խոսում էր աստծո հետ (Գար., 1979, № 4, էջ 55): Ամուսնու ցանկությունը կատարում էր անմիջապես, իբրև աստծու և բնության կողմից թեկադրված մի պարտականություն (Գար., 1979, № 4, էջ 53): Դա աստծո անեծքն է (ՀՄ, Մ, էջ 342): Լեռն աստծու հայացքի տակ կա ներհայաց ու խոլ (ՀՄ, Մ, էջ 327):

Աստված բառի ի հոլովմամբ ձևերը խիստ սակավադեպ են:

բ) Փոխառյալ բառեր. Ի-ով վերջացող փոխառյալ բառերի հոլովումը ժամանակակից հայերենում դեռևս բավական անմիատարր է: Մի շարք բառերի հոլովման մեջ առկա են տատանումներ, իսկ մի շարք բառեր էլ հոլովվում են միայն ի-ով: Որպես կանոն հոլովման զուգահեռ ձևեր ունեն ավելի վաղ շրջանում փոխառված բառերը, որոնք, ըստ գործող կանոնի, գրական լեզվում հոլովվել են ու-ով: Խոսակցական լեզվում գործառություն ունեցող բառերը ի-ի ընդհանրականացման միտումի ազդեցությամբ սկսել են հոլովվել և ի-ով, որից և անցել են գրավոր լեզվին: Ավելի ուշ շրջանում գրական ճանապարհով (մեծ մասամբ ռուսերենի միջոցով) հայերենին անցած օտարազգի բառերում ի-ով ձևերի հետագա տարածումն ու բացարձակ գործառությունը բացատրվում է փոխառյալ բառի սկզբնաձևը պահպանելու և հասկանալի դարձնելու միտումի ազդեցությամբ: Ի-ով հոլովվելու դեպքում թեք հոլովաձևերում բառի ի վերջնահնչյունը պահպանվում է: Ստորև ներկայացնում ենք զուգաձև հոլովում ստացող փոխառյալ բառերի ցանկը. համեմատության համար բերում ենք նաև միայն ի-ով հոլովվող բառերը:

Զուգաձև հոլովում ստացող փոխառյալ բառեր

բայաթի, բիշի, բուկի, գոշի, զուռնաչի, էփիմերդի, էֆենդի, լոթի, լոթի-փոթի, խաչապուրի, խինկալի, (կիս)անդրի, հաշի, հեյրաթի, հուրի, հուրի-փերի, նաղարաչի, շաշկի, շախոխբիլի, պիկուլի, ռուբլի, վալի, վաֆլի,

Ի-ով հոլովվող փոխառյալ բառեր

ալիբի, դենդի, ժյուրի, լեդի, կեպի, կուլի, հիպի, մորֆի, յանկի, շասսի, շլի, ջոնգլի, ռաբ-

վիսկի, տաբախ, տուֆլի, փինաչի,
ֆիդայի

բի, ռալլի, ռեզբի, ռիկշի, ռու-
բայի, ցունամի

գ) Փոխանուն ածականներ. Հայտնի է, որ ածականները գոյականաբար գործածվելիս, անկախ այն բանից, թե ինչպես են վերջավորվում, հոլովվում են ի-ով: Օրինակներ՝ Հայ բանաստեղծի կենսազգացողությունը բախվեց ամենից սարսափելիին (Գար., 1979, № 12, էջ 53): Ախար որտեղի՞ց այս վաչկատունի արյունը իմ մեջ (ՊՍ, Եժ, 1, 1972, էջ 486): Ի-ով վերջավորվող գոյականների հոլովման համաբանությամբ ու-ով ձևեր են ստանում այն փոխանունները, որոնք հաճախ են հանդես գալիս գոյականաբար. այդպիսիք են՝ ալի, ելի, անի ածանցներով ածականները (շնորհալի, սիրելի, ողորմելի, պատվելի, երկերեսանի, շորքոտանի, ընտրանի և այլն):

Ալի, ելի ածանցներով ածականների փոխանվանական կիրառություններում ու-ով ձևերը առաջանում են նմանատիպ ածանցներով գոյականների հոլովման համաբանությամբ, իսկ ի-ով ձևեր՝ բերականական համանունությունից խոստափելու անհրաժեշտությամբ: Օրինակներ՝

Տանում էին ցույց տալու յուր սիրելու անհայտ գերեզմանը (Ր, Ս, էջ 242):

Իրենց սիրելիի շիրմին դրել էին հայրենի ժողովուրդն ու հերոսի այրին (ՍԿ, ՔԳՔ, էջ 510):

Վերևից մի նայիր այս ողորմելուն (ՎԱ, ՀՎՓԲ, էջ 240): Ողորմելու ընտանիքը ձգեցին մուրացկանության մեջ (Շիրվ., Եժ, 4, 1959, էջ 54):

Բողոքական պատվելիի քույր՝ նախատակյաց հավատավորի համբավ է վայելում ... (ՍԿ, ԽՃ., էջ 29):

Սրանցից ու-ով ձևերն արտացոլում են հին նորման, իսկ ի-ով ձևերը հաստատման միտում ունեցող ձևերն են. հմմտ. նակ՝ պատվելու (ԳՍ, Եժ, 2, 1967, էջ 11), եղկելու (ՊՍ, Եժ, 1, էջ 444), երկերեսանուն (ԽՂ, 30/9, 1936), բարու (ՀԹ, Եժ, 4, 1951, էջ 161), վտարանդու (Սվանգ., 11/12, 1981) և այլն:

Տերմինային արժեք ունեցող մի շարք փոխանունների հոլովման մեջ ի-ի հաստատումը վերջնական է. հմմտ.՝ հոգեակիի, եզակիի, կատարելիի, նվագելիի, հանելիի, բաժանելիի և այլն:

Ջուգահեռ ձևեր ունեն և՛ առարկայի, և՛ հատկանիշի իմաստ արտահայտող այն բառերը, որոնք սովորաբար բառարաններում ստանում են գ .աժ կամ աժ. գ. նշումները. դրանցից են՝ այրի, ամուրի, ապառնի և այլն:

Այն, ինչ որ թեթև կարող է անցնել ամուրիի համար, մեծ անխորժուցյուններ կարող է պատճառել մի ընտանիքի հորը (Շիրվ., Եժ, 4, էջ 369):

Դատը վերաբերում էր մի խեղճ այրիի ... (Մուր., Եժ, 4, 1953, էջ 48):

Ինչպես են համարձակվում համեմատելու ամուրու դժոխային կյանքը ամուսնացյալի երանական կյանքի հետ:

(Մուր., Եժ, 7, էջ 342):

Յափնջին ընկալվ այրու գլխին (ՉՄ, Օգ., էջ 148):

Նման որոշ բառերի ու-ով ձևերն արդեն հնացած են: Օրինակներ՝ Ահա թե ինչու գլուխներս, երեսներս ձևերը և՛ բուն հոգնակիրության, և՛ ստացական հոգնակու իմաստ կարող են ունենալ (ՉՊ, ԳԹԿԶ, էջ 332): Կիրակի բառը, հազվադեպ, շաբաթվա անունների հոլովման համաբանության, հանդիպում է և վա ձևով: Օրինակ՝ «Մշակը» իմ մի փորրիկ նամակին, իր անցյալ կիրակվա համարում պատասխանում է 12 սյունակից բաղկացած մի հոդվածով (Շիրվ., ԵԼԺ, 9, 1955, էջ 268):

դ) Հատուկ անուններ. Ժամանակակից գրական հայերենում ի-ով վերջացող հատուկ անունների հոլովումը բավական անմիատարր է: Թեև շատ քերականագետներ նշել են հատուկ անունների հոլովման մեջ նկատվող տատանումները, սակայն դրանց առանձին բացատրություններ կամ մեկնաբանություններ չեն տվել: Եթե փորձենք որոշ խմբավորում կատարել անունների հոլովումներում, ապա կարելի է ասել, որ մի շարք հատուկ անուններ, մասնավորապես անձնանուններ, հոլովվում են ու-ով, մի շարք անուններ հոլովվում են ի-ով, իսկ մի շարք հատուկ անուններ էլ (և՛ անձնանուն, և՛ տեղանուն) ունեն զուգաձև հոլովում: Փորձենք այդ անունները ներկայացնել բառաշարքերով:

ա) Բառացանկի ձախ եզրում խմբավորել ենք տարբեր ածանցյուններով բառաշարքեր կազմող հատուկ անունները: Դրանք այն հայոց անձնանուններն են, որոնք ու հոլովմամբ ավանդվել են պատմականորեն, գրական ժառանգորդություն: Ասվելի ուշ շրջանում դարձյալ գրավոր լեզվում են վկայվել տարբեր վերջամասնիկներով օտարազգի հատուկ անունները, որոնք նույնպես, ըստ գործող կանոնի, հոլովվել են ու-ով: Խոսակցական լեզվում այդ բառերի գործառույթունը սահմա-

Ու-ով հոլովվող հատուկ անուններ	Ի-ով հոլովվող հատուկ անուններ	Չուզած հոլովում ստացող հատուկ անուններ
<p>1. Հայոց անձնանուններ</p> <p>ա) -ացի, -եցի, -ցի. <i>Խոբենացի, Երբեկացի, Լամբրոնացի, Նարեկացի, Աշտարակեցի, Փարպեցի, Այդեցի, Երեվանցի, Արմավուրցի, Զարուհի, Տիգրանուհի, Մբրուհի.</i></p> <p>բ) -ունի. <i>Արմենուհի, Զարուհի, Տիգրանուհի, Մբրուհի.</i></p> <p>գ) -ունի. <i>Արշակունի, Բաղրատունի, Վշտունի, Քաջունի.</i></p>	<p>Անձնանուններ</p> <p><i>Աղազի, Արկաղի, Բալի, Բարբերի, Բելի, Դմարի, Եվզենի, Ժենի, Լիլի, Լյուսի, Էջղուպերի, Խոնկենի, Պոմենի, Դոնիցետի, Հենրի, Հանրի, Մարի, Մերի, Նելի, Նոյեմի, Ելլի, Պետեֆի, Պուչի, Ջանի, Ջենի, Ռոսի, Ռոզարի, Ասադի, Սոֆի, Սյուզի, Վերդի, Վիվադի, Վասիլի, Վալերի</i></p>	<p>Անձնանուններ</p> <p><i>Ալի, Աբարի, Արգիշտի, Բելի, Զանի, Զաքի, Էթերի, Իսայի, Իոսելիանի, Խաբանի, Կալուլի, Լեյլի, Դոնդի, Դիֆիանի, Մոսի, Մուխտի, Մաքիվլի, Նազելի, Նազենի, Նիզարի, Պապերի, Պոկորի, Ջաբարի, Մալի, Գարիբալդի, Ջելլի, Միրարփի, Սյունի, Քյոռուլի, Նաիրի, Մահարի, Արազի, Բաֆֆի, Ջիվանի, Ազարի, Ազգի, Օրբելի, Տորիլի, Քենդի</i></p>
<p>2. Օտար անձնանուններ</p> <p>ա) Նիզամի, Ֆիրդուսի, Եսայի, Ալ-Բիրունի.</p> <p>բ) -ելի. <i>Երբեթելի, Ռուսթավելի.</i></p> <p>գ) -շվիլի. <i>Բարաթաշվիլի, Գրիշաշվիլի, Դավթաշվիլի.</i></p> <p>դ) -սկի. <i>Ալվազովսկի, Բելիսկի, Դոստոևսկի, Մամուլավսկի, Ջանաժենսկի.</i></p> <p>ե) -ցկի. <i>Տրոցկի, Կաուցկի, Միտենցկի</i></p>	<p>Տեղանուններ</p> <p><i>Ակոռի, Արտենի, Աքորի, Բաթումի, Գեղի, Գիլի, Դելի, Թրիլսի, Վելիկիև-Լուկի, Պրամի, Կասպի, Հելսինկի, Մայի, Նագասակի, Շաքի, Ելզի, Ողջի, Չիլի, Կարլով-Վարի, Ռուսթավի, Տոլյատի, Փոթի, Ուսսուրի, Քղի, Վահագնի, Նոր Գեղի</i></p>	<p>Տեղանուններ</p> <p><i>Ալվազրդի, Անի, Արածանի, Արզնի, Բերկրի, Բջնի, Գառնի, Գյումրի, Էրեբունի, Լոսի, Մարտունի, Մեղրի, Շամախի, Շուշի, Պոզնի, Վեղի, Ջանախշի</i></p>

Նախակ է եղել: Այսպիսով, գրական ժառանգորդությամբ փոխանցվելու և խոսակցական լեզվում քիչ գործածվելու հետևանքով է, որ պահպանվել է բառաշարքեր կազմող հատուկ անունների սովանդական ու-ով հոլովումը: Այդ բառերի ի-ով հոլովման որոշ փաստեր կան XIX դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների գրական լեզվում: Օրինակներ. Ընդունում ենք նաև պ. Ալվազովսկիի սպառնալիքը (ՄՆ, ԸԵ, էջ 30): Վենյավսկիի (Շիրվ., ԵԺ, 9, էջ 417), Դոստոևսկիի (Ն. տ., էջ 469): Հուրի Խան-Դայան շէր կարողանում տանել պարոն Աշխարունիի ներկայությունը (Բ, ԵԺ, 1, 1955, էջ 135): Կովկասի հայոց հրատարակչական ընկերությունը որոշել է հրատարակել... Շոթա Ռուսթավելիի «Ընձի մորթը» (ՎՏ, Երկ., 1956, էջ 480): Ես երբեք այդպես ձեր չէի երևակայում Երեթելին (ՎՏ, Երկ., 1956, էջ 568):

բ) Միջին սյունակում ի-ով հոլովվող հատուկ անուններն են: Դը-րանք հիմնականում օտարազգի հատուկ անուններն են և նորակազմ հայկական այն տեղանունները, որոնք, ըստ ներկա միտումների, հոլովվում են ի-ով:

Օտարազգի հատուկ անունների ի հոլովման հաստատումը տեղի է ունենում ոչ միանգամից, այլ աստիճանաբար, գրական լեզվում նրանց գործառույթյան շրջանակների հետզհետե ընդլայնմանը զուգընթաց:

Ի-ով հոլովվելիս պահպանվում է օտարազգի բառի արմատի ի վերջնահնչյունը, հետևաբար և օտար անվան սկզբնաձևը բոլոր թեք հոլովաձևերում, մի բան, որ հնարավոր չէ ի>ու հերթագայության դեպքում:

դ) Երրորդ սյունակում զուգաձև հոլովում ստացող հայոց և օտարազգի անուններն են: Սրանց հոլովման տատանումները պետք է բացատրել հնացած կամ հնացող և գործող նորմաների առկայությամբ: Ավանդական ու հոլովումը օտարազգի հատուկ անուններում աստիճանաբար տեղի է տալիս ի-ով ձևերի առջև: Ու-ով հոլովման դեպքերը, որպես կանոն, վերաբերում են ժամանակակից գրական լեզվի զարգացման նախորդ ենթաշրջանին և դարասկզբի առաջին տասնամյակների գրական լեզվին: Օրինակներ՝ Ռոստուն ընդունեցինք ծաղկեփշնջերով (ՀԹ, ԵԺ, հ. 4, 1951, էջ 358): Ով չգիտե Բենվենտոտտո Չելլինո հոյակապ նստույցների արժանավորությունը (ՄՆ, ԸԵ, էջ 327—328), Լեոնարդո-դա Վինչու (ԵԶ, 1984, էջ 728): Ներկայումս դեռևս պահպանվում են որոշ անունների զուգահեռ հոլովումները. Պոկորնու||Պոկորնիի, Պապերնու||Պապերնիի, Գարիբալդու||Գարիբալդիի, Տարիչելու||Տարիչելիի, Բուլյոննու||Բուլյոննիի, Քենեդու||Քենեդիի, Պոդգոռնու||Պոդգոռնիի, Արգիշտու||Արգիշտիի (ՀՄ, Մ., էջ 334), Ղիփիանու (Գար., 1980, № 12, էջ 17), Իոսելիանիի (ՍԶ, 10/2, 1981) և այլն: Հայոց անձնանունների ի-ով ձևերն առավել բնորոշ են խոսակցական լեզվին. հմմտ.՝ Ջիվանու||Ջիվանիի, Օրբելու||Օրբելիի, Արաֆու||Արաֆիի, Ազասու||Ազասիի, Աղալնու||Աղալնիի և այլն:

Տեղանուններում ու||իի ձևերը հավասարապես գրական են. հմմտ.՝ Գառնու||Գառնիի, Մեղրու||Մեղրիի, Վեդու||Վեդիի և այլն: Ի-ով ձևերի տարածումը գրավոր լեզվին անցել է խոսակցական լեզվից: Որոշ անունների ի-ով կամ ու-ով հոլովումը բացատրվում է տեղանունը անձնանունից տարբերակելու անհրաժեշտությամբ: Օրինակներ՝ Գուրկու «Մայրը» վկայ. «Սասունցի Դավիթ» ատրակցիոնը Գուրկիի «Կրկեսային բեմում» (Ավանգ., 17/1, 1979, էջ 4-րդ):

Ժամանակակից գրական լեզվում ի-ով վերջացող հատուկ անուններին հոլովման ձևերի վիճակագրական տվյալները ներկայացվում են ստորև բերվող բառացանկում.

Ա Ղ Յ Ո Ւ Ս Ա Կ № 6

Ազդրուբներ	ու-ով անուններ	ի-ով անուններ
Ի ս., Երկ., 3, Պատվածքներ	Ալու	Գարեբալզիի, Բեյլինի, Զամիի, Նիզամիի, Ռուսիի, Դեյլիի, Մարիին, Հելզիի, Բոզզիի, Քյոոզիի
ՎՓ, Երկեր, 1	Սորյեկու, Խորենացուց, Գոստոնկու	Կալիտայի, Էոնանիի, Գուզոնիի, Տայեցիի, Դոնիցետիի, Կալաբրիզի, Գարեբալզիի, Գոցիին, Մալվինիի, Ռուջիերիին, Մարիանիի, Քալանիի, Ցակոնիին, Մաքիվիին, Կլարետտիին, Գալանտիի, Մարիի, Գանելիի, Ազալիի, Բենելիի, Պրինչիվալիի, Շուշիի, Դեմբիի, Մերբելի, Ֆանիին
ԱԲ, Երկ., 1, «Մթնածոր» շարքը	Թլուրանցու, Ցախու, Ավու, Բազու, Զաքու, Պետու	
ՍԿ, «Ծանկար հոգու և քարտեղի զույնե- րից»	Քուսկիի Զայաու, Ռուսթայիու, Գենեդու, Նաթալու, Ստոկովիու, Գառնու, Մարիիվի- սիու, Լոուսց	Քեթիի, Աբաքսիի, Անիի, Չիլիի, Բաֆֆիին, Սյուզիին, Վերզիի, Ռոսինի, Գրոզիի, Բարբիի, Լաիբիի, Կալիտայի, Թրիլիսիի, Նյու-Ջըրսիի, Մակկարտիի, Էյսիի, Մալիին, Գարիբալզիի, Քզիի, Նոր Գեդիի, Մարիի, Մոստոսիի, Մայամիի, Ֆելիինի, Մայան-Շուշիանիի, Բենեդիի, Ազամոյիին, Արգիշտիի, Սուխուսիի, Վասիլիի, Նելիի, Կավաբադսիի
ՀՄ, Մառերը	Պալանու, Գուրամիշվի- յու, Լիյու, Բուզյոն- նու, Արաքու, Գրոզ- նուց, Արեգունու, Ծա- յու, Արգիշտու	Ամանիի, Քենեդիի, Անտոնիոնիի, Գառնիի, Անիի, Արգիշտիի
ՎՊ, «Դեզա- տուն «Անի»	Դոստոնկու	Անիին, «Նախիի», Էրզուլիբիի, Լեոնարդո դա Վինչիի, Քուսայիսիի

Աղյուսակում ու-ով և ի-ով կիրառություն ունեն հետևյալ բառաձևվերը. Քենեդու||Քենեդիի, Գառնու||Գառնիի, Արաքու||Արաքսիի, Գրոզնուց||Գրոզնիի, Արգիշտու||Արգիշտիի:

Գրական լեզվի զարգացման նախորդ փուլում և XX դ. առաջին տասնամյակներում բավական տարածված էին ժամանականիշ ժամ,

տարի, պահ, դար, ինչպես և մահ բառերի ու-ով ձևերը: Օրինակներ՝ նախանցյալ դարու վերջերն էր (ՀԹ, ԵԺ, 4, էջ 246): Ութերորդ դարու մոտ, ապրել է արաբացոց մեջ ... Զբերք անունով գիտնականը (ՄՆ, ԸԵ, էջ 238): Եթե մի մարդ նորա ասածներին նայելու լինի, անտարակույս տարու մեջ տասն անգամ դատիկ կըկատարե (ՄՆ, ԸԵ, էջ 250): Նոր տարու առաջին օրը Մինասյանը պատրաստվեց այցելութուն տալու քաղաքում ունեցած իր բարեկամներին (ՆԴ, ԵԺ, 3, էջ 619): Երկու հոգի այս պահուն ծառերի տակովն անցան (ՀԹ, ԵԺ, 3, 1969, էջ 19): Զէր փայլում հնձավորի մանդաղը, որ օրվա այդ զովարեր ծամուն ավելի եռանդով էր գործում (Բ, ԵԺ, հ. 7, էջ 319): Քառորդ ծամու չափ խոսելուց հետո .. ծերունին ցուցամատը դրեց սեղանի վրա գտնվող զանգակի գլխին (Շիրվ., ԵԺ, 4, 1959, էջ 152): Դու իմը պիտի լինիս ... նույնիսկ իմ մահու գնով, նույնիսկ քո մահու գնով (ՆԴ, ԵԺ, 3, էջ 139): Ժամանակակից գրական նորմայի տեսակետից այս ձևերն հնացած են: Ներկա փուլում նշված բառերի ու-ով կիրառություններն ունեն ոճական արժեք. հմմտ.՝ Նոր տարու գիշերն էր (ԴԴ, ԵԺ, 3, 1977, էջ 216): Արտոնքը կես ծամու ճամփա է Վարդենիսից (ԽԴ, ՌԿ, էջ 272): Մահու թևերով իջնում է գիշերը վանքի և աշխարհի վրա (ԳՄ, ԵԺ, 2, 1967, էջ 91):

Որոշ վերապահություն պետք է անել տարի բառի վերաբերմամբ, որի ու-ով հոլովումը պահպանվում է ըստ ձևի, իսկ վա-ով հոլովումն՝ ըստ իմաստի: Հանդիպում են երկու ձևերի հոդով հավասարաթեք կիրառություններ: Օրինակներ՝

Նոր տարվան նախորդող այս օրերին ճապոնական քաղաքների հուշանվերների խանութները վաճառասեղաններին ասես մրկների արշավ է նկատվում (ՍՀ, 27/12, 1983):

Նոր տարուն նախորդող վերջին օրերին նրանք իրենց բնակարանները զարդարում են բամբուկի ու սոճու ճյուղերով (ՍՀ, 27/12, 1983):

Բացի այդ, տարի բառը հասակ, տարիք (տարեկան) նշանակությամբ հոլովվում է ու-ով. օրինակներ՝ Տեսա այդ ճշմարտությունը դեռ հարյուր տարուս չհասած (ՀԹ, ԸԵ, 1, էջ 256): Սիմոնի վերջին տղան, այսպես տասներեք տարու, կանգնել էր գոմի մոտ ... (ՀՄ, Օգ., էջ 197)²¹:

²¹ Զինք անդրադառնում ու-ով այն զարարարանություններին ու բարբառարանություններին, որոնք ծառայում են խոսքի ոճավորման նպատակներին. Հմմտ՝ Մետաքսյա հագուստը կարված էր ըստ վերջին տարազու (Մուր., ԵԺ, 5, էջ 16): Կախքու անմահական գինին է (ԴԴ, ԵԺ, 2, էջ 332): Ստացել ենք Օրդարադու լի (ՍԶ, ԵԺ, 1, էջ 61): Աղասին Ղարաֆիլիսու սարերից հրավիրված էր Դսեղ (ՀԹ, ԵԺ, 3, 1969, էջ 30): Զինք

Այսպիսով, լեզվի զարգացման ներկա փուլում բավական նվազել են ու հոլովման պատկանող հասարակ գոյականների ի-ով ձևերը: Նախապատվութունն այս դեպքում տրվել է ավանդական ու-ով կազմութուններին, որոնք համապատասխանում են լեզվի խնայողության սկզբունքին: Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» զուգաձև հոլովման նշումներ են ստացել ավելի քան 110 գոյական, որոնք կազմում են բառարանում նշված ու հոլովման պատկանող բառերի (1840 բառ) 6 %-ը: 'Իրանց մեջ մեծ թիվ են կազմում բուսանունները, որոնց գործածութուններն ավելի հատուկ են նեղ մասնագիտական գրականությանը: Կոյականաբար հաճախ հանդես եկող որոշ փոխանուններում նկատվում է նմանատիպ գոյականների հոլովման համաբանության միտում. ալի, ելի ածանցներով փոխանուններում տարածման միտում ունեն ի-ով ձևերը՝ անորոշի սեռական-տրականի ձևվերից տարբերակելու և քերականական համանունությունից խուսափելու պահանջով: Փոխառյալ բառերի և հատուկ անունների գործառության սահմանների ընդարձակման ներկա պայմաններում գնալով ավելի են տարածվում դրանց ի-ով կազմութունները: Ու-ով ձևերը հիմնականում պահպանվում են սովորութի ուժով, որպես գրական ժառանգորդությամբ ավանդված ձևեր:

4. Աջլի. Աջ հոլովման են պատկանում կիև (տիկին), ֆույր, տալ, սկեսուր, աներ, տեր, ընկեր բառերը և սրանցով բարդվող ձևերը, որոնց թիվը հասնում է 280-ի: Բառաբարդման ամենամեծ կենսունակութունն ունի տեր բառը (184). ընկեր-ով բարդվող բառերի թիվը 40 է, կիև բառով վկայվում է 26, ֆույր բառով՝ 21 կազմութուն:

Քերականագիտական աշխատություններում նշվել են նաև այս հոլովման պատկանող բառերի ի-ով տարբերակները: Այսպես, Աճառյանը առանձնացնում է ընկեր բառը որպես նաև ի-ով հոլովվող բառ, Աբեղյանը հնացած է համարում ընկերոջ, աներոջ, սկեսրոջ, տալոջ ձևերը և սովորական՝ ընկերի, աների, տալի, սկեսրի բառաձևերը. Գ. Սևակը գրում է, որ ոչ հոլովման երբեմն ենթարկվում են աներ, տալ և սկեսուր բառերը, որից հետևում է, որ այդ բառերի սովորական հոլովումը ի-ն է. է. Աղայանը նշում է տեք բառի երբեմն ոչ-ով կազ-

նշում և արևմտահայ գրական նորմայի ազդեցութունները, որոնք մեծ չեն. օր.՝ Լի-նելով հայ և հայու զավակ՝ նա թատրոն շնորհեց թուրք ժողովրդին (ՎՓ, Երկ., 1, էջ 215):

մըվելու մասին, Ս. Աբրահամյանը նշում է հատկապես սկեսուր, տալ, տեգր, բառերի հոլովման մեջ նկատվող տատանումները²²,

Անցյալ դարի վերջի և XX դ. առաջին տասնամյակների գրական լեզվում ոչ հոլովման պատկանող բառերի ի-ով ձևերից տարածում ունեին ընկերի, սկեսուրի ձևերը²³: Օրինակներ՝ Ամեն մեկը պատրաստ էր վնասել իր ընկերին (Բ, ԵԺ, 2, էջ 466): Խոստանում ենք միմյանց ընկերի և ուսանողի ազնվագույն խոստումով (Մուր., ԵԺ, 6, 1963, էջ 164): Եղբայրն եղբորը չէր խնայում, ընկերն ընկերին (ՀԹ, ԵԺ, 3, 1969, էջ 94): Աչքի տակով նայեց ընկերին (ԴԴ, ԵԺ, 3, էջ 255): Շատ լավ հիշում էր իր դասընկերին (ՆԴ, ԵԺ, 3, էջ 218): Լերմոնտովն էլ ունեցավ իր մեծ ընկերի - Պուշկինի ճակատագիրը (ՀԹ, ԵԺ, 4, էջ 303): Նրա հարսը՝ Զավահիրը ... պտտվում էր յուր սկեսուրի շուրջը (Բ, ԵԺ, 1, էջ 513): Նա այլևս չէր մասնակցում սկեսուրի կամ սկեսրայրի ողբերին ... (Մուր., ԵԺ, 5, էջ 224): Սկեսուրիդ հոգին Գաբրիել հրեշտակն առնի տանի արքայության մեջ գցի (ՂԱ, Երկ., 1979, էջ 173):

Ե՛վ դարասկզբում, և՛ ներկա փուլում սովորական են սկեսուրը|| սկեսուրի, տալոջ||տալի բառաձևերի զուգահեռ կիրառությունները: Օրինակներ՝

Նա ամենևին չէր խառնվում սկեսուրոջ ու ծերունու խոսակցությանը (ՆԴ, ԵԺ, 3, էջ 12):

Մինա բերին ... էլլայի աչքի առաջ բացում էր գյուղի հազարամյա գիրքը, որի յուրաքանչյուր էջը տգիտության մի զոհի մարտիրոսագիր էր, սկեսուրոջ ահի տակ (ԱԲ, Երկ., 1, էջ 102):

Նրան այլևս չեն հալածում սկեսուրի անվերջ տրտունջները, տալոջ կոպիտ ակնարկները (Շիրվ., Ք., 1944, էջ 341):

Մանեն իր և սկեսուրի միջև տեղ բաց արեց (ՆԴ, ԵԺ, 3, էջ 9):

Եվ շխտական հարսը սկեսուրի հետ խոսում է մատնեբով, աչքեբով (ԱԲ., Երկ., 1955, էջ 624):

Հաճախ հարսը նախապես է վատ տրամադրված լինում սկեսուրի նկատմամբ (Ավանդ., 21/XII, 1983, էջ 4-րդ):

Սկեսուրս այդ ծերունու քրոջ տալի աղջիկն է (ՆԴ, ԵԺ, 3, էջ 52):

22 Տե՛ս Հ. Աճառյան, *Նշված աշխ.*, էջ 705: Մ. Աբեղյան, *Նշված աշխ.*, էջ 345: Գ. Սևակ, *Նշված աշխ.*, էջ 270: Է. Աղայան, *Նշված աշխ.*, էջ 241: Ս. Գ. Աբրահամյան, *Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Նշված աշխ.*, էջ 99-100:

23 Իսահակյանի պատմվածքներում (Իս., Երկ., 3, 1959) ընկերի ձևը գործածվել է 15, ընկերոջ ձևը՝ 6 անգամ:

Աներոջ՝ աների ձևերից գրական լեզվում տարածված է առաջինը: Օրինակներ՝ Գարեգինն իր ապագա աներոջն արդեն հայրիկ էր անվանում (ՆԴ, ԵԺ, 2, էջ 433): Եզներդ ուղարկել էս աներոջ տունը (ԱՌ, Երկ., 1955, էջ 365): Վատ չէր լինի ստուգել հաշվապահի նախկին աներոջ տունը (ՆԶԸ, էջ 336): Լեռներ իր կաղ աներոջն էլ խառնեց դպրոցականներին՝ որ նրանց շեշտով դժու խփի և սա (ՉՄ, Մ., էջ 206):

Ընկերոջ՝ ընկերի զուգահեռներից սովորականն ու չեզոքը ընկերոջ ձևն է: Ընկերի ձևի գործառույթյունը գրական լեզվի ներկա փուլում տարածված չէ: Տագր (տեգր) բառն ունի տագր||տագրոջ կամ տեգրոջ||տագրի կամ տեգրի և տեգրո հոլովական տարբերակները: Տագրե ձևը հնաբանություն է. օր.՝ ...Քագուհին չգիտեր, թե ինչ բառերով արտահայտեր յուր շնորհակալիքն ու երախտագիտությունը յուր տագրեն ու Մարզպետունուն (Մուր., ԳՄ, 1939, էջ 380): Տագրոջ ձևը հատուկ է գրական լեզվի գրավոր տարբերակին. օր.՝ Դյուլթիչ որբեայրին իր ձեռքը ... առաջարկեց ասագրոջը (Լ. Տաքսին, «Սրբազան ավազակաորջը», 1981, էջ 75): Տեգրի ձևը հատուկ է գրական խոսակցական լեզվին և միտում ունի տարածվելու նաև գրավոր տարբերակում: Տեգր ձևը գործառույթ է ժողովրդախոսակցական լեզվում:

Տիկին բառի ի-ով ձևերն հատուկ են արևմտահայ գրական լեզվին: Արևելահայ գրական լեզվում տարածվածն ու չեզոքը տիկնոջ ձևի կիրառությունն է. տիկինի ձևը հատուկ է խոսակցական ոճին: Ստորև բերվող օրինակներում տիկինի ձևերը շղատառ են գրվել հենց գրական երկում, որպես գրական նորմայից շեղվող և դավառացի աղջկա խոսքին բնորոշ կամ նրա խոսքի նմանողությամբ կերտված բառաձևեր: Օրինակներ՝ — Գնա՛, թե չէ տիկինին կասեմ ... (ՄԶ, ԵԺ, 1, էջ 344): Շուշանն այժմ նայում էր մերթ տիկինին, մերթ պարոնի ոտներին (ն. տ., էջ 352):

Քույր բառի ի-ով կիրառությունները նույնպես սակավադեպ են. օրինակ՝ ... Ինքս կարոտ եմ զգթած քույրի» (ՎՏ, Երկ., 1956, էջ 648): Քույր բառը «բուժքույր» իմաստով կարող է հոլովվել և ի-ով: Քույրով բաղադրվող հորհուր, մորհուր և նման կազմությունների սեռական տարականը ի-ով է և հատուկ է ժողովրդախոսակցական կամ բարբառային-խոսակցական լեզվին. օրինակներ՝ Մայրս հորհուրիս մոտն է (Իս., Երկ., 3, էջ 232): Մոտ եմ վազում մորհուրին՝ պառկել է ... (ՄԳ, 1982, № 12, էջ 35):

Գրական կանոնից դուրս են նաև ոչ հոլովման պատկանող բառերի՝ ժողովրդախոսակցական կամ բարբառային-խոսակցական լեզվում հանդիպող ու ներքին թեքմամբ ձևերը. օրինակներ՝ Գամ անոցս մոտ էս մի

երկու ամիսն անցկացնեմ (ՀԹ, Եժ, 3, 1949, էջ 12): Նստոն նստեց սկեսուր մոտ (ՆԴ, Եժ, 1, էջ 34): Համբուրեց կեսուր, կեսրարի ձեռքը ... (ՍԶ, Եժ, 2, 1960, էջ 435) և այլն:

Տեր բառն հոլովվում է ոչ-ով. նկատի շունենք փոխանվանական կիրառությունները. օրինակ՝ Տիկին Դաշունի.— (Տերի վրա քնքուշ շեշտելով) Տեր աստված, հոգնել ես ... (ԳՄ, Եժ, 2, 1967, էջ 392): Սակայն տեր-ով բաղադրվող մի շարք բարդություններում կան ի-ով զգալի կիրառություններ: Օրինակներ՝ Դու իսկի նման չես միլիոնատերի կնոջ (Շիրվ., Եժ, 6, էջ 235): Սեղան բաց արին նորեկ կալվածատերի համար (ԴԴ, Եժ, 2, էջ 42): Ցանում էր մի լծկաճատերի հետ (ն. տ., էջ 341): Մեր գլուղացիները երկու անգամ ուզեցել են այս նորատերին սպանել ... (ԽԴ, ՌԿ, էջ 224): Շեհիտը դանդաղ ու երկար լցնում էր ժխածօրճը և գլուղատերին շտապեցնում (ՄԳ, ՄՍԱ, էջ 27) և այլն: Տեր բաղադրիչով տառադարձված բառը պատկանում է ի հոլովման: Օրինակներ՝ Մինասը վերադարձավ՝ հետը բերելով տառադարձված (ՍԶ, Եժ, 1, էջ 280): Գլխի մոտենում էր և շոր ու կոշտ հայտնում տառադարձված (ԱԲ, Երկ., 1, էջ 210): Տեր բառով բաղադրվող մի շարք այլ բառերի հոլովման համաբանությունը գեղարվեստական գրականության լեզվում հանդիպում են և տառադարձված ձևի կիրառության դեպքեր: Օրինակներ՝ Գրեթե ամբողջ օրը գլուղի տառադարձված դռների մոտ էր թափառում (ԴԴ, Եժ, 2, էջ 13): Տառադարձված մոտ ավելի բարձր դիրք կատարեա ... (ն. տ.): Ավելի հաջող և բնական է խոլոդի, այս քսու, խարդախ, ստոք տառադարձված պատկերը (Շիրվ., Եժ, 9, 1955, էջ 129):

Այսպիսով, ժամանակակից գրական արևելահայերենում ոչ հոլովման պատկանող բառերը հոլովական տատանումների տեսակետից միանման չեն. սկեսուր, տալ, տեգր բառերի ի-ով ձևերն ունեն տարածման միտում, մինչդեռ տեր, բույր, ընկեր, տիկին բառերի ի-ով ձևերը՝ սահմանափակ կիրառություն՝ ոճական կամ իմաստային նրբերանգումներով. կին բառը ի-ով չի հոլովվում. աների ձևը տարածում ունի գրական խոսակցական լեզվում:

5. Ուրի. Ո հոլովման են պատկանում հայր, մայր և եղբայր բառերը, որոնցով բարդվող կազմությունների թիվն արդի հայերենում անցնում է 140-ից: Նշված բառարանում մայր բառով կա 71 կազմություն, հայր բաղադրիչով՝ 37, իսկ եղբայր բառը որպես վերջնաբաղադրիչ վկայվում է 34 բարդության մեջ: Պետք է, սակայն, նկատի ունենալ, որ այս թվի մեջ մտնում են նաև նշված բառերի բարբառային (մեր, հեր, ախպեր) ձևերով որոշ կազմություններ: Հոլովման գուգահեռ ձևեր ունեն սակավաթիվ հնացած կամ բարբառային բառեր: Օրինակներ՝ Մայրս վազում է տառմերի (ԴԴ, Եժ, 3, 1977, էջ 351): Ի՛նչ տառմեր ես, որ

չես կարողանում ազատել ջահել տղամերին (ն. տ.): Երեխամայրի, երեխահայրի և նման մի քանի կիրառություններն ավելի հատուկ են խոսակցական լեզվին:

Ուրտաքին հոլովման պատկանող սեր բառը կարող է հոլովվել նաև ծագումով ու-ի հետ կապվող ու, ինչպես և ի հոլովիչով: Ու-ն և ի-ն հանդես են գալիս որպես ոճական տարբերակներ: Օրինակներ՝ Մոլո՛ր-մոլո՛ր դառնում էր սիրու համար կյանքը տված երգչի շուրջը... (Իս., Երկ., 3, էջ 331): Ասացեք, աստժու սիրու համար, ի՞նչ կա էստեղ սարսափելի ու դատապարտելի (ՀԹ, ԵԺ, 4, 1951, էջ 218): Պանդխտական ուղիներին վրա ես հանդիպեցի իմ սերին (Իս., Երկ., 3, էջ 332): Սեր և աստված բառերի հոդառության ժամանակ տեղի է ունենում $n > ու$ հնչուժափոխությունը. օրինակներ՝ Մերացա՛ կրպակով անմահ սիրուս գգվանքներին (Իս., Երկ., 3, էջ 341): Նրան էլ գցիր սիրուդ թակարդը (ՆՁԷ, էջ 147): Սեր բառի ի-ով ձևերը գործել են նաև լեզվի զարգացման նախորդ փուլում. օրինակ՝ Պետք էր պատասխանել նրա սերին (Բ, ԵԺ, 2, էջ 478): Այլ բառերի ու-ով հոլովման ձևերը հնարանություն են և գրական լեզվում գործածվում են ոճական նկատառումներով: Օր.՝ Երբ լուսո դեմ կրակը հանդարտեց, խանձված ընկած էին Մանասի կինը, երեխան, կազակը (ԱԲ, Երկ., 1, էջ 126): Միայն լուսո աստղն էր պայծառ պլպլում կալվարի հեռավոր գազաթին (ՆՁԷ, էջ 188): Ու-ով ձևերը մասամբ պահպանվում են կաղապարային արտահայտություններում. հմմտ.՝ պատվո պահակ, պատվո տախտակ, սգո միախնդ և այլն:

6. Վա||ի. Վա հոլովման պատկանող բառերի թիվը ժամանակակից հայերենում հասնում է 40-ի: Վա||ի զուգադրությամբ կարող են հանդես գալ ամիս, անգամ, առավոտ, գիշեր, ժամ, ժամանակ, կեսօր, շաբաթ, պաս, ցերեկ, ուտիս, օր և սրանցից մի քանիսով բարդվող ձևերը (հմմտ. քաղօր, հեկեսօր և այլն):

Պետք է նկատի ունենալ, որ ժամանականիշ որոշ բառերի հոլովման հատկանիշը կայուն չէ. նրանք կարող են հոլովվել թե՛ վա և թե ի հոլովումներով: Հաճախ այդ տատանումներն իմաստային հիմք ունեն²⁴: Ստորև բերվող օրինակներում ընդգծված բառերի վա-ով կամ ի-ով հոլովումն ունի իմաստային պայմանավորվածություն: Օրինակներ՝ Նա մարսել էր ճաշվա կերակուրը (ԴԴ, ԵԺ, 3, 1977, էջ 274): Մովանը մի օր ճաշվա շոգին մոտեցավ Ջեյրանին (ՍՁ, ԵԺ, 1, էջ 384): Հրավիրում են ճաշի երկու կողմից (ՀԹ, ԵԺ, 5, էջ 267): Աշխատելու եմ գիշերվա

²⁴ Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Լ. Ա. Պառնայան, Հ. Ա. Օհանյան, *Եզված աշխ.*, հ. 2, էջ 95:

հերթափոխին (ՎԽ, ՄՄԷ, 1955, էջ 35): Առավուովա գնացքով դնում եմ (ՆԴ, ԵԺ, 3, էջ 155) և այլն: Նշված օրինակներում զուգաձև հոլովումը բացառվում է: Որոշ կիրառություններում նկատելի է իմաստային անհըստակոթյուն. օրինակ՝ նա իջավ և ճաշվա ամանները լվացող կանանց բարեկեղով՝ ... ասաց (ՍԽ, 2, 661, 1957) օրինակում «ճաշվա ամանը» ըմբռնվում է որպես «ճաշելու ժամանակից մնացած աման», թեև չի բացառվում, որ կհասկացվի և «ճաշաման»: Իմաստային նման անհստակոթյուն ունեն նաև հետևյալ օրինակները. նրանք սպասում էին ճաշի ժամերգությունը (ՆԴ, ԵԺ, 3, էջ 7): Ճաշի դեմ Թեկեթ հասան (ՆԴ, ԵԺ, 1, էջ 42) և այլն:

Վա հոլովման պատկանող բառերի ի-ով տարբերակներում ժամանակային իմաստը թույլ է արտահայտվում: Համոզվելու համար բերենք բնագրային համապատասխան վկայություններ:

Վա-ով բառաձևեր

Հովը սառնություն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին (ԱԲ, Երկ., 1955, էջ 97):

Ամառ գիշերվա վճիտ երկնքում փայլում էին աստղերը ... (Իս., Երկ., 3, էջ 296):

Փիլիպոս աղբարը ... տանում էր ինձ մանկապարտեզ, ձեռքիս կեսուրվա ճաշի սակառը (ՎՓ, Երկ., 1, էջ 45):

Էն ժամանակվա մարդն էլ աստվածավախ է եղել (ՍԽ, 2., էջ 709):

Քերականագիտությունը պետք է .. հնարավորին չափ ճիշտ արտացոլի տվյալ ժամանակվա իրական վիճակը (Ռ. Իշխ., ԱՀՀԽ, էջ 8):

Ի-ով բառաձևեր

Տների մութ զանգվածները լուսավորվում էին ցերեկի պես (ՆԴ, ԵԺ, 3, էջ 141): Բաժանեցիք իմ անբնության ժամերն ու ցերեկի ուրախությունները (ՍԿ, ՔԴՔ, էջ 432):

Ես գիշերի մասնագետ եմ (ԳՄ, ԵԺ, 2, 1967, էջ 42):

Եվ նա կեսուրի արևից տոշորվելով ճամփա ընկավ դեպի Մարուսյայենց տուն (ԴԴ, ԵԺ, 2, էջ 362):

Ուր է էն ժամանակի հորերը (ԱԲ, Երկ., 1955, էջ 366): Ինչ ահագին անջրպետ Պետերբուրգի կյանքի և այն ժամանակի գորշ ... լոնդոնի միջև (ՎՓ, Երկ., 1, էջ 376):

Անցումը «ամառային» ժամանակվա կատարվելու է ապրիլի 1-ի զրո ժամին (ՍՀ, 16/3, 1983):

Վերջապես մի կես ժամվա շափոսարջ տալուց հետո շոգեմակույզը մեզ քաշեց ափ (ՎՓ, Երկ., 1, 357):

Ոչխարը ագրեգատով խուզել, նըշանակում է չկարողանալ օգտորվել այս անգամվա խուզից (Սն, Հ, էջ 662):

Ժամանականիշ բառերի ի-ով հոլովումը հատուկ է բուն տրականի ձևերին. Օրինակներ՝ Սպասում եմ առավոտին (ՎԹ, ԿՀՀՃՎ, 1966, էջ 23): Նոր գարունֆին հայտնվում են նրա ձագերը (ՀԹ, ԵԺ, 3, 1949, էջ 96): Փոթորկային գիշերին հաջորդեց խաղաղ, լուսապայծառ առավոտը (Բ, ԵԺ, 7, 1956, էջ 515): Տրականի վան-ով կիրառությունն ավելի հատուկ էր նախորդ փուլի և XX դարի առաջին տասնամյակների գրական լեզվին: Օրինակ՝ Կեսուրվան արդեն մոտ է ... (ՀՀ, Բան., 1937, էջ 20): Ցերեկվան հաջորդեց գիշերը (ՎՓ, Երկ., 1, էջ 168): Որոշ կիրառություններ պահպանվում են և ներկա փուլում²⁵:

Երեկ, այսօր, վաղը բառերը, որոնք հոլովվում են վա-ով, վերջին շրջանում իմաստային տարբերակման հիման վրա սկսել են հանդես գալ և ի-ով. օրինակ՝ Դա ոչ թե անցյալի ամեն ինչն իդեալականացնող կարոտն է, այլ մարդկային հասկանալի կարոտն անցյալի մեջ եղած և այսօրին շատ անհրաժեշտ էթիկական-քաղաքացիական արժեքների հանդեպ (ԳԹ, 13/3, 1981, էջ 3-րդ):

Երբ վա հոլովման ենթարկվող բառերի լրացում են դառնում դրանց բառիմաստի հետ շանջվող երևույթներ, ժամանականշույթունն ավելի է

25 Հ. Աճառյանը այս հոլովման վերջավորությունը համարում է վան-ը, որ արեվելահայ գրականում դարձել է -վա: Ըստ նրա վան-ի և-ն սշփոթվել է որոշիչ հոդի հետ և կրճատվել. բայց նա նորից երևան է դալիս բացառականի մեջ: Տե՛ս Հ. Աճառյան, նշված աշխ., էջ 701—702: Գ. Զահուկյանը նույնպես և-ն համարում է հիմքակազմ տարր (աղջկա-ն, օրվա-ն). տե՛ս նշված աշխ., էջ 193:

Անցում «ամառային» ժամանակի (ՍՀ, 16/3, 1983):

Մարդիկ խոսում-գրուցում են մի ժամի շափ ... (ՍԶ, ԵԺ, 10, 1964, էջ 40):

Մի պաշտոնական գործով պետք է գնար Ախալցխա - հետաձգեց ուրիշ անգամի (ՀԹ, ԵԺ, 5, էջ 252):

ընդգծվում. նման օրինակներում ի-ով տարբերակները բացառվում են: Հմմտ՝... Մնակյանի խումբը գիշերվա ներկայացումից հետո, վաղուց գնացել էր (ՎՓ, Երկ., 1, 1979, էջ 11): Առավոտվա գնացումը մեկնում եմ (ՆԴ, ԵԺ, 3, էջ 155): Ցերեկվա փորձին բուրոպին անտեղի վիրավորեցի խեղճին (ՎՓ, Երկ., 1, էջ 36): Վա-ով ձևերում կարծեք ժամանակային ավելի. նեղ հատված է ընդգծվում. հմմտ՝ աղջիկ ժամանակվա (ՎՊ, ԳԱ, էջ 22), պատերազմի ժամանակվա (ՀՄ, Օգ., էջ 84), կես ժամվա ծանոթ (նույն, էջ 25), երկու օրվա, նեղ օրվա, առավոտվա 6-ին, երկուշաբթի օրվա և այլն:

Ի հոլովման ենթարկվող ժամանականիշ որոշ բառեր համաբանության գործոնի աղղեցությամբ խոսակցական լեզվում կարող են հանդես գալ և վա-ով: Օրինակներ՝ Երբ մարդը կես դարվա հիշողություն է ունենում, ապա նա արգեն հին մարդ է (ԳԹ, 7/8, 1979, էջ 1):

Այսպիսով, վա հոլովման պատկանող գոյականների՝ իմաստային հիմքով չպայմանավորվող տարբերակները ժամանակակից գրական լեզվում մեծ տարածում չունեն: Տարի, ժամ, պահ, դար բառերի ու-ով տարբերակները ժամանակակից գրական նորմայի տեսակետից կենսունակ չեն և ավելի հատուկ են նախորդ փուլի գրական լեզվին:

Ի-ով վերջավորվող կռոխ, Շուշի տեղանունները ժողովրդախոսակցական լեզվում ենթարկվում են վա հոլովման: կռոխ տեղանունը գրական լեզվում հաճախ հանդես է գալիս ու հոլովմամբ. Շուշի տեղանունը ու-ով ավելի սակավ է հանդես գալիս: Երկու բառն էլ ունեն ի-ով տարբերակներ. այսպիսով կռոխ, Շուշի տեղանունների հոլովման տարբերակները կռաշարք են. վա||ու||ի²⁶:

7. վա||ի. հայագետների մի մասը վա հոլովման մեջ է դնում և մահ բառը²⁷: Գ. Զահուկյանը վա և վա|| հոլովումները առանձնացնում է՝ վա-ի համար գործածության պայման համարելով իմաստային, վա||-ի համար՝ պատմական գործոնը²⁸: Մահ բառի հոլովման մեջ սովորականն ու չեզոքը վա||-ով ձևն է: Օրինակներ՝ Քաղաքը ինչու՞ պետք է քո մահվան լճի՞նը հաստատի (Իս., Երկ., 3, 1959, էջ 10): Ունում էր մահվան բուրբ (ԱԲ, Երկ., 1955, էջ 291—292): Երկու ընկերները լուռ

26 Մ. Արեղյանը գտնում է, որ ի-ով վերջավորվող հատուկ անունների վա-ով հոլովումը բարբառային ծագում ունի. Գառնի-Գառնվա, Անի-Անվա, Կարբի-Կարբվա և ուրիշ անունների վրա տարածվել ու կիրառվել է հետագայում (ՄԱ, նշված աշխ., էջ 345—346): նման որոշ կիրառություններ դարասկզբում առկա էին և այլ բառերում. օրինակներ՝ Նույս/վա (ԽՀ, 1921, № 238), Բագվա (ԽՀ, 1921, № 98) և այլն:

27 Տե՛ս Հ. Աճառյան, նշված աշխ., էջ 703: Մ. Արեղյան, նշված աշխ., էջ 346:

Գ. Սևակ, ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 270: Է. Աղայան, նշված աշխ., էջ 241:

28 Գ. Զահուկյան, նշված աշխ., էջ 191:

ու գուսպ լսել էին երեխաների տանջալից մահվան մանրամասնությունները (ԴԴ, ԵԺ, 3, էջ 255): Ի-ով տարբերակները կանոնական են, սակայն ընդհանրական չեն: Օրինակներ՝ Մի մտածիր մահի մասին (Իս., Երկ., 3, էջ 203): Նա սկսել էր մահի շփատել իր պաշտոնը (ՆԴ, ԵԺ, 1, էջ 157): Այնպես կապրես, որ մահի նման կլինի (ԴԴ, ԵԺ, 3, էջ 110):

Վան-ով կամ Ի-ով գործածությունը որոշ շփով պայմանավորվում է և գրողի անհատական ոճական նախասիրությունը: Օրինակ, Իսահակ-յանը նախապատվությունը տալիս է Ի-ով ձևերին: Նրա պատմվածքներում (Երկ., 3, 1959) կա մահի ձևի 7 կիրառություն (էջ 10, 16, 21, 48, 143, 203, 240), մահվան՝ 4 (էջ 10, 12, 14, 199):

Մահ բառի ու-ով հորովումը հնացած է և ունի ոճական արժեք: Օրինակներ՝ Հիշեցնում էր մահու սոսկալի ձայնը (Շիրվ., ԵԺ, 4, 1959, էջ 205): Մահու թևերով իջնում է գիշերը վանքի և աշխարհի վրա (ԳՄ, ԵԺ, 2, 1967, էջ 91): Ժամանակակից գրական լեզվում այն պահպանվում է կաղապարային որոշ արտահայտություններում, ինչպես, օրինակ, Մահու շփ, կենաց ու մահու կռիվ և այլն, թեև Ի-ով ձևերը թափանցում են և այդ ոլորտը. հմմտ.՝ կենաց ու մահի կռիվ (ՍԿ, ՔԴՔ, էջ 225) և այլն:

8. Յան/ի. հորովման նման տատանում ունեն գալուստ, ծնունդ, կորուստ, հանգիստ, փախուստ բառերը: Է. Աղայանը նշում է նաև առավոտ ու երեկո բառերը, թեև յան-ով սեռականը նա առհասարակ որակում է իբրև հնաբանություն²⁹: Ս. Աբրահամյանը յան հորովման մասին նշում է «Այլաձև հորովումներում», որպես ժամանակակից հայերենում այդ բառերի համար առավել օրինաշփոխ դարձած կամ դարձող այլ ձևերից շեղումներ³⁰: Նշված բառերի զուգաձև հորովումն ավելի հատուկ էր նախորդ ենթափուլի գրական լեզվին: Օրինակներ՝

Այդ գյուղաքաղաքը ծառայում է հայերին իբրև քաֆստյան անկյուն (Մուր., ԵԺ, 5, 1954, էջ 228—229):

Այդ օրհասական ընթացիկներում ամեն շնչավոր քաֆստի տեղ էր որոնում (Բ, ԵԺ, 7, 1956, էջ 171):

... Յույց տամ փախստյան ճանապարհը (Մուր., ԵԺ, 4, 1953, էջ 241—242):

Սա արդեն փախուստի մի ճանապարհ է (Մուր., ԵԺ, 1, 1951, էջ 309):

Երբ պիտի եկեղեցու երեկոյան

Ճանապարհ ընկավ դեպի Ս. Գե-

²⁹ Տե՛ս է. Բ. Աղայան, *Նշված աշխ.*, էջ 241—242:

³⁰ Տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնայան, Հ. Ա. Օհանյան, *Նշված աշխ.*, էջ 106:

զանգերը հնչեն (Իս., Երկ., 3, էջ 528):

վորդ, ուր և հասավ երեկոյից (ՂԱ, Երկ., 1979, էջ 185):

Հանկարծ եկեղեցու երեկոյի զանգերը հնչում են (Իս., Երկ., 3, էջ 526):

Հայերենի զարգացման ներկա փուլում ի-ով տարածվող ձևերի կողմին դեռևս պահպանվում են յան-ով ձևերը՝ որպես ոճական արժեք ունեցող տարբերակներ: Նկատվում է նաև, որ յան-ով ձևերը պահպանվում են առավելապես այն դեպքերում, երբ այդ բառերը հանդես են գալիս որպես գոյականի լրացում: Խնդրային կիրառություններին ավելի հատուկ են ի-ով ձևերը: Հմմտ.՝

Նրանց գալստյան լուրն արդեն հասել էր Նահապետին (ՀՔ, ՍԳ, 1965, էջ 153):

Սպասեց թշնամիների գալուստին (Իս., Երկ., 3, էջ 116):

Ներկայումս յան-ով ձևերն ունեն ածականացման կամ մակբայացման միտում. հմմտ.՝ հանգստյան տուն, երեկոյան դպրոց, ծննդյան տոներ, կգամ երեկոյան և այլն: Յան-ով որոշ կիրառություններ խիստ հնացած են. օր.՝ Հարկ է ժողովրդյան մեջ տարածել այս բանը (ՍԶ, ԵԺ, 7, էջ 30):

9. Ը > Ե || ի./Ը > Ե հոլովումը նույնպես հատուկ է գրաբարի հոլովման համակարգին: Նշված զուգադրությամբ տարբերակները պահպանվել են միայն կայսր և դուստր բառերում: Օրինակներ՝

Հելգին գնաց արոտավայր իր դըստերը տեսնելու (Իս., Երկ., 3, էջ 114—115):

Ակնարկում ցույց է տրված, որ Սեյիդի դուստրին պետք է վիճակվեր իր հոր մանկամարդ կնոջ բախտը (ԱԲ, Երկ., 1, էջ 644):

Պապը գլուխը խոնարհեց, ինչպես ընդունված էր կայսեր անունը լսելիս (ՍԶ, ԵԺ, 7, էջ 501):

Ճառագայթների մի խումբ ընկնում է կայսրի դամբին (Իս., Երկ., 3, էջ 464):

Ֆրանսիայի ապագա կայսեր երազանքները այդպես էլ չիրականացված մնացին (ՍԶ, 27/7, 1983):

... Պատուեց կայսրի նամակը (ն. տ., էջ 32):

Ե-ով ավանդական կազմութիւններն ավելի հատուկ են բարձր, վսեմ ոճերին, ի-ով ձևերը շեղոք են: Պահպանվում է նաև դուստր բառով բաղադրվող մի շարք հնակազմ կամ դրանց նմանակութեամբ ստեղծվող բարդութիւնների ե-ով հոլովումը. հմմտ.՝ աբխազացուք, իշխանաղբուտեր, խոստովանադատեր, լեռնադատեր (ՎՏ, Երկ., 1956, էջ 293) և այլն: Նշենք նաև, որ կայսր և դուստր բառերի ե-ով կիրառութիւնների պահպանումը մասամբ պայմանավորվում է այդ ձևերի ոչ համագործածական լինելու հանգամանքով³¹:

ՉՈՒԳԱՋԵՎԵՐԸ ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈՂՎՈՒՄ

Բացառականը կազմվում է կամ ուղղական, կամ սեռական-տրական հոլովներից: Տարբերակային ձևերն առաջանում են այն դեպքերում, երբ բացառականը կազմվում է նշված երկու հիմքերով էլ:

Այդպիսի կազմավորումներ ունենում են ու, վա, վաճ, ոչ հոլովման բառերը: Բացառականի զուգաձևերը, ի տարբերութիւն սեռական-տրականի, առաջանում են ոչ թե թեքույթների, այլ հիմքերի փոփոխութիւնների հետևանքով: Բացառականի հիմք են դառնում կամ սեռական-տրականի հիմքից տարբեր թեքույթներով կազմավորումները (հմմտ.՝ ձմռան + ից||ձմեռվա(ն) + ից, գարնան + ից||գարունֆվա + (ն)ից, կամ և՛ ուղղականի, և՛ սեռական-տրականի հիմքերով կազմավորումները (հմմտ.՝ սկեսուր + ից||սկեսուրչ + ից, առավոտ + ից||առավոտվա + (ն)ից, մահ + ից||մահվաճ + ից): Երկու դեպքերում էլ տարբերակային ձևերն ունեն միայն ից վերջավորութիւնը: Միայն ու հոլովման բառերի դեպքում է, որ առկա են բացառականի ից||ց զուգաձև թեքույթները (հմմտ.՝ բանալու + ց||բանալի + ից, դեղձեռու + ց||դեղձեռի + ից)³²:

ա) Վա հոլովման պատկանող բառերի բացառականի զուգաձևերը. վա հոլովման որոշ բառեր բացառականը կազմում են և՛ ուղղականի, և՛ սեռական-տրականի հիմքերից. երկու կազմութիւններն էլ կանոնական են: Սեռական-տրականի հիմքով կազմութիւններում ժամանակային իմաստը փոքր-ինչ ընդգծվում է: Օրինակներ՝ Այն օրից, երբ որդիները մեռան, նա այլևս մազերը չէր կտրում (ՍՋ, ԵԺ, 1, էջ 327): Եվ այդ օր-

31 Նշված բառերի ի-ով սեռ.-տր.-ը կազմվում է ուղղականի հիմքից: Սխալ է կայսեր թեքված ձևի վրա ի-ի հավելմամբ կայսերի ձևի կիրառութիւնը. օր.՝ կայսերի վերաբերմունքը հայտնի է իրեն (ՍՋ, ԵԺ, 7, էջ 596): Տերենտը իրավունք չհամարեց խոսել կայսերի մասին (ն. տ., էջ 600):

32 Ի. Իշխանյանը բացառականի հոլովակերտիչ համարում է ց-ն, ից, ուց, եից ձևերը դիտում է որպէս ց-ի տարբերակներ. տե՛ս նրա «Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը», 1971, էջ 30:

վանից Շուշանն աշխատում էր դեմառդեմ շմալ պարոնի հետ (ն. տ., էջ 339): Այդ օրից անցել է մի ամբողջ շաբաթ (ՆԴ, Եժ, 2, էջ 155—156): Այդ օրվանից ամեն ինչ միշտ լավատես հեռանկարով դատելու իմ սովորությունը կարծես բնություն է դարձել իմ մեջ (ՎՓ, Երկ., 1, էջ 21): Առավոտից բերանդ բան չես առել (ԳՍ, Թ, 1, 1953, էջ 480): Առավոտվանից բերանս բան չեմ դրել (ն. տ., էջ 220): Կեսօրից կարող ենք փորձերն սկսել: Կեսօրվանից կարող ենք փորձերն սկսել («Պիոներ», 1981, № 4, էջ 11):

Ժամանականիշ բառերի խնդրային կիրառությունների բացառականը կազմվում է ուղղականից: Օրինակներ՝ Գիշերից բավական անցել էր (Բ, Եժ, 6, 1956, էջ 236—237): Արևն արդեն թեքվել էր կեսօրից (ՆԶ, 2, 1955, էջ 73): Ժամանակի պարագայի իմաստով կիրառվելիս և երբևէ չհարցին պատասխանելիս նման բառերի բացառականը կազմվում է տրականի ձևից: Ս. Աբրահամյանը ճշտորեն նկատել է տալիս, որ «հաճախ ժամանակ ցույց տվող բառերի բացառականի՝ երկու հիմքերից որևէ մեկով կազմվելը պայմանավորված է իմաստային ու կիրառական որոշ նուրբ տարբերությամբ»³³:

Երեկ, այսօր, վաղը բառերի բացառականը որպես կանոն կազմվում է սեռական-տրականից: Վերջին շրջանում գործառության մեջ են դրվում և ուղղականի հիմքով կազմություններ, որոնք ունեն իմաստային տարբերակում: Օրինակ՝ Մաթևոսյանի այսօրը շատ բան ունի ժառանգած երեկից (ՍԸ, 27/9, 1979):

Տարի բառի բացառականը կազմվում է սեռական-տրականի տարու և տարվա ձևերից՝ տարուց||տարվանից. խոսակցական լեզվում կարող են հանդես գալ և ուղղական հիմքով կազմություններ՝ տարիից: Տարուց կամ տարվանից ձևի ընտրությունը մեծ մասամբ կախում ունի սրանց անշվող բառերից, շարահյուսական շրջապատից. հմմտ. Կզամ երկու տարուց (ՄԳ, ՄՍԱ, էջ 41): Այդ տարուց շատ բան են պատմում (ԱԲ, Երկ., 1, էջ 126): Քսան տարուց ավելի էր, որ Սմբատը հեռացել էր գյուղաքաղաքից (ՂԱ, Երկ., 1979, էջ 314): Տարուց||տարվանից ձևերը համարժեք են դառնում, երբ պատասխանում են երբևէ չհարցին և գործածվում են ժամանակի պարագայի իմաստով. հմմտ.՝ ...Վեց ամսում կովերի միջին կաթնատվությունը կազմել է 1590 կիլոգրամ՝ նախորդ տարվանից 114 կիլոգրամով շատ (ՍԸ, 18/8, 1983, էջ 3-րդ): Երևանում էլեկտրաէներգիայի արտադրանքը կտրուկ կերպով սկսել է ավելանալ քաղաքի ջերմաէլեկտրակայանի լրիվ շահագործման տարուց (ՍՄ, 1979, № 1, էջ 68):

33 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Ե. Ա. Պառնասյան, Լ. Ա. Օհանյան, Ելած աշխ., էջ 96:

Սեռական-տրականում երբեմն վա հոլովմամբ հանդես եկող բոլոր, դար բառերի բացառականը կազմվում է ուղղականի հիմքով՝ բոլորից, դարից, քանի որ այս բառերը ժամանականիչ են, բայց պատկանում են ի հոլովման: Ժամ բառի բացառականը նույնպես կազմվում է ուղղականի ձևից՝ ժամից:

բ) վաև հոլովման պատկանող ման բառը նույնպես բացառականում ունի զուգահեռ կազմութուն՝ մահից||մահվանից: Օրինակներ՝

Մահից առաջ մի քանի խոսք
ասաց միայն (ՍԶ, ԵԺ, 1,
1960, էջ 333):

Քնարիկը Մնակյանի մահվանից
հետո վերադարձավ դեպի մայրենի լեզուն (ՎՓ, Երկ., 1, էջ 215):

Ինքը միշտ վախեցել է մահից
(Իս., Երկ., 3, էջ 179):

... Մահվանից մի քանի օր առաջ,
ընկերներով եղանք այն հիվանդանոցում, ուր պատկած էր
Զորյանը (Ս. Աղաբաբ., Դիմանկարներ, հուշեր, 1982, էջ 208):

Առավել տարածված է ուղղականի հիմքով (մահից) կարճ կազմության գործածությունը:

գ) Ոչ հոլովման պատկանող բառերի բացառականը կազմվում է սեռական-տրականի հիմքով: Հանդիպում են և ուղղականի հիմքով որոշ կազմություններ: Օրինակներ՝ Հանդիմանություն ստացավ նրա սկեսուրից (ՆԴ, ԵԺ, 3, էջ 61): Նա հայացքը աիկիներից դարձրեց ակամա դեպի պարոնը (ՍԶ, ԵԺ, 1, 1960, էջ 349): ... Զիբըր Սամսոնը նոր էր ստացել Մոսկվայի մի հայտնի գործարանատերից (Շիրվ., ԵԺ, 4, էջ 377): Տուրգենևն ասում է, որ Բազարովի տիպը վերցրել է իր հարևան մի բժիշկ կալվածատերից (Շիրվ., ԵԺ, 9, 1955, էջ 482): Նա չէր կարող թաքցնել իր մտերիմ ընկերից և բարեկամից իր ընտանեկան խճճված հանգամանքները (ՂԱ, Երկ., 1979, էջ 323):

Խոսակցական լեզվում առավել տարածված ապից, սկեսուրից՝ ուղղականի հիմքով կազմությունները միտում ունեն կայունանալու նաև գրական լեզվի գրավոր տարբերակում: Տեղ բառի բացառականը կազմվում է ուղղականի հիմքով:

դ) Ո հոլովման բառերի բացառականը նույնպես կազմվում է սեռական-տրականի հիմքով: Երբեմն հանդիպում են և ուղղականի հիմքով կազմություններ. օրինակ՝ ծծմայրից (Բ, ԵԺ, 9, 1964, էջ 355): Սխալ է

աղբիկից (Ր, ԵԺ, 9, էջ 324) կազմութիւնը: Խոսակցական ոճի է սերից
ձևը. հետևյալ օրինակում նման կիրառութիւնը ծառայում է հանգավոր-
ման նպատակին. «նա՛, մամիկ, ասա յարիս՝ հաջեզարեն քո սերից,
Այս էլ քանի ծարավ գարուն աղբյուր հանեց աչքերից (ՀՇ, ՍԽ, 1955,
էջ 20):

Ե) Ու հոլովման պատկանող բառերի բացառականը կազմվում է
սեռական-տրականի հիմքով: Հանդիպում են նաև ուղղականի անփոփոխ
հիմքով կազմություններ. հմմտ.՝ տեսականուց||տեսականիից (ՍԿ, ԽԺ.,
էջ 159), Գրոզնուց (ՀՄ, Մ, էջ 425) և Գրոզնիից, լեզուց||լեզիից, սոնուց||
սոնիից, ածելուց||ածելիից և այլն: Ու հոլովման մի շարք բառերի բա-
ցառականի ից-ով կազմութիւնը կարծեք ավելի սովորական է. հմմտ.՝
շոգուց||շոգիից, կանաչուց||կանաչիից, աղուց ||աղիից, հնոտուց||հնոտի-
ից, կիսանդուուց||կիսանդիից և այլն: Ուղղականի հիմքով կազմվում-
ները աստիճանաբար տարածում են գտնում նաև մի շարք փոխառյալ
բառերում և լի, ելի ածանցներով ածականների փոխանվանական կիրա-
ռութիւններում մասամբ համաբանութիւն գործոնի ազդեցութեամբ, մա-
սամբ էլ քերականական համանունութիւնից խոսափելու պահանջով.
հմմտ.՝ հաջուց||հաջիից, շաշկուց||շաշկիից, տաֆուց||տաֆսիից, սիրե-
լուց||սիրելիից, շնորհալուց||շնորհալիից, ամուրուց||ամուրիից և այլն:
Որոշ փոխանունների ու-ով հոլովումն արդեն անսովոր է ու հնացած.
օրինակ՝ Մեծ պասի առաջին կիրակուց սկսվեցին ներկայացումները
(Շիրվ., ԵԺ, 5, 1959, էջ 34):

Լոռի, Շուշի տեղանունների բացառականում գործում են Լոռուց||Շու-
շուց, Լոռիից||Շուշիից տարբերակները: Վա-ով ձևերն հատուկ են միայն
սեռական-տրականին: Սա նշանակում է, որ նշված բառերը, որպես ի-
ով վերջացող բառեր, ու հոլովման են:

Գրական լեզվում լայն տարածում ունի անկողնուց||անկողնից մըր-
ցակցող ձևերի գործառութիւնը: Օրինակներ՝ Վեր կացավ անկողնից
(ՍԶ, ԵԺ, 1, էջ 302): Քեռի Թորոսը մի կերպ անկողնուց պոկվեց (ՄԳ,
ՄՍԱ, էջ 31):

Տարվա եղանակների անվանումների բացառականը կազմվում է սե-
ռական-տրականի տարբերակային երկու ձևերից՝ ամառնից, ամառվա-
նից, ձմառնից, ձմեռվանից: Հնացած ու հազվադեպ են ուղղականի հիմ-
քով հանդիպող կազմությունները. օր.՝ Նա լուրջ, խոհեմ կերպով.. հա-
շիվ է պահանջում իր կրակոտ երիտասարդ եղբորից՝ ամառնից (ՂԱ,
Երկ., 1979, էջ 613): Փոխանվանական կիրառութիւնների բացառականը
նույնպես կազմվում է ուղղականի հիմքով. օր.՝ «Գարունից» ստացվել է
ահազանգ:

Գործիականն ունի երկու վերջավորություն՝ ով և բ: Հիմնականը ցուցիչն է ով-ը. բ- են ստանում -ուրյուն ածանցով բառերը: Գործիականում զուգաձև հոլովմամբ կարող են հանդես գալ՝ -ում ածանցով բայանունները, -ուրյուն ածանցով բառերը, արյուն, անուն, մահ բառերը: Քննենք սրանցից յուրաքանչյուրի զուգաձևության դրսևորման առանձնահատկությունները:

ա) -ում ածանցով բայանուններ. Հայերենի քերականագիտական աշխատություններում բայանունների գործիականի զուգաձև կազմության վերաբերյալ արտահայտվել են տարբեր կարծիքներ: Պալասանյանը հարցում բառի հոլովման հարացույցում դնում է գործիականի բ-ով ձևը, թեև նշում է և ով-ով կազմության մասին³⁴: Հեղինակի լեզվում առկա է միայն բ-ով կիրառություն: Գ. Վանցյանը իր «Դպրոցական քերականություն» մեջ (Թիֆլիս, 1906) հոլովման հարացույց չի ներկայացնում. բայանունների գործիականի զուգաձև կիրառություն առկա է նրա «Պատմական քերականություն արևելահայ լեզվի» (Թիֆլիս, 1906), աշխատության մեջ. օր.՝ ծագումով (էջ 124), սղումով (էջ 209), մշակումով (էջ 210) և ներշնչմամբ (էջ 93), մոռացմամբ (էջ 149), արտաշնչմամբ (էջ 151) և այլն:

Մ. Աբեղյանը գործիականի ով վերջավորությունը ընդհանուր է համարում բոլոր բառերի համար³⁵: Նրա գործածած բայանունների գործիականը, համաձայն իր իսկ նշած կանոնի, ունի միայն ով վերջավորությունը: Հ. Աճառյանը նշում է տարբեր հոլովաձևերի կազմության տատանումների յուրահատկությունները արևմտահայ ու արևելահայ գրական տարբերակներում. մասնավորապես գործիականի մասին նա գրում է. «Գործիականը արևմտահայ գրականում լինում է երկու ձևով՝ -մամբ և -ումով (շարժմամբ, շարժումով), իսկ արևելահայ գրականում՝ ավելի-ումով ձևն է սովորական³⁶: Հեղինակային խոսքում ևս կան տատանումներ. անկումով (էջ 398), հոլովմամբ (էջ 402): Գ. Սևակը բայանունների գործիականի վերջավորությունը թեև համարում է գրաբարյան բ-ն³⁷, սակայն նրա աշխատության մեջ ևս հանդիպում են գործիականի զուգաձև կիրառություններ. հապավումով (էջ 185), գեղչումով (էջ 191), անկումով (էջ 302), ուրվագծումով (էջ 323) և՛ որոշմամբ (էջ 265), հա-

34 Տե՛ս Մ. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1906, էջ 109—110:

35 Մ. Աբեղյան, նշված աշխ., էջ 345:

36 Հ. Աճառյան, նշված աշխ., էջ 700:

37 Գ. Սևակ, նշված աշխ., էջ 267—268:

վելմամբ (էջ 273): է. Աղայանը բայանունների բ-ով ձևերը համարում է հնաբանություն³⁸ և վերջին շրջանի իր աշխատություններում հետևողականորեն գործածում է բայանունների գործիականի ու վերջավորությունամբ ձևերը: Գ. Զահուկյանը բայանունների գործիականում արձանագրում է զուգաձև կազմություն³⁹: Հարցի պատմության այս համառոտ քննությունից իսկ երևում է, որ բայանունների զուգաձևությունը, որը պայմանավորվում է լեզվի կառուցվածքային հնաբանությունամբ, իր արտացոլումն է գտնում նույնիսկ լեզվաբանական աշխատություններում: Կանոնաբեկման առանձին փորձերը փաստորեն իրական վիճակը չեն արտացոլում:

Բայանունները հիմնականում գործառում են գիտական, հրապարակախոսական ոճերում: Գիտական ոճում տարբերակների գործառություն վերաբերյալ օբյեկտիվ տվյալներ ստանալու նպատակադրությամբ կատարել ենք վիճակագրական քննություն: Ստորև ներկայացվող № 7 աղյուսակն արտացոլում է քերականագիտական աշխատություններում առկա զուգաձևությունը: Բավարարվել ենք յուրաքանչյուր աշխատության 100 էջում գործածված բառաձևերի միանգամայա կիրառությունների նըշումներով. (տե՛ս էջ 187):

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից⁴⁰, գիտական ոճում բայանունների գործիականի ու վերջավորությամբ ձևերի գերակշռությունը նշանակալից չէ: Գործիականի միաձև կազմություն առկա է միայն այն աշխատություններում, որոնց հեղինակները մշակել են զուգահեռ ձևերից միայն մեկը, ավելի տարածվածն ընդունելու համապատասխան տեսակետ: Սակայն այդ կանոնաբեկումը, գործիականի միայն - ու վերջավորության ընդունումը չի վերացնում լեզվում դեռևս գործող այս երևույթը: Ինչպես երևում է աղյուսակից, քերականագետների մի մասը զուգահեռ ձևերից նախապատվությունը տալիս է բ-ով ձևերին:

Այսպիսով, գիտական ոճում բ-ով ավանդական ձևերը դեռևս բավական կենսունակ ու գործուն են: Գործիականի զուգաձևերը գործառում են և հրապարակախոսական ոճում. օրինակներ՝

38 է. Աղայան, նշված աշխ., էջ 246:

39 Գ. Զահուկյան, նշված աշխ., էջ 194:

40 Գրի չեն առնվել այն բայանունները, որոնք զուգաձև հոլովում շունեն: Հայտնի է, որ գրաբարյան գործիականի բ վերջավորությամբ որոշ անուններ վերածվել են կապական բառերի կամ մակբայների, ինչպես, օրինակ, սխալմամբ, վերաբեմամբ, պատահմամբ, դիմամբ, իրավամբ, նկատմամբ և այլն: Պահպանված նույնարմատ գոյականների գործիականը կազմվում է միայն ու վերջավորությամբ: Օրինակներ՝ Քերականական ձևերի ընտրությունը պատահաբար և հատուկ դիտարկում չի կատարվում (ՀԱ, իՔ, 3, էջ 532): Իմ խղճի կամ համոզումների հակառակ չեմ գնա երբեք և ոչ մի նկա-

բ-ով ձևեր

ստուգմամբ (ՍՀ, 11/3, 1979) մաքրագործմամբ, մտահղացմամբ, մարմնավորմամբ, կատարմամբ, կիրառմամբ, զուգահրմամբ, զարգացմամբ (ՍՀ, 15/3, 1979), ներկայացմամբ, բնութագրմամբ, բացահայտմամբ (ՍՀ, 26/5, 1979), պատկերազարդմամբ, դերակատարմամբ (ԳԹ, 9/2, 1979), ընթերցմամբ, պատճենահանմամբ (ԳԹ, 25/5, 1979), զգացմամբ (ԳԹ, 1/2, 1980):

ով-ով ձևեր

գունավորումով, դերակատարումով, ընդգծումով, բերումով (ՍՀ, 26/5, 1979), ղեկուցումով (ՍՀ, 27/5, 1979), գրավումով (ՍՀ, 2/6, 1979), որոշումով (ՍՀ, 7/7, 1979), կատարումով, ծավալումով (ՍՀ, 8/7, 1979), մաքառումով (ԳԹ, 18/5, 1979), դասակարգումով (ԳԹ, 20/7, 1979), հիմնավորումով (ԳԹ, 5/9, 1979):

Այժմ տեսնենք, թե ինչպիսին է բայանունների գործիականի զուգահեռ ձևերի հարաբերակցությունը գեղարվեստական արձակում (Աղ. № 8, տե՛ս էջ 188): Աղյուսակը ներառում է զարասկղբից մինչև 70-ական թվականների արձակի առանձին նմուշները:

Աղյուսակից երևում է, որ ա) գեղարվեստական արձակում ևս ընդհանրականն ու տարածվածը բայանունների ով վերջավորություններ գործիական է. բ) մի շարք գրողներ բ-ով ձևեր չեն գործածում. գ) շատերի մոտ կա բ-ով մի քանի կիրառություն. դրանք հիմնականում մակբայացման միտում ունեցող բառերն են՝ դրդմամբ, բնագղմամբ, հիացմամբ և այլն. դ) միայն առանձին գրողներ են, որ նախապատվությունը տալիս են բ-ով ձևերին: Տարբեր ժամանակներում ստեղծագործող հեղինակների լեզվում բայանունների նման կիրառությունները հաստատումն են այն փաստի, որ քերականական լուգաձևերը դանդաղ են փոփոխության ենթարկվում:

Ընդհանուր առմամբ ժամանակակից արևելահայ գրական լեզվում բայանունների ով-ով կիրառությունները աստիճանաբար ձեռք են բերում բ-ով ձևերը դուրս մղելու և բոլոր ոճերում հաստատվելու միտում:

բ) -Ուրյուն ածանցով բառեր. -ուրյուն ածանցով բառերը ըստ գործող կանոնի գործիականում ստանում են բ, որ կազմվում է սեռական-տրականի հիմքով: XIX դ. վերջին և XX դ. առաջին տասնամյակ-

առումով (ՎՏ, էջ 651): Դիտմամբ և դիտումով, եկատմամբ և եկատումով ձևերը բնականաբար զուգաձևեր համարվել չեն կարող: Նկատի չենք առել նաև ընդհանուր առմամբ, այս առումով, այն առումով և նման կայուն բառակապակցությունները:

Աղբյուրներ	ով-ով ձևեր	բ-ով ձևեր
Մ. Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965	10	—
Հ. Անտոյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957	1	2
Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, հ. 1, Երևան, 1962	22	4
Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հա- յերենի քերականություն, Երևան, 1975	18	1
Է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967	12	—
Հ. Խ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մա- սերի ուսմունքը, Երևան, 1980	2	27
Ի. Ա. Իշխանյան, Արևելահայ բանաս- տեղծության լեզվի պատմություն, Երևան, 1978	3	9
Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հա- յերենի տեսության հիմունքները, Երե- վան, 1974	7	16
Ընդամենը՝	75	59

ների գրական լեզվում մեծ տարածում ունեին նշված խմբի բառերի գործիականի նաև —ով վերջավորությամբ կազմությունները. Բերենք օրինակներ գործառական տարբեր ոճերից. ընդունակությունով (ՄՊ, Քեր., էջ 7), ֆեռականությունով (ԳՎ, ՊՔ, էջ 56), կրթությունով (ՄԱ, ՀԼՏ, էջ 57), բարեփոխությունով (Ն. տ., էջ 122), նվիրատվությունով (ԽՀ, 1921, № 168), զորությունով (ՂԱ, Երկ., 1979, էջ 104), խոսակցությունով (Ն. տ., 106), լրեսությունով (Ն. տ., 146), կենդանությունով (Ն. տ., 3/2), կարգադրությունով (ՀԹ, Եժ, 4, 1951), դառնությունով (Ն. տ., էջ 131), անօրինությունով, գիտությունով (Ն. տ., 139), ուղղագրությունով (Ն. տ., 202), կանոնադրությունով (Ն. տ., 221), պատմությունով (Ն. տ., 243), հաղթությունով (Շիրվ., Եժ, 4, 1959, էջ 160), գեղեցկությունով (Շիրվ., Եժ, 5, էջ 322), միջամտությունով (ՆԴ, Եժ, 3, էջ 203), երկյապաժությունով (Իս., Երկ., 3, էջ 25), անձնուրացությունով (ՎՏ, Երկ., էջ 468), հայաբարոությունով (ԵԶ, Եժ, 5, էջ 211), նախադասությունով (Ն. տ.,

Աղբյուրներ	ով-ով ձևեր	բ-ով ձևեր
Ա. Երվանդազն, Երկերի ժողովածու, հ. 4	—	5
Կար-Դուս, Երկերի ժողովածու, հ. 3 («Մահը»)	12	1
Ա. Իսահակյան, Երկեր, հ. 3	15	—
Ե. Չարենց, Երկերի ժողովածու, հ. 5	4	1
Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 2	9	2
Ս. Զորյան, Երկերի ժողովածու, հ. 10	11	—
Ա. Բակունց, Երկեր, հ. 1	1	—
Ն. Զարյան, Հացավան	16	3
Գ. Մաճարի, Երկերի ժողովածու, հ. 2	11	—
Վ. Թորոզենց, Կյանքը հին հոմեական ճանապարհի վրա	2	—
Վ. Անանյան, Հին վրանի փորրիկ բնա- կիչը	5	3
Ս. Կապուտիկյան, Խճանկար հոգու և բարտեղի գույներից	38	9
Հ. Մաքեոյան, Մառերը	3	6
Ընդամենը՝	127	30

էջ 222) և այլն⁴¹: —Ուրշուն ածանցով բառերի գործիականի զուգածև հո-
լովման փաստը նշվում է այդ մասամբ էլ՝ հետագա շրջանի բերականա-
գետների աշխատություններում: Պալասանյանը ընկերություն բառի հո-
լովման հարացույցում նշում է գործիականի բ-ով ձևը՝ ընկերությամբ,
իսկ Գ. Վանցյանը հարացույցում դնում է -ով վերջավորությամբ ձևը՝
լավությունով, տողատակում ավելացնելով նաև, որ «շատ անգամ այս
հոլովը վերջանում է յամբ, որ սեռականի նման առնված է գրաբարից.
լավությամբ, բարություն, շարություն, որովհետև սա ավելի կարճ է,
քան վերևինը»⁴²: Հ. Աճառյանը գրում է. «-ուրշուն հանգով բառերի գոր-
ծիականը արևմտահայ գրականում անցյալ դարու առաջին կեսում լի-
նում էր -բենով. ինչպես. մեծութենով, զորութենով, թեթևութենով (Այտն.,
Քնն, քեր., Բ, 10): Բայց այժմ սովորական է զորություն, որ գրաբարի

41 Հ. Թումանյանի հոդվածներում (Եժ, հ. 4, 1951) -ուրշուն ածանցով բառերի
գործիականի բ-ով ձևերը կիրառվել են 25, ով-ով ձևերը՝ 31 անգամ:

42 Տե՛ս Ս. Պալասանյան, Նշված աշխ., էջ 110: Գ. Վանցյան, Դպրոցական բերա-
կանություն, Թիֆլիս, 1906, էջ 17:

ձևն է: Արևելահայ գրականում ընդհակառակը ավելի սովորական է -ուրջունով, քան թե գրաբարածե -ուրջամբ»⁴³; Գ. Սևակն ընդունում է և՛ գրաբարյան բ-ն, և՛ ուլ-ը⁴⁴; Լեզվի զարգացման ներկա փուլում -ուրջունը ածանցով բառերի գործիականի ու վերջավորությամբ կաղ-մությունները գրավոր տարբերակում խիստ սահմանափակ կիրառու-թյուն ունեն: Գիտական և հրապարակաստական ոճերում բացար-ձակորեն գործառում են բ-ով ավանդական ձևերը. ուլ-ով ձևերն հազվա-դեպ են, և կարելի է դիտել որպես ներթափանցումներ խոսակցական ոճից. Օրինակներ՝ Եվ դեպի ուր է ընթանում տիեզերական այս ահեղ

Ա Ղ Յ Ո Ս Ա Կ Մ Ձ

Աղբյուրներ	բ-ով ձևեր	ուլ-ով ձևեր
Իսահակյան, Երկ., 3, պատմվածքներ, 1959	51(68)	3
Բակունց, Երկ., 1, 1976, «Մթնածոր» շարքը	14(17)	—
Ս. Զոռյան, Եժ, հ. 1, 1960, «Ենձորի այգին» շարքը	26(43)	—
Հ. Քոչար, Ընտիր Լրկեր, հ. 1, 1975, էջ 243—300	35(46)	—
Վ. Պետրոսյան, «Գեղատուն «Անի» 1973, էջ 3—105	16(17)	—
Մ. Գալշոյան, Մարութա սարի ամպերը, 1981, էջ 6—105	6(7)	—
Հ. Մարեոսյան «Օգոստոսից»՝ «Մենք ենք, մեր սարերը» վիպակը	18(18)	—

մեքենան իր ծնման ու ոչնչացման հերթափոխությունով (ՍՄ, 1979, № 2, էջ 591): Այս փոփոխությունը պայմանավորվում է հայերենի խո-նարհման համակարգում նկատվող ժխտական կաղմության օրինաչափու-թյունով (ԲՆՀ, 1975, էջ 61): Ինչո՞ւ վ բացատրել. ամենից առաջ մեր դպրոցներում արմատավորված վատ սովորությունով (Գար., 1983, № 1, էջ 24): Այս առաջնությունով սկսվեց նաև 1984-ի օլիմպիական խաղերի նախապատրաստության առաջին փուլը (ՍՀ, 13/2, 81, էջ 4-րդ) և այլն: Գեղարվեստական արձակում ուլ-ով կիրառությունները խոսակցական լեզ-վի արտահայտություն են. օրինակ՝ վարժապետությունով ի՞նչ դուրս կգա (ԴԴ, Եժ, 2, էջ 16): Գողությունով փոր չի կշտանա (ՆՁ, Հ, էջ 525): ...

43 Հ. Անտոյան, Նշված աշխ., էջ 699—700:

44 Գ. Սևակ, Նշված աշխ., էջ 267—268:

Պարոնը ավելի է հետաքրքրվում իրենով, իր որպիսությունով (ՍՋ, ԵԺ, 1, էջ 340) և այլն:

Ցույց տալու համար, որ ներկա փուլում –ուրյուն ածանցով բառերի գործիականի կազմութուններում բացարձակ գերակշռություն ունեն բ-ով ձևերը, № 9 աղյուսակում ներկայացնում ենք գեղարվեստական արձակում դրանց գործառութունների քանակական բնութագրերը: Նախ տրվում է յուրաքանչյուր բառաձևի միանգամյա գործածության քանակը, փակագծերում նշվում են բոլոր կիրառութունները: (Տե՛ս էջ 189):

Չպիտակ խոսքում այս ղուգաձևերը ևս, պահպանելով հանդերձ իրենց ոճական յուրահատկութունները, ծառայում են նաև հանգի, ուրիշ-մի, վանկաքանակի ու բարեհնչունության պահպանման նպատակներին: Օրինակներ՝

Գարնան անուշ, աղմուկով,
Գարնան երգով դու եկար.
Փայլով, փառքով ու շուքով,
Խնդությունով խելագար:

Սիրտըս անուշ խոցեցիր
Արևավառ քո սրով,
Սև օրերըս այրեցիր
Գեղեցկությամբ ու սիրով
(ՎՏ, Երկ., էջ 198):

Լեզվի զարգացման ներկա փուլում նկատվում է –ուրյուն ածանցով բառերի գործիականի ու վ բ վերջավորութունների՝ իմաստային հիմքով պայմանավորվող բաշխում: Վերացական⁴⁵ գոյականները որպես կանոն հոլովվում են բ-ով: Թանձրացական գոյականները (կոլտեստեսութուն, հիմնարկութուն, մինիստրոթուն, տեսչութուն, դեսպանութուն, Մովեստական Միութուն, երգչախմբային ընկերութուն և այլն) գործիական հոլովով քիչ են կիրառվում: Սակավ հանդիպող օրինակներում գործիականը կազմվում է ու-ով. օրինակ՝ ... Մուգ կարմիր երամակը բծավորվել էր կրակագույն անհանգիստ քուռկիկներով, որոնք պոկվում էին սարահարթի այն ծայրից ու նարնջե բոցիկներ էին շաղ տալիս կանաչ փառքությունով մեկ (ՀՄ, Օգ., էջ 282): ... Ամբողջ փառքությունով մեկ տարածվեց մահվան բոթը (Ս. Աղաբաբյան, Հողվածներ, դիմանկարներ, հուշեր, 1982, էջ 232): Հպարտանալ կոլտեստեսությունով, շրջագայել Մովեստական Միությունով: Փոխանվանական կիրառություններում ընդհանրականը ու վերջավորությամբ կազմություններն են. օր.՝ անցնել դատախազությունով, Բարեկամությունով:

գ) Անուն (ազգանուն), առյուն բառերի բ-ով ձևերն ավանդական են, սակայն հնացած չեն և գործառում են տարբեր ոճերում, հատկապես

⁴⁵ Թանձրացական և վերացական գոյականների տարբերակման մասին տե՛ս Ս. Գ. Արահամյան, Ժամանակակից գրական հայերեն, 1981, էջ 135:

հանդիսավոր, հոետորական խոսքում, գիտական ոճերում: Օրինակներ՝ Ինչպես փնտրենք մեր անհամար զոհերի արչամբ ներծծված հողը (ՄԿ, ՔԴՔ, 1964, էջ 399):

Այդպիսի փորագրությունն նույն այդ բարդենու վրա կատարել էին և ուրիշները՝ Վասակի անունը փոխարինելով իրենց անվամբ (ՆԶ, Հ, էջ 370): Եղանակավորող բառերը ճանաչվում են որպես եղանակական մակբայներ և այդ անվամբ մտցված են նյութական նշանակության բառերի մեջ (ՀԲ, ՀեՄՈԻ, էջ 187): Առավել տարածվածն ու վերջավորությամբ կազմություններն են:

Ձմռամբ ձկն հնարանություն է և ունի խիստ ընդգծված ոճական արժեք. օրինակ՝ Ձմռամբ քննիչ շես վախեցնի (ՀՄ, Օգ., էջ 70): Հնացած պետք է համարել և մահվամբ ձկն կիրառությունը. օրինակ՝ Եվ ահա պատանի Հովնաթանը, ցնցված պապի մահվամբ, հանդգնեց քանդակել նրա կիսանդրին (Վ. Թոթ., Երկ., 1957, էջ 194):

Վա հոլովմամբ հոլովվող ժամանականիշ մի շարք բառերի (գիշեր, ցերեկ, առավոտ, ձմեռ, աշուն, ժամանակ և այլն) գործիականը կազմվում է առանց վա-ի. այդ ձևերն ունեն մակբայացման միտում: Օրինակներ՝ Գիշերով... դուրս եկավ տնից (ԱԲ, Երկ., 1, էջ 33): Զինվորները վերադառնում էին գիշերով, ծածկվում էին ցերեկով մարագներում... (Ն. տ., էջ 58): Հայրս ամոթից ցերեկով ոտը շեմից դուրս չէր դնում (ՀՔ, ԸԵ, 1, էջ 332): Այդ խոր ձմեռով նանարի համար մի հատ սպիտակ ձու էր բերել (ՀՄ; ՄՎ, 1978, էջ 172): Ուշ աշունով ծառին կեռաս էր գտել (Ն. տ., էջ 21):

դ) Ոչ հոլովման ենթարկվող բառերի գործիականը որպես կանոն կազմվում է սեռական-տրականի հիմքով. սակայն կիրառելի են նաև ուղղականի հիմքով կազմությունները. օրինակ՝ Երկու ընկերով գնում էինք հինավուրց բլրի տակով (Իս., Երկ., 3, էջ 50): Սակայն երկու ձևերի գործառությունն էլ նշված հոլովում սահմանափակ է:

ՀԵՉՅՈՒՆԱՓՈՒՎԱԾ ԵՎ ԱՆՀԵՉՅՈՒՆԱՓՈՒՆ ԸՄՔԵՐՈՎ
ՀՈՂՈՎԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Հայտնի է, որ բառակազմության կամ բառի թեքման ժամանակ շեշտի դիրքի տեղափոխության հետևանքով շեշտակորույս փակ վանկերի ու և ի ձայնավորները կամ սղվում են, կամ փոխվում գաղտնավանկ ը-ի: Սակայն շեշտի հետևանքով կատարվող փոփոխությունները գործող օրինաչափությունն են եղել հին հայերենում: Ժամանակակից գրական հայերենում շեշտափոխական հնչյունափոխության ոլորտը խիստ նեղացել է: Ինչպես նշում է Գ. Զահուկյանը, «Ժամանակակից հայերենում

դրանք պահպանվել են մասամբ, շատ դեպքերում ժառանգվելով պատ-
րաստի ձևով, այդ պատճառով էլ բառակազմության ժամանակ նման
փոփոխություններ առկա են ավելի հաճախ, քան ձևաբանական փոփո-
խությունների ժամանակ»⁴⁶։ Ժամանակակից հայերենում շեշտափոխա-
կան հնչյունափոխության ենթարկվում են հատկապես ու և ի ձայնա-
վորները։ Հոլովման ժամանակ հնչյունափոխված ու անհնչյունափոխ
հիմքերով հանդես են գալիս հիմնականում ի հոլովման պատկանող մի
շարք բառեր. հմմտ. բլրի||բլուրի, կամրջից||կամուրջից, հովաթի||հովաթի,
թախծի||թախիծի և այլն։ Որոշ տատանումներ առկա են ու հոլովման
բառերի գործիական և ներգոյական հոլովածներում. հմմտ. խնուղով||
խնուղիով, երկաթուղով||երկաթուղիով, հայելում||հայելիում, այգում||այ-
գիում և այլն։ Երբեմն այդ տարբերակները հանդես են գալիս համա-
տեքստի նույն հատվածում. օրինակ՝ Մեկը մի բլրի վրա, մյուսը ուրիշ
բլուրի վրա, իրարից ահագին հեռու, սխեցիկ կովել... (ԳԹ, 11/12,
1981)։ Այսպիսի տարբերակներին հայերենի քերականագիտական աշ-
խատություններում տրվել են հնչյունական զուգաձևեր⁴⁷, հնչյունաբանա-
կան զուգաձևություններ⁴⁸ անվանումները։

Կարելի է տարբերակել գրական կանոնի տեսակետից հավասարա-
թեք և ոչ հավասարաթեք հնչյունական զուգաձևեր։ Հավասարաթեք
(կամ գրեթե հավասարաթեք) են այն զուգաձևերը, որոնց և՛ հնչյունա-
փոխված, և՛ անհնչյունափոխ հիմքերով կազմությունները գրական ու
կանոնական են. հմմտ.՝ քմբի||քումբի, բլրի||բլուրի, քալչի||քավիչի,
թախծի||թախիծի, երկաթուղով||երկաթուղիով, լռում||լռիում և այլն։
Անհավասարաթեք են այն զուգաձևերը, որոնց հնչյունափոխված հիմ-
քերով ձևերը գրական կանոնից դուրս են (բարբառային, ժողովրդախո-
սակցական կամ հնացած ձևեր են). հմմտ.՝ լնգի (ՀՄ, Օգ., էջ 171), եղնչի
(ՀՄ, ՄՎ, էջ 135), անդնդի (ԴԴ, ԵԺ, 3, էջ 52), քալփի (ՂԱ, Երկ., 1979,
էջ 261), ըմբչի (ն. տ., էջ 202), սրճի (Շիրվ., ԵԺ, 6, էջ 252) և այլն։
Անշուշտ, այս բաժանումը ինչ-որ չափով պայմանական է։ Բացարձակ
հավասարաթեք զուգաձևեր դժվար է առանձնացնել, քանի որ հնչյունա-
փոխված ձևերը հին են, ավանդական, հրբեմն՝ տեղի տվող, իսկ անհնչյու-
նափոխ ձևերը՝ նոր և, թվում է, թե միտում ունեն տարածվելու։ Ներկա

46 Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, 1974, էջ 94։

47 Տե՛ս Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, 1983, էջ 95։

48 Տե՛ս «Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր», Երևան, 1976, էջ 33, է. Բ. Աղայանը նշում է, որ այդ հիմքերը չեզոք են կամ ձևաբանորեն աննշույթ։ Տե՛ս է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, 1967, էջ 238։

փուլում կողք-կողքի գոյակցող և ազատորեն իրար փոխարինող այդպիսի տարբերակներ առկա են՝

ա) Մի շարք միավանկ բառերում, որտեղ ու-ն կարող է կ' հնչյունափոխվել կ' պահպանվել. այդպիսի բառերից են՝ բքի||բուբի, քմբի||քումբի, լծի||լուծի, խնկի||խունկի, խրծի||խուրծի, խցի||խուցի, ծխի||ծուխի, ծնկի||ծունկի, հնծի||հունծի, մքի||մուքի, նոի||նուռի, շքբի||շուքբի, սգի||սուգի.

բ) Մի շարք բազմավանկ բառերում. բլբի||բլուրի, եկամտի||եկամուտի, բռնի||բռնունի, խոտհնձի||խոտհունձի, իրկնամքի||իրկնամուքի, կիսամքի||կիսամուքի, խորհրդի||խորհուրդի, ծծմքի||ծծումքի, ծննդի||ծնունդի, կամբջի||կամուրջի, կարստի||կորուստի, կեբակրի||կեբակուրի, հրաբլխի||հրաբուխի, պտղի||պտուղի, սերնդի||սերունդի, օգտի||օգուտի և այլն.

գ) Ոչ մեծ թվով միավանկ այն բառերում, որոնց բառամիջի ի-ն կարող է պահպանվել կամ հնչյունափոխվել. հմմտ.՝ բքի||բիբքի, լնդի||լինդի, ցցի||ցիցի, կթի||կիթի:

դ) Բազմաթիվ բազմավանկ բառերի թեք հոլովաձևերում, որոնց բառամիջի ի-ն փակ վանկում կարող է պահպանվել կամ հնչյունափոխվել (այս և մնացած դեպքերում նպատակահարմարության համար բերում ենք միայն սեռական-տրականի ձևերը). արհնի||արհիհի, գնդացրի||գնդացիհի, գավքի||գավիքի, գործչի||գործիչի, գրչի||գրիչի, Դավքի||Դավիքի, դարբնի||դարբիհի, դահնի||դահիհի, թախծի||թախիծի, քավչի||քավիչի, քոճրի||քոճիհի, խորհրդանշի||խորհրդանիշի, հատկանշի||հատկանիշի, կավճի||կավիճի, կացնի||կացնիհի, կապկի||կապիկի, կառավարչի||կառավարիչի, հովաթի||հովաթիհի, հեծանվի||հեծանիվի, հովվի||հովիվի, մահնի||մահնիհի, մոխրի||մոխրիհի, նարնջի||նարնջի, նախրի||նախիհի, նորածնի||նորածնիհի, շապկի||շապիկի, շավղի||շավիղի, ոճրի||ոճիհի, պանրի||պանրիհի, պարսպի||պարսպի, սնգի||սնգիհի, սոսնձի||սոսնձիհի, վրձնի||վրձնիհի, փոքորկի||փոքորիկի և այլն: Զուգահեռ որոշ բառաձևերից առավել տարածված են հնչյունափոխված ձևերը. հմմտ.՝ սրբի||սուրբի, շնչի||շունչի, շնից||շունից (Մուր., Եժ. 5, էջ 307), խմբի||խումբի, գնդի||գունդի, բրդի||բուրդի, կծի||կուծի, կրծքի||կուրծքի, երկրագնդի||երկրագունդի, ապախմբի||ասպախումբի, երկնքի||երկնքի (ՍԶ, Եժ, 2, էջ 414), Սարգսի||Սարգիսի (ՍԿ, ՔԴՔ, էջ 323) և այլն: Ընդդժված բառերի անհնչյունափոխ կազմավորումները ներկա փուլում օրինաչափական չեն:

Հնչյունափոխված մի շարք ձևեր կազմում են համապատասխան անհնչյունափոխ գրական ձևերի բարբառային և ժողովրդախոսակցական տարբերակները: Օրինակներ՝ ապրի, քանապրով (ԴԴ, Եժ, 2, էջ 59), եղնջի (ՀՄ, ՄԿ., էջ 135), լնգի (ՀՄ, Օգ., էջ 171), կարի (ԱԲ, Երկ., էջ 107), մասրի (ՀՄ, Օգ., էջ 144) և այլն:

Հնչյունափոխված մի շարք բառաձևեր խիստ հնացած են. հնչյունափոխության ներկա միտումների տեսակետից նրանց կիրառությունը նույնպես ոճական արժեք ունի. հմմտ.՝ քաղաքի (Շիրվ., ԵԺ, 4, էջ 64), սանդղից (Շիրվ., ԵԺ, 5, էջ 184), փխսի (Թոթ., ԿՀՀԾՎ, էջ 82), խրքրի (ԴԴ, ԵԺ, 2, էջ 59), ժպտի (ԴԴ, ԵԺ, 2, էջ 94), առքի (Մուր., ԵԺ, 5, էջ 197), սնդկի (ԱՔ, Երկ., 1, էջ 61), աղմկի (ՊՊ, ԵԺ, 3, էջ 448), տփի (ՊՊ, ԵԺ, 3, էջ 416), անդղով (ն. տ., էջ 416) և այլն:

Դեռևս զգալի կիրառություն ունեցող հնչյունափոխված մի շարք զուգաձևեր աստիճանաբար տեղի են տալիս անհնչյունափոխ ձևերի առջև. դրանք հնացող զուգաձևերն են. հմմտ.՝ քրմեֆի||քրմեֆի, մրեկի||մրեկի, անդնդի||անդունդի, կոշկի||կոշիկի, կսկծի||կսկծի, կրեկի||կրունկի, մածնի||մածունի, ձմեռնամտին (ՍԶ, ԵԺ, 1, էջ 18) ||ձմեռնամուտին, աշնանամտի (ԴԴ, ԵԺ, 2, էջ 291) ||աշնանամուտի, պոնկի (ՀՄ, Օդ., էջ 63) ||պոնկի, քնեչի (ՆԴ, ԵԺ, 1, էջ 79) ||քնեչի, դաննի||դաննի, դղմի||դղումի (հմմտ.՝ դղմի հյուսթ), բազկի||բազուկի (հմմտ.՝ բազկի հյուսթ) և այլն:

Երբեմն լեզվազգացողությունն ու փորձը բավարար չեն լինում զուգահեռ ձևերից մեկի կամ մյուսի հետագա հաստատումը կանխատեսելու համար:

Կարծիք է հայտնվել, թե ժամանակակից հայերենում հնչյունափոխված կազմություններն աստիճանաբար տեղի են տալիս, և այդ երեւոյթն ավելի ակնհայտ է հոլովական ձևերում⁴⁹: Այդ կարծիքը պետք է ընդունել վերապահությամբ կամ որոշ սահմանափակումով: Կարծում ենք, որ հորվածում բերվող ձևերկի, դաննի, ակմբի, մրեի, տփի ձևերի կիրառությունը զրական լեզվում երբևէ տարածված չի եղել, մինչդեռ գործի, մրեի (որոնք նույնպես համարվում են լեզվից դուրս մղված) ձևերը ներկայումս էլ լայն կիրառություն ունեն: Հնչյունափոխված և անհնչյունափոխ բառաձևերի հարաբերակցությունը կարելի է պարզել վիճակագրական քննությամբ: Սակայն հայտնի է, որ հոլովման ժամանակ երկվանկ և բազմավանկ բառերի շեշտակիր ի-ի և ու-ի հնչյունափոխությունը տարաբնույթ է: Այստեղ դեր ունի բառի զրական նորակազմություն կամ փոխառություն լինելու հանգամանքը (սա վերաբերում է և միավանկ բառերին), բառի վերջավորության ձևական հատկանիշը (տարբեր հնչյունակապակցություններ, ածանցական տարբեր ձևեր), որոշ դեպքերում բարդության տեսակը և այլն: Այդ իսկ պատճառով էլ նպատակահարմար չէ նման բառերի հնչյունափոխական շարքերը ներկայաց-

49 ՏՄ Թ. Գրագույյան, լեզվական տարբերակները և դրանց գեահատումը, «Լրաբեր», 1980, № 7, էջ 35:

նել: Մտորև տրվում է գրական տարբեր երկերում գործածված միավանկ (երկու կողմից փակ վանկով) բառերի ու և ի ձայնավորների հնչյունափոխությունների վիճակագրությունը: Բերվում են նաև զուգահեռ ձևերը: Նույն բառաձևի գործածման քանակը նշում ենք միայն զուգահեռների դեպքում: Հնարանքի ծավալը 100—140 էջ է:

Բառացանկերի համեմատությունը ցույց է տալիս, որ միավանկ բառերի հնչյունափոխված ձևերն անհնչյունափոխներից ավելի են: Զուգահեռ ձևերը դրանցում փոքր թիվ են կազմում: Դրանք ավելի տարածված են բազմավանկ բառերում: Նշված ստեղծագործություններում զուգահեռ կիրառություն են ստացել կտուրին (17) || կտրին (3), անդունդի || անդնդում, բլրի || բլուրի, նախրի (5) || նախիրի (7), շապկի (1) || շապիկի (4, ԱԲ), բշիշում (1) || պարտբջի (14, ՆՁ), եղինջի || եղնջի (ՀՄ): Այսպիսով, որոշակիորեն կարելի է ասել, որ միավանկ բառերում անհնչյունափոխ կազմությունների տարածման միտում չի նկատվում: Գրական նոր սերնդի կողմից (նկատի ունենք ոչ միայն գրականությունը զբաղվողներին) անհնչյունափոխ որոշ կազմություններին նախապատվություն տալու նկատվող միտումին հակադրվում է ավանդույթի ուժով ու գրական ժառանգորդությամբ փոխանցված ձևերի պահպանման միտումը, որը հիմնվում է նաև լեզվի խնայողության սկզբունքի վրա:

Ե. Որոշ տատանումներ առկա են և ու-ով վերջացող բառերի հոլովման ձևերում: Որպես կանոն միավանկ և երկվանկ բառերի վերջին ու-ն անշեշտ դիրքում փոխվում է վ-ի, իսկ բազմավանկ բառերի վերջին ու-ն մնում է անփոփոխ⁵⁰: Գ. Զահուկյանը ու > վ հնչյութափոխություն դիտում է ու-ով վերջացող այն բառերում, որոնք փոխառություններ կամ գրական նորակազմություններ չեն⁵¹: Նշված կանոններից շեղումներ ունեն և՛ միավանկ ու երկվանկ, և՛ բազմավանկ բառերը: Միավանկ բառերից լուի, ձուի (ԱԲ, Երկ., 1, էջ 263) ձևերը գրական կանոնից շեղումներ են, բայց բվի || բուի (Բ, Ս, էջ 459) ձևերը կարելի է համարել մրցակցող զուգահեռ: Չու բառը որպես խոսակցական լեզվում քիչ գործածվող բառ հոլովվում է շուի ձևով: Նույնը պետք է ասել և առու բառի մասին, որի առվի (ԳԹ, 1/2, 1980) կազմությունը գործում չէ ժամանակակից հայերենում: Լայն գործառություն ունեցող երկվանկ բառերի անհնչյութափոխ հոլովական ձևերը շեղումներ են գրական կանոնից. հմմտ.՝ առուի (ՍՁ, ԵԺ, 1, էջ 336), մեղուի (ՆԴ, ԵԺ, 3, էջ 437), Բաբուից (ՍՁ, ԵԺ, 4, էջ 515), Զանգուի (Ն. տ., էջ 458) և այլն: Դրանք ավելի հատուկ են խոսակ-

50 Հմմտ. Վ. Գ. Առաքելյան, Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, 1979, էջ 137—138:

51 Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Նշված աշխ., էջ 186:

Հեղինակներ	ՈՒ-ն հնչյունափոխած ձևեր	ՈՒ-ն չհնչյունափոխած ձևեր	Ձուգահեռ ձևեր	Ի-ն հնչյունափոխած ձևեր	Ի-ն չհնչյունափոխած ձևեր	Ձուգահեռ ձևեր
Ա. Բակուց Երկեր, 1, 1976, էջ 3—126	քնից, ցրտից, խըմբի, ծխից կրծքի, թրով, հնձից, բրդի, դոնով, բնի, թըղթին, տնից, ջրի, փշի (14)	ծուխի, սուռնկի, սուսի, թուրքի, կուրծի, բուրդի, մութում, խուրձի, զուրի, հուռնի, սուրքի, սուզով (12)	ծուխի-1// ծիխի-3// բուրդի-1// բրդի-1	մսի, քթի, մաքին, շթի, սրտում, աղի, վղին, ծաի, սկզբին, դնով, բզով (11)	ղիբքից, նիբհից, ցինի (3)	—
Ն. Զարյան, Հաղալան, 1955, էջ 3—103	բնից, կրծքին, բրբղի, փոխի, 1ծի (5)	—	—	վղի, գծից, սրտում, մաքում, բթի բզով, սկզբի (7)	—	—
Լ. Մարտոսյան, Մառերը, 1978, էջ 157—296	ջրի, դնչի, բնից, հնձից, մթի, բրդի, 1ծի, դոնից, կրծքով, թփից, ծխի, բնի, քրդի, բկի, ծնկի, գուի, թղթի (17) թղթին, ջրով (2)	ցուլի, թուջի, հուռնի, թուրքի, շուրթի, թին, քուռքից (6)	—	—	բիղին, շիրի նիրհի (3)	—
Վ. Պետրոսյան, Վերջին ուսուցիչը, 1980, էջ 325—438	—	հուռնից (1)	—	սրտի, զբի, մաքի, բթին (4)	հիբով (1)	—

ցական լեզվին: Օրինակներ՝ Չանգուի բարափին կպած հին տանը արդեն մենակ էր ապրում (ՄԳ, ՄՍԱ, էջ 259): XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակների գրական լեզվում բառավերջի բաց վանկի ուն բազմավանկ բառերի թեքված ձևերում հանդես էր գալիս հնչյունափոխված և անհնչյունափոխ: Օրինակներ՝ Ռեհանվի (ԽՀ, 11/9, 1936), Չամանվի (ՀԹ, ԵԺ, 3, էջ 7), Բորչալուի (ՀԹ, ԵԺ, 5, էջ 301—302), Իմամլուի (Շիրվ., ԵԺ, 4, էջ 206), դասավի (ԱՔ, Երկ., 151), դասատուի (ԴԴ, ԵԺ, 3, 1956, էջ 58), խնդրավի (ՀԹ, Երկ., 1, էջ 122), խնդրատուի (Մուր., ԵԺ, 1, էջ 307), լուսավի (Ր, ԵԺ, 4, էջ 391), լուսատուի (Ր, ԵԺ, 6, էջ 29), վերարկվի (ՆԴ, ԵԺ, 3, էջ 421, ՀԹ, ԵԺ, 5, 1945, էջ 204), վերադուի (Ր, ԵԺ, 2, 1955, էջ 76), փեսացվի (Շիրվ., ԵԺ, 5, էջ 23), փեսացուի (Ր, ԵԺ, 2, էջ 111), հարսնացվից (Շիրվ., ԵԺ, 5, էջ 74, Ր, ԵԺ, 2, էջ 108), հարսնացուի (ՆԴ, ԵԺ, 2, էջ 454), տիրացվի (ՍԶ, ԵԺ, 1, էջ 237), տիրացուի (ԴԴ, ԵԺ, 2, էջ 14), մանկանացվի (Շիրվ., ԵԺ, 4, էջ 173), մանկանացուի (ՊՊ, ԵԺ, 1, 1953, էջ 313), ծաղրածվի (Շիրվ., ԵԺ, 4, էջ 167), ծաղրածուի (ՆԴ, ԵԺ, 3, էջ 55), ձեռնածվի (Մուր., ԵԺ, 4, էջ 47), ձեռնածուի (Ր, ԵԺ, 10, 1959, էջ 299), հոգաբարձվի (ՆԴ, ԵԺ, 3, էջ 295), հոգաբարձուի (ՀԹ, ԵԺ, 4, էջ 107), ժողովածվի (ն. տ., էջ 368), ժողովածուի և այլն: Ներկա փուլում այս բառերի հոլովման ժամանակ ու՛՞՛վ հնչյունափոխություն տեղի չի ունենում: Հնչյունափոխված ձևերն հատուկ են բարբառային խոսակցական լեզվին. հմմտ. մայրացվի (ՎԱ, ՀՎՓԲ, էջ 149), կատարվածին (ՀՄ, Օգ., էջ 65) և այլն. մրցակցող դուզածներ են՝ եղջերվի||եղջերուի:

զ. Ի-ով վերջացող և ու հոլովման պատկանող մի շարք բառերի գործիական և ներգոյական հոլովածների կազմության ժամանակ ևս հանդիպում են գրական նորմայում գործող հնչյունափոխված ու անհնչյունափոխ հիմքերով դուզածներ⁵². հմմտ. գինով (ԱՔ, Երկ., 1, էջ 351) ||գինիով (Ր, ԵԺ, 2, էջ 84), ոսկով||ոսկիով, որդով||որդիով, ուրլով||ուրլիով, ուղով||ուղիով (ՀՄ, ՄՎ, էջ 83), երկաթուղով||երկաթուղիով, ծառուղով||ծառուղիով, գետնուղով||գետնուղիով, այգով||այգիով, գտով (ՍՀ, 21/4, 1981) ||գտախով, փառով||փառչիով. հանճուղիում||հանճուղում, ուղիում||ուղում (Գ, 1973, № 1, էջ 38), այգիում||այգում (ՆԴ, ԵԺ, 2, 224), հայելիում||հայելում. տատանումներ առկա են հատկապես հայկական տեղանուններում. Արգնիում||Արգնում, Վեդիում||Վեդում, Ալավերդիում||Ալավերդում, Լոռում||Լոռիում և այլն: Միտումը մեծ մասամբ բառավերջի ի-ի պահպանումն է:

⁵² Ի-ով վերջացող բառերի նման տատանումների մասին տե՛ս Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, 1974, էջ 90:

Նշված հոլովածներում մի շարք բառեր պահպանում են բառավերջի ի-ն (հմմտ. բանալիով, գումարելիով, օղիով, օղիում, կանաչիով, քենիով, մորթիով և այլն), որպեսզի տարբերակվեն հնչյունական կազմով նման բառերից (հմմտ. բանալով, գումարելով, օղով, կանաչով, քենով, մորթով և այլն):

ՆԵՐՈՒՅԻՍՎՈՐ ՈՒ ԱՆՆԵՐՈՒՅԹ ԶԵՎԵՐԸ ՀՈՂՈՎԻ ԿԱՐԳՈՒՄ

Անցյալ դարի վերջի և XX դարի առաջին տասնամյակների գրական լեզվում բավական տարածված էին աև հոլովման պատկանող միավանկ բառերի թեք հոլովածների ներույթավոր կազմությունները. օրինակներ՝ նկարիչ քռռնից թերևս ավելի բախտավոր չի նկարիչ պապը (ՀԹ, ԾԺ, 4, էջ 176): Հարկավոր է այդ բեռնից մի կերպ ազատվել (Շիրվ., ԾԺ, 4, 1959, էջ 78): Վազեց պարտեզ, ինչպես մի ծանր բեռնից ազատված փախստական գերի (ՂԱ, Երկ., 1979, էջ 345): Նման կազմություններ առկա էին և ժողովրդախոսակցական լեզվում: Օրինակներ՝ Ազին էլ հրեն փռնիցը հացերը կբերի (ՆԴ, ԾԺ, 1, էջ 31)... Ինչպես եք համարձակվում Բոշանց Սաղիկի քռռնին լացացնել (Շիրվ., ԾԺ, 5, 1959, էջ 178): Ահա էն քարքարոտ տեղը լիքն է նռնով ու թզնով (ՂԱ, Երկ., էջ 93, 1979) և այլն: Ներկա փուլում ներույթավոր ձևերը մասամբ են պահպանվել ժողովրդախոսակցական լեզվում: Գրական լեզվում կան որոշ ազդեցություններ. օրինակ՝ Գեներալը գեներալուհուն պատմեց կարմիր պարտիզան Եգորից ու Սարգսից, եզնից ու կատոններից ... (ՀՄ, Օգ., էջ 120): Այդ ձին ծնվել էր այդ գավակով, այդ բեռնով (ն. տ.): Սաստիկ վախենում էի մկնից ... (ՎՓ, Երկ., 1, 1979, էջ 5):

է. Աղայանը ներույթավոր (նից, նով) և աններույթ (ից, ով) ձևերը համարում է ազատ ձևակներ, քանի որ դրանք ազատորեն փոխարինում են իրար առանց իմաստային կամ գործառական տարբերակման: Նա միաժամանակ նշում է, որ բացի դուռ բառից, մյուս բառերի համար արդի գրական լեզվում ավելի սովորականը և կանոնականը աններույթ ձևն է (օր.՝ ծունկից կամ ծնկից, բայց ոչ՝ ծնկնից, բռից կամ բուռից, բայց ոչ՝ բռնից⁵³): Բառամիջում ու ձայնավոր ունեցող միավանկ այս բառերն ի-ով հոլովվելիս կարող են հանդես գալ հնչյունափոխված ու անհնչյունափոխ հիմքերով. հմմտ.՝ ծնկի||ծունկի, շրթի||շուրթի, բռի||բուռի, նռի||նուռի:

Այսպիսով, ժամանակակից գրական հայերենի հոլովի կարգում առկա են հնչյունափոխված ու անհնչյունափոխ բազմաթիվ ձևեր, որոնցում արտացոլվում է նորմայի անկայունությունը:

⁵³ Տե՛ս է. Բ. Աղայան, նշված աշխ., էջ 244:

Որպես կանոն հոգնակիի կազմության ժամանակ հնչյունափոխություն ավելի քիչ է տեղի ունենում: Այս կանոնը վերաբերում է առավելապես բազմավանկ բառերին: Մի շարք միավանկ գոյականներ հոգնակիի կազմության ժամանակ ունենում են տատանումներ: Ստորև նշում ենք միայն քիչ տարածում ունեցող ձևերի բնագրային վկայությունները. հմմտ. բունեք (Մուր., Եժ, 5, էջ 260) և բներ, գբերով (ՆԴ, Եժ, 3, էջ 239) և գուքերով, գունդերի (Ր, Եժ, 10, էջ 182) և գնդերի, թուգերի (Ր, Ս, էջ 217) և րգերի, թումբեր||թմբեր, թուրերի (Իս, Երկ., 3, էջ 493) և րբերի, րբեր (Շիրվ., Եժ, 4, էջ 219) և քուրբեր, քուփերով (Ր, Ս, էջ 553) և քփերով, լուծեր||լծեր, խումբեր (ՀԹ, Եժ, 1, 1950, էջ 21) և խմբեր, խուրձեր||խրձեր, խուցեր||խցեր, նուտերով (ՆԴ, Եժ, 3, էջ 8) և նտերով, շուրթերի||շրթերի (Ր, Եժ, 1, էջ 98), սուրեր||սրեր, սուրբերով (Ր, Ս, էջ 329) և սրբերով, փունջերը (Շիրվ., Եժ, 6, էջ 263) և փնջերը, փուտեր||փոտեր, ֆուրմեր||ֆմբեր և այլն: Բազմավանկ բառերի փակ վանկի ու-ն չի հնչյունափոխվում: Արդեն հնացած են ժողովրդներ, սերնդներ կազմությունները: Ի-ի հնչյունափոխական տարբերակները հոգնակի թվում սակավ են. հմմտ. խիներ||խներ, ցիցեր||ցցեր, լինդեր||լնդեր, բիգեր||բգեր: Հոգնակիում հնչյունափոխվում է միայն երկրներ բառը. երկիրներ (Իս., Երկ., 3, էջ 258) կազմությունը տարածում չունի: Անշուշտ, նկատի չունենք միավանկ վերջնաբաղադրիչով գոյականների՝ կանոնին համապատասխանող հնչյունափոխության դեպքերը, ինչպես օրինակ՝ օրագրեր, ծաղկեփնջեր, ասպախմբեր, ամսաթվեր և այլն:

ՋՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԻ ԿԱՐԳՈՒՄ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից գրական հայերենի գոյականի հոգնակի թվի ընդհանրական ու գործուն մասնիկներն են եր-ը և ներ-ը: Եթե բացառենք միավանկ վերջնաբաղադրիչով բարդ բառերի հոգնակիի կազմության առանձնահատկությունները և մարդ ու կին բառերի հոգնակիի անկանոն կազմությունները, կարելի է ասել, որ եր-ով կազմվում է միավանկ, ներ-ով՝ բազմավանկ բառերի հոգնակին: Ք հոգնակերտը, որ մինչև դարասկզբի առաջին տասնամյակները բավական գործուն մասնիկ էր, ներկա փուլում ունի սահմանափակ գործառություն, ավելի հատուկ է խոսակցական լեզվին և դրվում է ցի-ով վերջացող բառերի վրա: Օրինակներ՝ Դերասանը դաստիարակ, ռեժիսորը՝ դերասանապետ, այսպես են ըմբռնում թատրոնը լենինականցիք (Գար., 1971, № 11, էջ 20): Նրանց համակրում էին հացավաճցիք (ՆՁ, Հ, էջ 370): Վանեցիք ...բազ-

մաթիւ ուսուցիչներ են տվել (ՎՓ, Երկ., 1, էջ 61): Այ թե ինչպիսի մարդիկ են ֆաղաֆացիք (ՍԶ, ԵԺ, 1, էջ 345): ...Սիրում էր, ինչպես ասում են երևանցիք, «ձեռ առնել» ընկերներին (ՍԶ, ԵԺ, 10, էջ 257): Բանեցրեք մինչև դազախեցիք կիմանան (ՀՄ, Օգ., էջ 276) և այլն: Միայն որոշ ոճերում հանդիպող անք, ենք, ոնք, ունք հոգնակերտներով կազմությունները եր-ով և ներ-ով կազմություններից առանձնանում են իմաստային լրացուցիչ տարբերություններով: Գ. Զահուկյանը այդ տարբերությունները որակում է որպես դասային տարբերություններ: Դրանցից զուգահեռ կիրառություն ունեն անք-ը և ենք-ը. առաջինն ավելի հասուկ է բարբառային-խոսակցական լեզվին, իսկ երկրորդն առավել տարածված է խոսակցական լեզվում, որից և անցել է գրական լեզվին. հմմտ.՝ Փորոսանց Մարթան գծվել ա (ՆԴ, ԵԺ, 1, էջ 11): Փորոսանց խրճիթի ներսն ու դուրսն ասեղ գցելու տեղ չկար (ն. տ.):

Որոշ բառերի հոգնակիների հնատիպ ձևերը կազմում են եր-ով և ներ-ով ընդհանրական ու չեզոք ձևերի ոճական տարբերակները. հմմտ.՝ ախկնայք||տիկիններ, պարոնայք||պարոններ, անձինք||անձեր և այլն: Այսպիսով, ք, անք, ենք, ոնք, ունք, այք, ինք հոգնակերտներն ունեն սահմանափակ գործառություն, հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին կամ արխաիկ ոճին և եր ու ներ հոգնակերտներով կազմավորումներից տարբերվում են ոճական կամ իմաստային յուրահատկություններով²:

Գրական նորմայի շրջանակներում գործում են եր և ներ հոգնակերտների փոխանցումների հետևանքով առաջացած և ոճական տեսակետից խստորեն շնորհգծվող տարբերակները: Դրանք առաջանում են համակարգի վերակառուցման, պարզեցման ու միասնականացման պահանջով, համարանության, բարեհնչունության և այլ գործոնների ազդեցությամբ:

Թվի կարգում այդպիսի զուգաձևեր առկա են միավանկ վերջնաբաղադրիչով բարդ բառերի, հնում ն հիմքատարր ունեցած միավանկ բառերի, մեկնկես վանկանի բառերի և ստացական հոգնակիի ձևերում:

1 Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, 1974, էջ 179:

2 Գրական նորմայի շրջանակներից և մեր քննության նպատակից դուրս են գնալարվեստական գրականության լեզվում և գործառական այլ ոճերում խոսքի ոճավորման նպատակով գործածվող հոգնակիի ժողովրդախոսակցական, բարբառային կամ հընատիպ ձևերը. հմմտ. տղերք||տղեք, աղջկերք||աղջկեք, երխեք, սատանեք, որդունք, եզնիք, կատվանիք, ընկերտիք, ձիանք, ձիաներ, որդկերանց, տղերանց, աղջկերանց, մանկտիք, տղոց, ֆաղցոց, եգիպտացոց, աղջկանց, գեղարվեստից ակադեմիա, օրիորդաց դիմնագիւ և այլն:

XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներում, երբ գրական լեզուն մշակման գործընթացում էր, դեռևս քանակային մեծ կազմ չունեցող միավանկ վերջնաբաղադրիչով բառերի հոգնակիի կազմովության նորման հասակ դրսևորում չունեի: Այդ է պատճառը, որ նշված շրջանի քերականագիտական աշխատություններում միավանկ վերջնաբաղադրիչով բառերի հոգնակիի կազմովության վերաբերյալ տրվել են իրարամերժ ու հակադիր կարծիքներ: Այսպես, Ս. Պալասանյանը գրում է. «...Կան միավանկ գոյականներ, որոնք բարդ բառերի կազմովության մեջ մտնելով՝ հոգնականում եր մասնիկ են ընդունում: Այսպես են՝ կարգ, տուն, հայր, մայր, քույր, անք. դասակարգեր, գրատներ, հորաքույրեր և այլն³»: Գ. Վանցյանը բառի հոգնակիի եր-ով կամ ներ-ով կազմովության հիմնական պայմանը համարում է վանկաքանակը. «Աշխարհաբարի հոգնակիից ավելի հաստատուն, պարզ և հիմնական կանոն դառնելն անկարելի է. միավանկ բառերը հոգնակի վերջանում են եր, բազմավանկները ներ. դա չունի բացառություն. միակը— մարդիկ. այն էլ ժողովրդի բերանում շատ անգամ դառնում է մարդիկներ, մարդկերանց, մարդկերանցից և այլն ... Մեր նորելուկ լեզվաշենները անգիտակ այդ կանոնին՝ հնարել են լրագրեր, լուսամուտեր, շիկահերեր, խաջարեր, տանուտերեր, ջրհորեր, տիրասերեր և այլն ...⁴: Ապա թվարկելով միավանկ բաղադրիչով բարդությունների ներ-ով բազմաթիվ օրինակներ, եզրակացնում է. «Ո՛ր և է այլ վերջավորություն սխալ է և կամայական: Բազմավանկ բառը լինի նա պարզ, բարդ, ածանցյալ, հոգնակին վերջանում է ներ ...⁵»: Սակայն, ինչպես նշեցինք, նման բառերի հոգնակիի կազմովության հաստատուն կանոն այդ շրջանում դեռևս չէր մշակվել. հենց այդ է պատճառը, որ շնայած կանոնարկելու փորձերին, Վանցյանի աշխատանքում նշված բառերի հոգնակիի կազմովության մեջ առկա են տատանումներ. հմմտ.՝ ծրագիրներ (էջ 42), լրագիրներ (էջ 69), ամսագիրներից (95), բացականեր (7), բաղաձայներ (164) և՛ բացականեր (5), բաղաձայներ (183), դասագրքեր (163), միավանկների (156), վերնաձայներ (164) և այլն: Դ. Աղայանի կողմնորոշումն այս հարցում ավելի ճիշտ է: Նա իր «Հայոց լեզու» հոդվածում, որն առաջին անգամ լույս է տեսել 1890 թ., այդպիսի բառերի հոգնակիների եր-ով կամ ներ-

3 Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Թիֆլիս, 1906, էջ 107:

4 Գ. Վանցյան, Պատմական քերականություն արևելահայ լեզվի, Թիֆլիս, 1906, էջ 226—227:

5 Նույն տեղում, էջ 227:

ով կազմութեան մեջ կարևոր է համարում երկրորդ բաղադրիչի իմաստի պահպանման կամ փոփոխութեան գործոնը. եթե միավանկ բառը բարդութեան երկրորդ բաղադրիչի դերում չի փոխում իր իմաստը, ապա եր հոգնակերտ է ընդունում, իսկ երբ փոխում է՝ ներ. «Սխալմամբ են ասում և գրում լրագիրներ, ամսագիրներ, գրատուններ, պետք է ասել և գրել լրագրեր, ամսագրեր, երբ թերթերի մասին է խոսքը և ոչ նրանց գորղների-խմբագիրների, իսկ տուններ բառ չկա հայերեն, այլ միայն տներ»⁶:

Լեզվի զարգացման հետագա շրջանում, երբ մեծ շափերի է հասնում միավանկ վերջնաբաղադրիչով բառերի գործառութայնը⁷, աստիճանաբար կայունանում ու հաստատվում է այդ բառերի հոգնակիի կազմութեան ներկայումս գործող կանոնը: Համաձայն այդ կանոնի, եր-ով կազմվում է այն բարդութայնների հոգնակին, որոնց վերջին բաղադրիչը միավանկ գոյական է, և վերջինս բաղադրյալ բառի մեջ պահպանում է իր հիմնական առարկայական իմաստը, ինչպես օրինակ՝ ավտոդռներ, արտավայրեր, բազմակետեր, գետնախորշեր, զինետներ, դաշտավայրեր, դասագրքեր, զորամասեր և այլն. բազմավանկ բառը ներ հոգնակերտ ստանում է այն դեպքում, երբ վերջին միավանկ բաղադրիչը բաղադրյալ բառի մեջ գործածվում է ոչ թե առարկայական իմաստով, այլ ուրիշ, և մասնավորապես, դերբայական (գործողութայն կատարողի կամ տվյալ վիճակում եղողի) իմաստով, ինչպես օրինակ՝ ականակիրներ, ականատեսներ, ականուհիներ, բանասերներ, գնդացիներ, գրագետներ, դավադիրներ, ժամագործներ, պատմագիրներ, ուսադիրներ, փայտանատներ, օրինապահներ և այլն⁸: Ինչպես արդեն նշեցինք, այս օրինաչափութայնը հստակ չէր գործում մինչև XX դ. առաջին տասնամյակները. այս շրջանին խիստ բնորոշ է միավանկ գոյական բաղադրիչով բառերի հոգնակիի կազմութեան զուգաձևութայնը: Նշված շրջանում կանոնի անհրաժեշտ դրսևորման հետևանք պետք է համարել Հ. Աճառյանի հետևյալ բացատրութայնը. «Բարդ բառերը ըստ սովորական կանոնի հոգնակիում ստանում են -ներ մասնիկը. օր.՝ երկաթուղի-երկաթուղիներ, հացավաճառներ և այլն:

⁶ Ղ. Աղայան, Երկրի ժողովածու, հ. 3., Երևան, 1933, էջ 393:

⁷ Լեզվի խնայողութեան սկզբունքի համաձայն տարբեր վերջածանցների դուրս մղման ճանապարհով և ստեղծվում են միավանկ վերջնաբաղադրիչով մի շարք բարդութայններ. համառ.՝ հուլագրութայններ-հուլագրեր, մանրամասնութայններ-մանրամասներ, գտնեմարտութայններ-գտնեմարտեր, բեռնալսութայններ-բեռնալսեր, մանրակերտվածներ-մանրակերտեր և այլն:

⁸ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնայան, Հ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, էջ 50:

Իսկ երբ բարդ բառի վերջին հզրը միավանկ է, սկսում են տատանումներ: Քն՝ արևելյան, և թե՛ արևմտյան գրականի մեջ սրանց հոգնակին զանազան ձևով է լինում, օր.՝ լրագիր, լրագրեր, լրագիրներ, լրագիրներ, լրագրներ: Դրվում է -եք մասնիկը՝ նկատի ունենալով, որ վերջին հզրը միավանկ է, այսինքն առնելով բառը առանձին (գիր, գրեր) և մտածելով, որ չի կարելի ասել գրներ, գրներ: Դրվում է -ներ մասնիկը՝ առնելով բառը իբր մի ամբողջություն և մտածելով, որ բազմավանկը ըստ օրինի պիտի ստանա -ներ մասնիկը: ...Զանազան քննիչներ տվել են սրանց մասին զանազան կանոններ, բայց ինձ թվում է, թե հարցը երկդիմի և հետևաբար անլուծելի է: Ըստ իս, տրամաբանությունը պիտի պահանջեր համարել բազմավանկ և դնել -ներ բայց կան բառեր, որոնց -եք-ով հոգնակին այնպես սովորական է դարձել, որ անկարելի է անտես անել և դնել -ներ. այսպես՝ տանկահայեր, բայց ոչ բնավ՝ տանկահայեր⁹:

2. Պետրոսյանը միավանկ վերջնաբաղադրիչով բառերի հոգնակիի կազմության կանոնի խախտումները բացատրում է «մասամբ սովորույթի ուժով, տվյալ կառուցածքը ավանդաբար գործածելով, մասամբ արևմտահայերենի ազդեցությունից, և կամ պարզապես գրական լեզվի նորմայի ոչ հստակ գիտակցումով»¹⁰:

Անշուշտ, սովորույթի ուժով ու ավանդականությամբ պետք է բացատրել գործող կանոնին չհամապատասխանող մի շարք գոյական վերջնաբաղադրիչով բառերի հոգնակիի -ներ-ով կազմությունները: Այդ վերջնաբաղադրիչներից են՝

- անց¹¹ — միջանցքներ, լուսանցքներ, ջրանցքներ, նրբանցքներ.
- բան — առաջարաններ, բնաբաններ, նախաբաններ, նշանաբաններ, վերջաբաններ.
- դուլ — դործադուլներ, դատադուլներ, հացադուլներ.
- գոր — կայազորներ, լիազորներ, հեծելազորներ.
- կիթ — կովկիթներ, հավկիթներ, ձկնկիթներ.
- պան — այգեպաններ, դռնապաններ, խանութպաններ, պարտիզպաններ.

⁹ 2. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 818—819.

¹⁰ 2. Չ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, 1972, էջ 302: Միավանկ վերջնաբաղադրիչով բառերի հոգնակիի զուգաձև կազմության մասին տե՛ս նաև Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, 1970, էջ 125—128: Գ. Գաբրիելյան, Զևարանական կառուցվածքի փոփոխություններ, «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում», 1973, էջ 333—336:

¹¹ Աճգ բաղադրիչով բառերի հոգնակիին -ներ-ով կազմելու մասին տե՛ս Ս. Գ. Արամամյան, Ն. Ա. Պառնասյան, Լ. Ա. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, էջ 50:

—պետ — խմբապետներ, գնդապետներ, դպրապետներ, ճարտարապետներ:

Նշված վերջնաբաղադրիչով մի շարք բառաշարքերի հոգնակիի ներով կազմությանն անշուշտ նպաստել է վերջնաբաղադրիչների անկախ գործածություն շունենալը (հմմտ.՝ գոր, դուլ, կիր և այլն), ինչպես նաև ամբողջ բարդության վերաիմաստավորումը: Կան նաև միավանկ գոյական բաղադրիչով հոգնակիի —ներ կազմություն ունեցող՝ բառաշարքեր չկազմող, առանձին բառեր. վերելքներ, հրագեներ, միրհավներ, վայրէջքներ, ծխախոտներ, խոտհարհներ, ընծալտներ: Որոշ վերջնաբաղադրիչների հոգնակիի —ներ—ով կազմությունները պահպանվել են նման վերջնաբաղադրիչով մի քանի բառերում. հմմտ.՝ վզկապներ, փողկապներ, ժամկետներ, տեսակետներ, շափանիշներ, հատկանիշներ, միջնորմներ, ցանկորմներ և այլն: Սրանք նույնպես հիմնականում իմաստափոխված բաղադրիչներով բառեր են և կամ ունեն այնպիսի վերջնաբաղադրիչներ, որոնք առանձին կիրառություն չունեն: Նման կազմությունների թիվը սահմանափակ է: Ժամանակակից գրական հայերենում կանոնական կազմություն ունի գոյական վերջնաբաղադրիչով բարդությունների հսկայական մեծամասնությունը: Հատկապես մեծ թիվ են կազմում հոգնակիում —եր ստացող չիմաստափոխված միավանկ գոյական բաղադրիչով բառերը:

Զուգաձև հոգնակի կազմող բառերը կարելի է բաժանել մի քանի խմբի. ա) միավանկ գոյական վերջնաբաղադրիչով գոյականներ¹², բ) գոյական բաղադրիչով փոխանուն ածականներ, գ) միավանկ վերջնաբաղադրիչով փոխառյալ բարդություններ, դ) բայարմատ բաղադրիչով բարդություններ:

ա) Միավանկ գոյական վերջնաբաղադրիչով բարդ գոյականներ. Այս խմբի մեջ մտնող բառերի հոգնակիի՝ կանոնին չհամապատասխանող ներ—ով ձևերը մասամբ համաբանության հետևանք են, մասամբ վերջնաբաղադրիչի իմաստի երկակի ընկալման ու բարդության իմաստափոխության, մասամբ էլ պայմանավորվում են բառերի հնչյունական, վանկային առանձնահատկություններով:

Ստորև ներկայացնում ենք այդ խմբի բարդությունների՝ տարբեր վերջնաբաղադրիչներով օրինակներ: Համեմատության համար, հնարա-

12 Ս. Մալխասյանցի «Հայերենի բացատրական բառարանում» բերվում են տարբեր գոյական բաղադրիչներով բարդ գոյականների զուգաձև հոգնակիներ. ծրագրեր կամ ծրագրեր, լրագրեր կամ լրագրեր, հեռագրեր կամ հեռագրեր, շոգենավեր կամ շոգենավեր, կրակակետեր կամ կրակակետեր և այլն: Կարելի է ենթադրել, որ մինչև XX դ. 40-ական թթ. գոյական բաղադրիչով բարդությունների հոգնակիի կազմությունը դեռևս ընդհանրական կանոնի չէր վերածվել:

վերաբերումն դեպքում, բերվում են նույն վերջնաբաղադրիչով բառեր, որոնք հոգնակին կազմում են միայն -եր կամ միայն -ներ մասնիկով: Աստղանիշերով նշում ենք այն բառերը, որոնց հոգնակիի ներ-ով կազմութունները արդի հայերենի նորմայի տեսակետից հնացած են:

Բաղադրիչի ձևական հատկանիշները	Բաղադրիչները	Ձևադաս հոգնակի ստացող բառեր	Միայն -ներ ստացող բառեր
1. <i>Վերջնաբաղադրիչով կազմված բառեր</i>	-ազգ -անցք	գովազդ, լուսազդ, մահազդ, հորանցք, հերձանցք, սողանցք, քթանցք, օդանցք, դետանցք, բովանցք	բնազդ լուստնցք, նըբրանցք, միջանցք, շրանցք
	-ափ -երգ -երթ	գետափ, լճափ, ծովափ, քարափ *գերերգ, *խմբերգ, *պարերգ, ողբերգ, սիրերգ, վիպերգ, քայլերգ, ասերգ, *օրհներգ չվերթ, ուղերթ, ողջերթ	չքերթ
	-գիր -դարձ	*ամսագիր, *գրչապիր, *բնագիր, *լրագիր, *հեռագիր, *ձեռագիր, *վերնագիր, *նկարապիր, *օրագիր անկյունադարձ, արևադարձ, անցուդարձ, շրջադարձ, տարեդարձ	ձայնդարձ
2. <i>Վերջնաբաղադրիչով կազմված բառեր</i>	-լույս -խոտ -կապ	ձարխոտ թևկապ, *թևակապ, խաչկապ, կրծկապ, վերակապ, քարկապ	ծխախոտ վղկապ, փողկապ
	-կետ	բազմակետ, ելակետ, դարձակետ, միջակետ, կրակակետ, վերջակետ, ստորակետ	ժամկետ, տեսակետ
	-նիշ	ախտանիշ, գրանիշ, դասանիշ, զրամանիշ, զրոյմանիշ, հոգնանիշ, ուղենիշ, մետաղանիշ, նամականիշ, փոստանիշ	հատկանիշ, ցուցանիշ, շափանիշ
	-ձայն -պետ	ոտնաձայն, բնաձայն դերասանապետ, ամբոցապետ, ցեղապետ, պահեստապետ, բժշկապետ, նավապետ	խմբապետ, հարյուրապետ, ճարտարապետ
	-սյուն -տեր -տիպ	*հեռազրասյուն, հենասյուն *բերդատեր, *միլիոնատեր, *տանուտեր, *փողատեր ապակետիպ, հեռատիպ	

Աղյուսակի առաջին կետում խմբավորել ենք ձայնավորով սկսվող բաղադրիչները: Նման բաղադրիչներ ունեցող բառերի երկրորդ բաղադրիչի ձայնավոր հնչյունը վանկ է կազմում առաջին բաղադրիչի վերջին վանկի բաղաձայնի հետ. հմմտ.՝ գո-վազդ, մա-հազդ, բո-վանցք,

հո-րանցք, խրմ-բերգ, դե-րերգ (բարդության մեջ ե-ն հնչվում է է), շր-վերք և այլն: Այսպիսի վանկաբաժանմամբ երկրորդ բաղադրիչի առան-ձին գիտակցումն արտասանությամբ չի դրսևորվում, և բարդությունը համարվում է բաղմավանկ: Հավանաբար, որոշ դեր ունի և վանկաբա-նակը: Առաջին կետում խմբավորված բառերը երկվանկ են: Ավելի վան-կաքանակ ունեցող բառերը որպես կանոն ստանում են եր. հմմտ.՝ վրաերթեր, հորաաանցքեր, կարոտերգքեր և այլն:

Աղյուսակի երկրորդ կետում խմբավորված բառերի հոգնակիի -ներ-ով ձևերի առաջացման պատճառները տարբեր են (համաբանություն, բաղադրիչի իմաստի երկակի ընկալում, բարդության իմաստափոխու-թյուն և այլն):

Վերջին շրջանում միտում է նկատվում եր-ով կազմելու բոլոր գո-յական վերջնաբաղադրիչներով բարդ գոյականների հոգնակին, նույնիսկ եթե այդ բաղադրիչն առանձին չի կիրառվում կամ իմաստափոխված է. հմմտ.՝ հեծելազորեր (ՀՄ, ՄՎ, էջ 236), այծֆաղեր, քոհուրոհներ (ՍԿ, ԽՀՔԳ, էջ 109), արշալույսեր, ելակետեր, հենակետեր, ֆարաֆուսեր և այլն:

Կան միավանկ գոյական վերջնաբաղադրիչներով բարդությունների հոգ-նակիի զուգաձև կազմություն ունեցող՝ բառաշարքեր չկազմող, առան-ձին բառեր. ֆարայրեր||ներ, սաուգայցեր||ներ, ահագանգեր||ներ, ձեռա-գործեր||ներ, գառիթափեր||ներ, արշալույսեր||ներ, զինախաղեր||զինա-խաղներ (Ր, 7, էջ 73), կենդանակերպեր||ներ, ֆարհանգեր||ներ, ջրհո-րեր||ներ, սանամայրեր||սանամայրեր (ՂԱ, ԸԾ, էջ 99), շահեշահեր||ներ, ցանկապատեր||ներ, զառիվայրեր||ներ, զինետներ||կոֆատուներ (ՍՆ, Ծ, էջ 276), այծուղտեր||ընձուղտեր, շրջափակեր||ներ, այծֆաղեր||ներ, խաչֆարեր||խաչֆարներ (ՊՊ, Կ., էջ 131), ֆարաֆուսեր||ներ, նո-րաֆույրեր||ներ, մորաֆույրեր||ներ, քոհուրոհներ||ներ, երկտողեր||ներ, լափողեր||ներ, իրիկնապահներ||ներ, փառատուներ||ներ, արևածագեր||ներ, ֆարայծեր||ներ, կեղծամեր||ներ և այլն:

Վերջին շրջանում նկատվում է նաև անհոդակապ բարդությունների -եր-ով ձևերին նախապատվություն տալու միտում. ջրհորեր, կեղծամեր, այծֆաղեր, երկտողեր և այլն: Այսպիսով, միավանկ վերջնաբաղադրիչով բարդ գոյականների հոգնակիի -ներ-ով կազմությունները ավելի հին են կամ գործառում են ժողովրդախոսակցական լեզվում (հմմտ.՝ նաև՝ հորհուրներ, մորհուրներ, կիրումետուներ, տոնածառներ, ականջողներ, տե-ղաշորներ և այլն, որոնք գրական լեզվում հանձնարարելի չեն): Նկա-տենք նաև, որ գոյական վերջնաբաղադրիչներով որոշ բարդությունների հոգնակիի ներ-ով ձևերում առկա է ոչ թե սովորական ներ հոգնակերտ, այլ և-+երը հոգնակի ստացականություն: Օրինակներ՝ Մահակը դեմ՝

էին տալիս կոնատակներին և, հերթով, ժպտում լուսանկարող սարքին (ՀՄ, Օգ., էջ 21): Թիկունք ու ողնաշարներից քամեցին հոգնածութիւնը... (ՄԳ, ՄՍԱ, էջ 119): Նրանք պիտի լինեին սարում, որպէսզի անձրևի ժամանակ կրակը տաքացնէր սառած ոսկրածուծները (ՀՄ, Մ., էջ 22) և այլն:

Հոգնակիի կազմութեան տեսակետից գոյական վերջնաբաղադրիչներով բարդ գոյականների նման են նախածանց + միավանկ գոյական կաղապարով գոյականները: 2. Աճառյանը գտնում է, որ դրանց (նա նկատի ունի և նշված կաղապարով ածականները) հոգնակիի կազմութիւնը տարբերվում է բարդ բառերից. «Բարդ բառերի կարգին չեն պատկանում նրանք, որ կազմված են որևէ նախամասնիկով, ինչ. մակբայ, հգ. մակբայներ, մակդիրներ, նախդիրներ, առողջներ, տարբերներ, ներբողներ, և ոչ բնավ՝ մակբայեր, ինչպէս ասում ենք անմիտներ և ոչ բնավ անմիտեր կամ անմտեր»¹³:

Ներկայումս այդ կանոնը լրիվ կիրառելի է նախածանց + միավանկ գոյական կաղապարով ածականներում, իսկ նման կաղապարով գոյականներում այդ կանոնի գործառութիւնը սահմանափակ է: Նախածանց + միավանկ գոյական կաղապարով հոգնակիի ներ կազմութիւնն ունեցող գոյականներից են՝ առկայծներ, դերբայներ, համերգներ, մակբայներ, մակդիրներ, մակնիշչներ: Սրանք հիմնականում հին կազմութիւններ են: Նման կաղապարով որոշ գոյականների հոգնակի թվում առկա են տատանումներ. օրինակ՝ ապացույցե||ներ (ՊՍ, ԵԺ, 1, 1972, էջ 414), բաղաձայներ||ներ, գերձայներ||ներ, համայցեր||ներ, առկայծեր||ներ, հարացույցեր||ներ, ստորակետեր||ներ, վերհուշեր||ներ և այլն:

Մեծ թիվ են կազմում նշված կաղապարով հոգնակիի եր կազմութիւնն ունեցող գոյականները. արտագաղթեր, հակաբույներ, հակախաղեր, ենթաձայներ, ենթախմբեր, ենթակետեր, ենթաշերտեր, հակագններ, համազարկեր, համակարգեր, ներշարեր, շարագծեր, շարակարգեր, պարագծեր, տրամագծեր, տրամաչափեր և այլն: Մեր կարծիքով նման գոյականների հոգնակիի եր-ով կազմութեանը նպաստել է նախածանց + ա հոդակապ + միավանկ գոյական կաղապարով կազմութիւնների գործածութեան հետագա ընդարձակումը: Ա հոդակապը, կարծեք, ավելի է ընդգծում ու առանձնացնում բարդութեան բաղադրիչները¹⁴: Այսպէս էլ

13 2. Աճառյան, նշված աշխ., էջ 819:

14 Հոգնակապի՝ բաղադրիչներն առանձնացնող դերով պետք է բացատրել հավանաբար և որոշ բազմավանկ բառերի հոգնակիի՝ կանոնին չհամապատասխանող եր-ով կազմութիւնների գործածութիւնը. հմմտ. սիրամարգեր (ՀՄ, Մ., էջ 256, ՊՍ, 1, էջ 455, Ս. արվ., 1960, № 2, էջ 50), նախագաներ (ՄՆ, Հիշ., էջ 368, առագաստեր (Բոս., 5—6, 1976, էջ 231), նավատորմեր, վարագույրեր և այլն:

գոյական + ա հոգակալ + միավանկ գոյական կաղապարով բարդութունների մեծ թվով ստեղծումն ու տարածումը գրական արևելահայերենի զարգացման վերջին շրջանում մեծապես նպաստել է միավանկ գոյական բաղադրիչով գոյականների հոգնակին -եր-ով կազմելու կանոնի ընդհանրականացմանը: Այստեղ կարևոր է համաբանության գործոնի ազդեցությունը:

բ) Պոյական բաղադրիչով փոխանուն ածականներ. Միավանկ գոյական կամ բայարմատ բաղադրիչով փոխանուն ածականների շարահյուսական կապը տարբերվում է նմանատիպ բարդ գոյականների բաղադրիչների կապից: Եթե վերջիններին շարահյուսական կապը հիմնականում ենթադրում է սեռի և տեսակի հարաբերություն¹⁵, ապա փոխանուն ածականներում առկա է և այն գոյականի առարկայական իմաստը, որի քերականական հատկանիշների կրողն է դառնում այդ փոխանունը. այսպես՝ շաբազործներ՝ շաբազործ մարդիկ, կակղամորքներ՝ կակղամորթ կենդանիներ և այլն: Փոխանուն այն ածականները, որոնք գոյականաբար հաճախ են կիրառվում, հոգնակին կազմում են միավանկ գոյական բաղադրիչով բարդ գոյականների հոգնակիների համաբանությամբ՝ -եր-ով. այսպես՝ փոքրատառեր, մեծատառեր, նորատունկեր, զուգահեռանիստեր, բազմանիստեր, ծածկասերմեր, մերկասերմեր, հյուսիսափայլեր, անամերձեր և այլն: Կան տերմինային արժեք ստացած նմանատիպ մի շարք բառեր, որոնք գոյականաբար հաճախ գործածվելու հետևանքով հոգնակին կազմում են եր-ով: Բավական տարածված են -ձև, -կերպ, -քև և այլ գոյական բաղադրիչներով փոխանուն ածականների -եր-ով հոգնակիները: Օրինակներ՝ Գնդաձև բակտերիաների տրամագիծը 1—2 մկմ է, ձողաձևերի լայնությունը տատանվում է 0,4—0,8 մկմ (ՉՄ, 2, էջ 243): Խեցգետնակերպերը շրային կենդանիներ են (Կենդ., էջ 66): Սարդակերպերը լինում են տարբեր մեծության (ն. տ., էջ 74), Կարծրաքևերի կարգին են պատկանում այն միջատները, որոնք ունեն առջևի կարծր թևեր (ն. տ., էջ 96): Ուղղաքևերի բերանի օրգանները կրծող են (ն. տ., էջ 89—90): Սիգը Սևանում հարստացրեց իր «ճաշացանկը» նաև հատակային կողալողերով, որով դարեր շարունակ սնվել է իշխանը (Գար., 1979, № 5, էջ 38), այսպես նաև՝ ցուլիկաձևեր (ՉՄ, 2, էջ 243), ստորակետաձևեր (ն. տ., էջ 242), հովազակերպեր, կենդանակերպեր և այլն: Այսպիսի բառերի հոգնակիի կազմության նորման լեզվի զարգացման նախորդ փուլում -ներ-ով էր. օրինակ՝ Իր ցեղակից-

¹⁵ Տե՛ս Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, էջ 46—47:

ուղղաբեկների մեջ մեծակ ինքն է, որ բուն է շինում իր համար (ՀԹ, 1949, 3, էջ 94): Այն բառարանները, որոնք առավելապես ավանդական նորման կն պահպանում, մի շարք նման բառերի հոգնակին ներկայացնում են եր-ով. հմմտ.՝ խեցգետնակերպեր (ԺՀԼԲԲ, հ. 2), կենդանակերպեր (ԺՀԼԲԲ, հ. 3), սարդակերպեր (էԱ, ԱՀԲԲ, հ. 2), ուղղաբեկներ (էԱ, ԱՀԲԲ) և այլն: Միևնույն համատեքստում հանդիպող նման վերջնաբաղադրիչով բառերի հոգնակի զուգաձևերը վկայում են այն մասին, որ հոգնակի կազմության նորման սրանցում դեռևս լիովին հաստատված չէ. հմմտ.՝ խեցգետնակերպեր (ՀՍՀ, 1), ձկնակերպեր (ՀՍՀ, 1), սագակերպեր (ՀՍՀ, 1) և այլն:

Միայն պետք է համարել այն փոխանունների հոգնակիի եր-ով կազմությունները, որոնց վերջնաբաղադրիչի դերբայական իմաստը խիստ ակնառու է. օրինակներ՝ Հիմա մախանենգեր չկան (Գար., 1981, № 7, էջ 5), քաղցրահամեր (Իս., Երկ., հ. 3, 1959, էջ 525): Հայկական ՍՍՀ-ում շարունակվում է կառուցվել 300—1000 մմ տրամագծի գազամուղերի մեծ ցանց (ՍՀ, 5/3, 1979), Ջոկը նրանց ցուցմունքներով էր կառուցում գեռնափորերն ու բլինգածները (ՍՆ, ՄԳՄ, էջ 96) և այլն:

գ) Վերջին միավանկ բաղադրիչով փոխառյալ բարդություններ. Ընդունված է ասել, որ երբ բարդության միավանկ փոխառյալ բաղադրիչը հայերենում չի գիտակցվում ու անկախաբար չի գործածվում, ամբողջ բարդության հոգնակին կազմվում է -ներ-ով. օրինակ՝ սպիրտ-խեղձեր (ՀՍՀ, 2), ֆրոմատֆորներ (Բուս., էջ 202), լուսաֆորներ, պարաֆոսներ և այլն: Իսկ երբ այդ բաղադրիչը գիտակցվում ու անկախաբար գործածվում է, հոգնակին կազմվում է -եր-ով. միկրոֆիլմեր, մոլտֆիլմեր, բլոկպոստեր (ԳՏ, 1978, № 3, էջ 20), ներկապուտեր (ն. տ., էջ 26), ռադիոզոնդեր (ԳՏ, 1983, № 2, էջ 60), էֆսուրասենսեր (ն. տ., էջ 58), աերոզոլեր (ն. տ., էջ 56) և այլն:

Վերջին շրջանում նկատվում են հոգնակի թվի զուգահեռ կազմություններ նաև միավանկ բաղադրիչով փոխառյալ բառերում: Պատճառն այն է, որ գիտության տարբեր բնագավառներում հաճախակի գործածվող փոխառյալ բարդությունների նախկինում չգիտակցվող երկրորդ բաղադրիչները ներկայումս գիտակցվում են կամ գործածվում են իբրև անկախ բառեր: Որպես միավանկ բառեր դրանց հոգնակին կազմվում է -եր-ով. օրինակ՝ ֆագեր (ՀՍՀ, 2), կոկեր (ՀՍՀ, 2), գեներ և այլն: Նման վերջնաբաղադրիչներով փոխառյալ բառերի հոգնակիի մրցակցող ձևերն արտացոլում են նորմայի անկայունությունը. ավանդական եր-ով կազմությունները մի շարք ձևերում դեռևս տեղի չեն տվել. հմմտ.՝ նատյուրմորտներ||եր, հիպոթեզներ||եր, անտիթեզներ||եր, օբերտոներ||եր,

ստեբուտիպներ||եր, մյուզիֆհոլներ||եր, Կոնգոնը լի է մյուզիֆհոլերով (ՎՓ, Երկ., 1, 1979, էջ 132), մտաոբուտներ||եր, կոնտեմստներ||եր և այլն: Ստորև ներկայացնում ենք զուգաձև հոգնակի ստացող փոխառյալ բարդությունների բառաշարքը: Համեմատովյան համար բերում ենք նաև այնպիսի բաղադրիչներ, որոնցով բարդվող բառերի հոգնակին կազմվում է միայն -ներ մասնիկով:

Աղյուսակ № 2

Բազա- զրիչը	Զուգաձև հոգնակի ստացող բառեր	Միայն -ներ ստացող բառեր
-կոկ	ստաֆիլակոկ, ստրեպտոկոկ, պնևմո- կոկ, պլերակոկ, դիպլոկոկ	
-ֆադ	բակտերիաֆադ, դոուպոլիֆադ, մոնո- ֆադ, պոլիֆադ, ֆիտոպոլիֆադ	
-դավը	դինոզավը, բրախիոզավը, դեզանտո- զավը, ինտիոզավը, գադրոզավը	
-թեզ	հիպոթեզ, անտիթեզ	
-սկոպ		էնդոսկոպ, միկրոսկոպ
-սոմ		քրոմոսոմ, ակրոսոմ
-ցիտ		լեյկոցիտ, թրոմբոցիտ, էրիտրո- ցիտ, ֆագոցիտ
-ֆիտ		սապրոֆիտ, պսիլոֆիտ
-ֆել		հալոֆել, պսիլոֆել
-ֆիքս		ինտերֆիքս, սուֆիքս, իդեֆիքս
-ֆոն		մագնիտոֆոն, միկրոֆոն, դրա- մոֆոն

Աղյուսակում ներկայացված փոխառյալ բարդություններն ունեն գործառույթյան նեղ ոլորտ. դրանք հիմնականում գիտության տարբեր ճյուղերին վերաբերող տերմիններ են: Ինչպես արդեն նշվեց, միալանկ վերջնաբաղադրիչով փոխառյալ բարդությունների հոգնակիի -եր-ով ձևերը կազմավորվել են վերջին շրջանում: Այս դեպքում ևս համաբանու-
թյան գործոնի ազդեցությունը նկատելի է. անկախ կիրառություն ունեցող փոխառյալ գոյականները վերջնաբաղադրիչի դերում միտում ունեն հոգնակիի եր-ով կազմությունների:

դ) Բայարմատ բաղադրիչներով բարդություններ. Ինչպես արդեն նշվել է, բայարմատ վերջնաբաղադրիչներով բարդությունների հոգնակին ըստ կանոնի կազմվում է -ներ-ով: Այս բարդություններում գերիշխում են հատկապես արևելքի անող անձ նշանակությամբ՝ հիմնականում մասնագիտություն նշող, բառերը. մատենագիրներ, խմբագիրներ, հայագետներ, վիրաբույժներ, մանկաբույժներ, խմբավարներ, մեքենավարներ, զորավարներ, մարզասերներ, բանասերներ, լեզվաբաններ,

պատմաբաններ և այլն¹⁶։ Այսպիսի բառերում դերբայական իմաստի գիտակցումը բավական ուժեղ է և շեղումները կանոնից սակավադեպ են։ Օրինակներ՝ Նորերս այստեղ բորբոքվեց և երկար ժամանակ տևեց մի հետաքրքրական բանակով՝ մի կողմից մի քանի քառեռագրերի, մյուս կողմից լրագրական քննադատների միջև (Շիրվ., Եժ, 9, էջ 369)։ Գավառներ մեկնող հողաշափերի կատարելիք գործն այս տարի չի սահմանափակվելու միայն վարձագների գանձումով (ԱԲ, Երկ., 4, էջ 266)։ Ու թափորը սկսեց համարքայլ դառնալ հուղարկավորությունից լուռ վերադարձող գեղեզմանափորերի նման (Վրթ. Փափ., Եժ, 5, 1959, էջ 38), հանձնափորեր (ԳՏ, 1972, № 5, էջ 6) և այլն։

Բայարմատ բաղադրիչներով բարդություններում հոգնակիի -եր-ով կազմություններ նկատվում են հատկապես «սարք, գործիք, մեքենա» նըշանակությամբ բառերում։ Դրանցում հոգնակիի եր-ով կազմությունները երևան են գալիս երկրորդ բաղադրիչի բայարմատը միավանկ գոյականի հետ նույնացնելու հետևանքով։ Համաբանության գործոնի ազդեցությունը նման դեպքում տարերային բնույթ է կրում։ Օրինակներ՝ գնդացրեր (ՎԱ, ՄԴ, 1946, էջ 24), գեղեցիկներ (ՍԽ, ՄԳՄ, էջ 96) և այլն։

Բայարմատ բաղադրիչներով բառերում մեծ թիվ են կազմում փոխանուն ածականները, որոնց հոգնակիի կանոնական ձևը -ներ-ն է։ Բայց, քանի որ դրանք հաճախ են հանդես գալիս գոյականաբար, միտում ունեն հոգնակին կազմելու գոյական բաղադրիչներով բարդությունների հոգնակիների նմանողությամբ։

Ստորև ներկայացնում ենք բայարմատ բաղադրիչներով բարդությունների հոգնակիի զուգաձև կազմությունները։ Համեմատության համար բերում ենք նույն վերջնաբաղադրիչներով այնպիսի բառեր, որոնց հոգնակին կազմվում է միայն -ներ-ով (տե՛ս աղ. № 3, էջ 212)։

Պետք է նկատել, որ երկրորդ բաղադրիչի իմաստային գործոնը նըշված մի շարք բառերում վճռորոշ չէ։ Որպես ընդհանուր օրինաչափություն կարելի է ասել, որ դրանց -ներ-ով հոգնակին ա՛վելի հատուկ էր XX դարի առաջին տասնամյակների գրական լեզվին, իսկ -եր-ով ձևերը միայն վերջին շրջանում տարածում գտած ձևերն են, թեև -նետ, -փոր, -ֆեր, -ցիր և այլ վերջնաբաղադրիչներով բառերի եր-ով կազմությունները հանձնարարելի չեն։ Կան նաև բայարմատ բաղադրիչով հոգնակիի զուգաձև կազմություն ունեցող՝ բառաշարքեր չկազմող բարդություններ. գազամուղներ||եր, գնդացիրներ||ցրեր, ակնթարթներ||եր, երկնափեղեր||եր և այլն, որոնց եր-ով ձևերը տարածված չեն (թեև դրանցից որոշները

16 է. Աշխատի «Արդի հայերենի բացատրական բառարանի» 1—300 էջերից դուրս գրված՝ հոգնակին -ներ-ով կազմող 637 բառից 400-ը անձի անվանումներ են։

բառարաններում նշվում են որպես միակ հանձնարարելի ձևեր, ինչպես օրինակ, ակնքարքեր (էԱ, ԱՀՐՐ). Որսած ակնքարքեր, որոնց մեջ մեզ ծանոթ սիրելի արվեստագետներն են (Ավ., 2/10, 1972) կամ էլ կանոնական շեն:

Ա ղ յ ու ս ա կ N 3

Բաղա- դրելը	Զուգաձև հոգնակի ստացող բառեր	Միայն -ներ ստացող բառեր
-անց	գծանց, տողանց	
-թափ	ինքնաթափ, բևեռաթափ, հողաթափ, գառիթափ	
-նետ	ականանետ, նունականետ, ջրանետ	
-շարժ	ինքնաշարժ, երկրաշարժ, շոգեշարժ, տեղաշարժ, գորաշարժ	
-չափ	անձրևաչափ, արագաչափ	հողաչափ, երկրաչափ
-կանգ	ջրականգ, ավտոկանգ	
-մուտ	ելումուտ, արևամուտ, իրիկնամուտ	լուսամուտ
-ցույց	աստղացույց, հողմացույց, սլաքացույց, հեռուստացույց	ժամացույց
-փոր	դետնափոր, ժայռափոր, զամփոր	գերեզմանափոր, հանքափոր
-քարշ	էլեկտրաքարշ, ձիաքարշ, շոգեքարշ, ջերմաքարշ	

Այսպիսով, բայրամատ բաղադրիչով բարդություններում կարծեք որոշ միտում է նկատվում հոգնակին կազմելու անձ և ոչ-անձ հակադրության հիման վրա, քանի որ տատանումներ դրսևորում են հատկապես ոչ-անձ նշանակության բառերը: Սրանցում նկատվող հոգնակիի եր-ով կազմության միտումը պետք է բացատրել համաբանության գործոնի ազդեցությամբ:

Մաքդ ու կին բառերի հոգնակին հնատիպ է՝ մաքդիկ, կանայք: Մաքդեր, կիներ կիրառությունները հանդես են գալիս գրական տարբեր ոճերում, որպես լեզվի զարգացման նախորդ փուլին ավելի բնորոշ ձևերի կամ արևմտահայ գրական նորմայի արտահայտություններ: Օրինակներ՝ Գիսախոփ են կիները (ԳՄ, ԵԺ, 2, էջ 78): Եկեղեցին ... ենթարկվում է ընտանիքի սովորական պայմաններին. աղամաքդերի և կանանց տեղերը որոշված են (Ր, ԵԺ, 9, էջ 335): ... Աղջիկները և մանկահասակ կիները գյուղերում եկեղեցի գնում են տարվա մեջ մի քանի անգամ միայն (Ր, ԵԺ, 9, էջ 335, 1958): Ներկայիս գրական լեզվում գործառում են բացառապես ավանդական կազմությունները:

Մաքդ ու կին բառերը որպես բարդության վերջնաբաղադրիչներ մասամբ իմաստային տարբերակման հիման վրա, մասամբ համաբանության մեջ, առավելապես հանդես են գալիս եր հոգնակերտով: Օրինակներ՝ Այնտեղ այցելողը կարող է տեսնել... Եգիպտոսն ու իր բեռագրերը,

Քարեկունն ու Ասորեստանը իր մորուսավոր գրանիտ ցլամարդերով (ՎՓ, Երկ., 1, էջ 157): Տարօրինակ ծառակոճղերը առասպելական այծամարդերի են նման (Գոլսուուրսի, Ֆորսայթների պատմություն, էջ 330), կապկամարդեր (ԳՏ, 1979, № 3, էջ 42): Տատս ավազն է եղել տեգերկինների մեջ (ՍԿ, հձ., էջ 50), ֆավորակինների (Գ, 1978, № 11, էջ 71): Հանդիպում են նաև ավանդական կազմավորմամբ ձևեր. օրինակ՝ Հավանաբար այդ կառվամարդիկ միշտ էլ գաղտնաբար են բռնում իրենց որսը (Լաո Ծե, Հիշողություններ Կատվաքաղաքից, 1979, էջ 7): Զհամարձակվեցի կուժը զարկել պատին՝ վախենալով, որ կգրավեմ կառվամարդկանց ուշադրությունը (ն. տ., էջ 14), Շատրվանի կոնքերից, այծամարդկանց մորուքից, հեքիաթային նժույզների ռունգերից դուրս հորգացին ջրի կոհակները (ՍԳ, 1983, № 12, էջ 107), կաշվեմարդիկ (ԴԴ, ԵԾ, 23, 1977, էջ 238):

Ն հիմնադրեր կորցրած միավանկ բառերի հոգնակի քվի զուգաձևերը. որոշ տատանումներ առկա են և երբեմնի և հիմքատարրով բառերի հոգնակիի ձևերում: Միավանկ այն բառերը, որոնք հին հայերենում ունեցել են բառավերջում բաղաձայն + ն, արդի հայերենում եզակի քվի ուղիղ (մեծ մասամբ և թեք) ձևերում այդ և-ն կորցրել են: Որպես կանոն այդ և-ն վերականգնվում է հոգնակիի կազմության ժամանակ. բեռ-բեռներ, գառ-գառներ, դուռ-դռներ, եզ-եզներ, թոռ-թոռներ, լեռ-լեռներ, ծոռ-ծոռներ, ծունկ-ծնկներ, հարս-հարսներ, ձուկ-ձկներ, մատմատներ, մուկ-մկներ, նուռ-նռներ և այլն: Այդ վերականգնվող և-ն պատկանում է հիմքին, սակայն նրա զուգորդումը եր-ի հետ թողնում է ներ հոգնակերտի տպավորություն (մանավանդ որ վանկատման ժամանակ այդ և-ն միանում է եր-ին՝ բեռ-ներ):

Է. Աղայանը նշված խմբի բառերի հոգնակիի կազմության մեջ նկատվող տատանումները բացատրում է դրանց հոլովման տարբերություններով: «Կան բառեր, որոնք հոլովվում են և՛ ա՛ն, և՛ ի հոլովումներով. դրանք առաջին դեպքում ստանում են ներ, երկրորդ դեպքում՝ եր: Այսպես՝ ծունկ, ծնկան, ծնկներ և ծնկի կամ ծունկի, ծունկեր. շուրջըքան (հնացած և ժողովրդական) շրթներ և շուրթի-շուրթեր, ռունգունգան (հնացած)-ռնգներ կամ ռունգներ և ռունգի-ռունգեր են»¹⁷: Կարծում ենք, որ այս խմբի բառերի հոգնակիի եր-ով ձևերը (առանց և հիմնատարրի) ստեղծվել են ավելի շուտ միավանկ բառերի հոգնակիների կազմության համաբանությամբ, մանավանդ որ եզակիի ձևերում, որոնք ընդհանուր և հիմնական ձևերն են, այդ և-ն ընկել է:

Եր-ով կազմություններն ընդհանուր առմամբ հատուկ են խոսակ-

ցական լեզվին, իսկ գրավոր լեզվին ավելի բնորոշ են ե+եր-ով ավանդական կազմութիւնները: Գրավոր տարբերակում ևս հանդիպում են խոսակցական լեզվից ներթափանցած եր-ով գործառութիւններ: Ստորև բերում ենք բնագրային համապատասխան վկայութիւններ: Համեմատութեան համար մի շարքում բերվում են եր-ով, մյուսում՝ եր-ով ձևեր:

Նոներ է դարսել ուռննու ճյուղերից հյուսած կողովների մեջ (ՉՄ, Ծ., էջ 119):

Հարսները և աղջիկները ծառայում էին որպես աղախիններ (Բ, ԵԺ, 6, էջ 139):

Բուխարիում վառվում էին վազի մառներ (որոնց տեղացիները արքադ էին ասում) ... (ՍԶ, ԵԺ, 8, 1963, էջ 368): Մանեն ոտների մառների վրա մոտեցավ հիվանդին (ՆԴ, ԵԺ, 3, էջ 183): Հողի, փայտի, մասրենու, արքադ քաշելու գործը նրա մառները կոշտացրել են (ՉՄ, Ծ, էջ 120):

Շտապով մտավ մի նորատի կին և ուղղակի ընկավ երիտասարդ հանճարի ոտների առջև (ՆԴ, ԵԺ, 1, էջ 126—127): Մասն էր լինում արջը հետևի ոտների վրա (ԱԲ, Երկ., 1955, էջ 6):

Մրգեր բերեց Նուբարի համար՝ խնձոր, տանձ, լավ նոն (ՉԲ, ՍԳ, էջ 194): Արևի շողերի մի խուրձ պսպղում էր գորգի վարդերի և նուռերի վրա (ԱԲ, Երկ. 1, էջ 260): Զրի գնալը հարսերի և աղջիկների համար դառնում էր տանջանք (ՍԳ, 1980, № 5, էջ 50): Գլուղում այրի մնացած հարսերի համարքն ավելանում էր (ԱԲ, Երկ., 1, էջ 56):

Խաղողի մառերը մարդու ձեռքերի, նրա ապրած կյանքի նման խորիմաստ ունեն (ՉԶ, 14/4, 1976): Սենյակ մտնելիս մառերը ծոծրակին ազուցած ձգվում ու աջուձախ ջարդում է ողնաշարը... (ՍԳ, 1980, № 6, էջ 76): Մառերի վրա հաշվում էր ծախված խնձորի արժեքը (ՍԶ, ԵԺ, 1, էջ 438): Տրակատորիստ Գևորգը նորից ոտքի կանգնեց և մառերի ծայրերի վրա բարձրանալով, վիզը երկարացրեց առաջ (ՆԶ, 2, էջ 540):

Միջանցքով անցնում էր ոտերի ծայրերի վրա (ՍԶ, ԵԺ, 1, էջ 340): Չաքմաները հազիվ մտան ոտերս (ՍԳ, 1980, № 5, էջ 62):

Օմարի նժույզը ռուզգները լայնացած նայում էր պղտոր հեռուներից (ՀՔ, ՍԳ, էջ 44): Քթի ռուզգները դողացին կատաղությունից (ՆՁ, 2, էջ 194):

Թող հրճվանքի արևը սիրուն ճակատդ ոսկեզօծե և շուրթներիդ վերա՝ սիրո ժպիտը խաղա (Մուր., ԵԺ, 4, էջ 258): Մոտ բերեց նրա գլուխն իր շրթներին և համբուրեց (ԴԴ, ԵԺ, 3, էջ 35, 1956):

Նստել է նա արմունկներով հենված ծնկներին (ԳՄ, ԵԺ, 4, էջ 311): Մինչև ծնկները հասնող կարճ կապանները տրորված-ճրմբթված էին (ՍՁ, ԵԺ, 4, էջ 7, էջ 7):

Բերված մի քանի բառերի եր-ով հոգնակին գրական լեզվում արդեն ամրակալվել է որպես կանոնական ձև. հմմտ.՝ շուրթեր, ռուզգեր. դրանց ներ-ով հոգնակին (շուրթներ||շրթներ, ռունգներ||ունգներ) ավելի հաստուկ է ժողովրդախոսակցական լեզվին: Որոշ բառերում հոգնակիի եր-ով ձևերն են խոսակցական լեզվին հատուկ. հմմտ. հաբներ, մաաեր, ոտեր, ետեր և այլն: Ձուկ, մուկ, դուռ բառերի եր-ով ձևերը գործառու են արևմտահայ գրական տարբերակում: Արևելահայ գրական լեզվում կանոնական են դրանց միայն ներ-ով հոգնակիները: Հոգնակիի զուգաձև կազմությամբ հանդես են գալիս նաև ակեր||ակներ, ողեր||ողներ, հիմեր||հիմներ և այլն: Հնացած է մաս բառի հոգնակիի մասներ կազմությունը. օրինակ՝ Շապուհը յուր զորքերի բազմությունը բաժանեց մի քանի մասների (Բ, ԵԺ, 7, էջ 369). մանրամասն բառն ունի հոգնակիի զուգաձև կազմություն՝ մանրամասներ||եր: Օրինակ՝ Կերպարի անձնավորումը Ս. Սարգսյանը լրացնում է մի քանի նրբորեն զտնված մանրամասերով (ԳԹ, 1978, 10/3): Միավանկ մի քանի այլ բառերի հոգնակիի ներ-ով

Ով պիտի մեր ձիերի փոշտոցից ու նրանց ռզգերի խաղից ձևակերպի մեր կեսօրյա տեղատարափն ու իրիկվա բուբը (ԽԴ, ՌԿ, էջ 420): ...Աղջիկը խորունկ շունչ քաշեց և նրա նրբագեղ ռուզգերն ... թրթռացին (ՆՁ, 2, էջ 549): Նրա կարմրալար շուրթերը դեռ դողում էին (Մուր., ԳՄ, 1939, էջ 279): Ինքը ամեն ինչ անում է այս փոքրիկների շուրթերն ու հոգիները մայրենիի առաջ բացելու համար (ՍԿ, ԽՃ., էջ 4): Ես բախտ ունեցա լսել էլիոնորա Գուզեի շրթերից իր լավագույն ստեղծագործության վերլուծումը (ՎՓ, Երկ., 1, էջ 117):

Նազելու ոտները հասնում էին իմ ծունկերին (ԳՄ, ԵԺ, 2, էջ 71): Նա սկսեց կապել հզան ծունկերն ու կճղակները (Գար., 1971, № 8, էջ 81):

ձեռքը բարբառային են և դուրս են գրական կանոնից: Օրինակներ՝ Կո-
դուպլաված վազները թռչուններից ու երեխաներից դեռ թաքցնում էին սե-
խաղողի մի երկու ողկույզ (ՀՄ, Մ, էջ 81), ...ծառներից մրգեր են
կախվել (Թոթ., ԿՀՀՃՎ, էջ 158): Կտրեց ծառի նդները (ԴԴ, ԾԺ, 2, էջ
57) և այլն:

Իմաստային տարբերակման հիման վրա հոգնակիի եր-ով կազ-
մությունն այսպիսի բառերում սակավադեպ է: Օրինակ՝ Վերջերս գազի
խողովակների ծունկեր պատրաստեցինք («Ծրևան», 1960, № 5):

Հոգնակիի զուգաձևերը պահպանվում են նաև այն բարդություններ-
ում, որտեղ և հիմքատարրով բառերը հանդես են գալիս որպես վերջնա-
բաղադրիչներ: Օրինակներ. Ու նա միացրեց բթամառներն ու ցուցամառ-
ները (ԳՄ, ԾԺ, 2, էջ 196): Վերջապես նա երկար ձողի նման մի բան
հանեց առաստաղի ծածկամատերի արանքից (Գ, № 11, 1978, էջ 36):
Հեռագրասյունների ցուցամատերը մեկ-մեկու հետևից խրվում էին վա-
զոնների աչքը (ԴԴ, ԾԺ, 2, էջ 390): Զաքարը գլխով արավ՝ բթամա-
տերը գոտին խրած (ՍԶ, ԾԺ, 2, էջ 461): Ունամատերն ու ձեռքերը ...
որսում են տերևների զողոցքը (ԳԹ, 18/3, 1983): Եկեղեցու սանդղամա-
տերին կանգնել են երեխաները (ՍԿ, ԽՃ., էջ 95): ...նորահարսները ...
մաքրում էին իրանց տան առջևը (Բ, ԾԺ, 5, էջ 35, 1956): Նա նմանում
էր ... անտառային հավերժահարսներից մինին (Բ, ԾԺ, 1, էջ 508):
Հոծ բազմության մեջ ջրահարսերի, Իստոմիան է կանգնած նազելի
(Ա. Ս. Պուշկին, 3, էջ 16, 1956): Կեչիները ոնց որ նորահարսեր լինեն
(ԳԹ, 10/3, 1978): Ամեն գիշեր մշուշի մեջ ճշում են ծովահարսեր (ՎՍ,
Իմ սիրտը լեռներում է, 1963, էջ 133):

Եր-ով հոգնակին այս ձևերում ունի հաստատման միտում. սակայն
այն բառերը, որոնք հոգնակիի եր-ով կազմություն չունեն, այդ կանո-
նը պահպանում են և բարդության մեջ. հմմտ. օձաձկներ, գայլաձկներ,
նագարամկներ, դաշտամկներ և այլն. սրանց եր-ով հոգնակիի անհնչյու-
նափոխ ձևերը հատուկ են արևմտահայ տարբերակին (օձաձուկեր, գայ-
լաձուկեր, դաշտամուկեր), իսկ եր-ով հնչյունափոխված ձևերը՝ չնորմա-
վորված խոսքին՝ գայլաձկներ, դաշտամկներ և այլն:

Երբեմնի և հիմքատարրով միավանկ բառերի հոգնակիի եր-ով ձև-
վերում առկա են նաև հնչյունափոխված ու անհնչյունափոխ հիմքերով
տարբերակներ. ծնկեղ||ծունկեր, շրթեր||շուրթեր, բուր||բուտեր, նուր||
նուտեր և այլն:

Այս խմբի մեջ մտնող բառերի հոգնակիի կազմությունն ունի ձևաբանական այն յուրահատկությունը, որ երկրորդ՝ գաղտնավանկ ը-ով վանկը, որ եղակի թվում լիահունչ է, հոգնակի թվում ենթարկվում է $\text{ը} > \text{զ}$ ափսոսաբանության¹⁸: Հիմքի վերջին բաղաձայնը միանալով եւ հոգնակեցողին, կազմում է մի առանձին վանկ եւ հիմքում մնում է մեկ վանկ. հմմտ.՝ վա՛-զ(ը)ր-վագ-րեր, աս-տ(ը)ղ-աստ-ղեր և այլն: Այդ բառերն են՝ ազդր, ակր, անգղ, արկղ, ասող, գամփռ, դուստր, դաշն, եգր, գերր, գուր, ժանր, լիտր, ծալր, կարր, կայսր, կուպր, հյուսն, մետր, մեղր, մանեւ, նեգր, շիֆր, ոսկր, սպեկտր, վագր, տետր, սակր, սանր, տեգր, տեմբր, ուտր, ֆետր, ֆիլտր: Զեական տեսակետից այս բառերը, փոքր բացառությամբ, ունեն այն ընդհանրությունը, որ վերջանում են ռ-ով, ղ-ով ու նախորդող բաղաձայնով: Կան նմանատիպ որոշ ածականներ ևս՝ համր, մանր, փոֆր, ֆաղցր, բարձր, ցածր և այլն: XIX դարի վերջին և XX դարի առաջին տասնամյակներում գրական լեզվի անբավարար մշակվածությունն հետևանքով նշված բառերի հոգնակիի կազմության նորման դեռևս հաստատուն չէր. այդ է պատճառը, որ տրվել են տարբեր, երբեմն էլ հակադիր կարծիքներ դրանց հոգնակիի կազմության վերաբերյալ: Այսպես, Պալասանյանը գտնում է, որ նման բառերում ըբ ձայնավազը մտնում ու մեկ վանկից երկու վանկ է կազմում բաղաձայնների խստությունը մեղմացնելու համար¹⁹:

Մ. Նալբանդյանը նույնպես գտնում է, որ այդ բառերը երկվանկ են: Նա իր «Հատվածների աշխարհագրաբար քերականության ներածությունից» ուսումնասիրության մեջ նշում է, որ ժողովուրդը դժվարանում է նման բառերն արտասանել և ա ավելացնելով դարձնում է երկվանկ (ծան-տըր, ման-տըր, սան-տըր): «Եվ եթե զրագետը այսօր առանց ափ կամենան գործ դնել այս բառերը (որպես և գործ են դնում) ծանր, սանր, մանր) այսու ամենալինիլ ստիպված են լեզվի բնական օրենքին համեմատ այդ բառերի հոգնակին վերջավորել իբրև բազմավանկ բառերի հոգնակի, սանրների, մանրների, ծանրների և ոչ սանրեր, մանրեր, ծանրեր»²⁰: Ղ. Աղայանն, ընդհակառակը, դրանք համարում է միավանկ բառեր. «Այն բառերը ևս միավանկ են համարվում, որոնց վերջավորությունը լինում է ը կամ ըն, ըր, ըղ. ինչպես ձուկն, ակն, զառն, փուռն, լյառն, մուկն ... Աստղեր, արկղեր, դատրեր, անգղեր, սանդրեր և ոչ աստղեր,

¹⁸ Հմմտ. Հ. Զ. Պետրոսյան, *Նշված աշխ.*, էջ 322:

¹⁹ Ս. Պալասանյան, *Ընդհանուր տեսություն արևելյան գրավոր լեզվի հայոց*, Թիֆլիս, 1870, էջ 24:

²⁰ Մ. Նալբանդյան, *Եժժ*, հ. 3, 1940, էջ 340—341:

անգղներ, կուպրներ, սանդրներ ... Այս տեսակ բառերի վրա չի ավելանում ներ, այլ միայն եր»²¹:

2. Աճառյանն այս կապակցութեամբ գրում է. «Այն բառերը, որոնք իրենց վերջին վանկում ունեն ը ձայնավորը, տատանվում են երկուսի միջև. արեւելյան գրականում համարվելով բաղմավանկ՝ ստանում են -ներ մասնիկը, իսկ արեւմտյան գրականում՝ համարվում են միավանկ և ստանում են -եր մասնիկը. ինչպես աստղ-աստղներ, աստղեր, կայսր-կայսրներ, կայսրեր, արկղ-արկղներ, արկղեր, տարր-տարրներ, տարրեր, սանր-սանրներ, սանրեր»²²: Ինչպես նշել ենք, մինչև XX դարի առաջին տասնամյակները մեկուկեսավանկանի կոչվող բառերի հոգնակիի կազմութեան օրինաչափությունը հստակ չէր, և արեւելյան գրականում հաճախադեպ էին հատկապես ներ-ով ձևերը. հմմտ.՝ դուստրներ (ԳՎ, ՊՔ, էջ 12), եզրներ (ՊՊ, ԵԺ, 3, էջ 586), աստղների (Բ, ԵԺ, 7, էջ 473), շաքրներ (ն. տ., 310), կոճղներ (ն. տ., էջ 18), վագրներ (ն. տ., 497), կայսրներ (Իս., Երկ., 3, 204) և այլն: Ներկա փուլում նշված խմբի բառերի հոգնակիի կանոնական կազմությունը եր-ով է. դա համապատասխանում է ինչպես բարեհնչունութեան, այնպես էլ խնայողութեան սկզբունքին: Ներկայումս հոգնակիի զուգաձև կազմությունը պահպանվել է միայն արկղ, ոսկր, ազգր, գամփո բառերում. ոսկր և ազգր բառերի հոգնակիի եր-ով կազմություններն ավելի հատուկ են գրական, ներ-ով ձևերը՝ խոսակցական լեզվին. արկղ և գամփո բառերի ներ-ով ձևերն ավելի տարածված են: Բերենք քննադրային վկայություններ.

... Բոլորը տեղավորվեցին արկղերի և հակերի արանքներում (Գար., 1978, № 2, էջ 4): ... Վարորդը սենյակ է բերում թղթերիս զուլգ արկղերը (ՍԿ, ԽՃ., էջ 3):

Անգղերը և ցինները ճախրում էին գյուղի վրա ... (ՎՓ, ԵԺ, 2, 1958, էջ 142):

Նրա հնամաշ շորերի ձորձորը թռչկոտելով դիպչում էին բարձր ազգրերին ու բաց սրունքներին (ՀԹ, ԵԺ, 3, 1949, էջ 24):

... Գնեց մի երկու փեթակ մեղու, որ մի քանի տարվա մեջ այնքան բազմացան, որ նա արկղներ շէր հասցնում (ՍԶ, ԵԺ, 1, էջ 428): Հավաքեցի բոլոր կարևոր ու անկարևոր այս բաները և լցրեցի արկղների մեջ (ՍԿ, ԽՃ., 392): Նրանց անանուն դիակները կերել են քաղցած անգղները ... (Իս., Երկ., 3, էջ 471):

Սևուկը հետո էր, ազգրները քրտնքից սևացել էին (ՀԹ, ԵԺ, հ. 3, 1949, էջ 211):

21 Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, 1963, էջ 392:

22 Հ. Աճառյան, նշված աշխ., էջ 818:

Հոգնակիի զուգաձև կազմությունները պահպանվում են նաև նըշ-
ված բառերով բարդություններում: Ոսկր բառի առանձին գործածությու-
նը քիչ է հանդիպում: Օրինակներ՝ Հիվանդի ոսկրները ցավում են (ԱԲ,
Երկ., 1955, էջ 66): Մեծ հոգինների հոյակապ մարմիններից միայն հո-
յակապ ոսկրներն էին մնացել (ԽՂ, 17/4, 1921): Ներկա փուլում կա-
նոնական է ոսկրե կազմությունը: Այն ավելի հաճախ հանդես է գալիս
որպես բարդության վերջնաբաղադրիչ: Ոսկր վերջնաբաղադրիչով բառե-
րում ներ-ով ավանդական կազմությունները նույնպես տեղի են տալիս
եր-ով ձևերի առջև: Բերենք զուգահեռ կիրառությունների բնագրային
վկայություններ: Նա միջահասակ մի կին էր, որի այտուկները հիվան-
դությունից սուր-սուր դուրս էին ցցվել (ՆԳ, ԵԺ, 1, էջ 454): Ժամանակա-
կից տուպայի կոնֆոսկրները ձգված ու նեղ են (ԳՏ, 1976, № 10, էջ
37): Ունֆոսկրներ՝ էլի վրան կաշի բաշած երկաթ... (ՀՄ, Օգ., էջ
101): Մի վիթխարի տղամարդ էր նա ցցուն այտուկերով (Գ, 1978,
№ 1, էջ 32): Կան թերաճ ազդրոսկրեր... (ԳՏ, 1978, № 1, էջ 57):

Արևիկ բառի հոգնակիի եր-ով և ներ-ով ձևերը հավասարապես գրա-
կան ու կանոնական են: Օրինակներ՝

Բոլորովին նոր, անանուն գըր-
բույկներն առած զնացի խնայ-
դամարկղերը (ՍԳ, 1981, № 1,
էջ 153):

Թունելների ծանրության ներքո
սուզարկղերը իջնում էին, խըր-
վում գրունտի մեջ (ԳՏ, 1978, №
4, էջ 28):

Նրա բնակիչները տարեկան աղ-
բարկղերն են նետում 9000 տոն-
նա սննդամթերք (ԳՏ, 1977, №
10, էջ 58):

Պահարկղեր (ՀՁ, 28/9, 1983,
էջ 8):

Դրամական շահումները վճարում
են խնայողական դրամարկղները
(ՍՂ, 19/3, 1978):

Դամբարանների մեծ մասը փա-
րարկղներ են (ՀՁ, 17/1, 1973, էջ
1):

Կրագրերը... աղմկում էին, տը-
ների փոստարկղներում նետված
զանազան ծանուցումները՝ նույն-
պես (ՍԿ, Խճ., էջ 164): Տառա-
րկղներ (ԳՄ, ԵԺ, 2, էջ 229):

Տատանումներ շունեն և հիմքատարրով մեկուկեսվանկանի բառերի
հոգնակիի ձևերը. հիմքի և-ի գիտակցումը դրանցում ուժեղ է. համա-
նյուաներ, խաշներ, հիմներ: Նույնը պետք է ասել և ազն-ով բաղադրվող
բառերի հոգնակիների կազմության վերաբերյալ: Օրինակներ՝ Թող գան
փեսացուներ՝ արֆայազներ, իշխանազներ, ասպետներ (Իս., Երկ., 3,
էջ 195): Դյուցազները սարսափեցին (ՀԹ, ԵԺ, 4, 1951, էջ 10):

Որոշ տատանումներ առկա են ր-ով ու նախորդող բաղաձայնով վեր-

ջավորվող փախառյալ բառերի հոգնակիի ձևերում. հմմտ.՝ ջեմպրեր|| ջեմպրներ, սվիտրեր||սվիտրներ, շիֆրեր||շիֆրներ, մանկեր||մանկրներ և այլն: Գրական ու կանոնական են եր-ով կազմությունները: Ներ-ով ձև-վերն հատուկ են խոսակցական լեզվին: Օրինակներ՝ Վայրի զեքրներով վխտացող Նիսում ես (Գար., 1971, № 8, էջ 80): ... Երաժշտական ստե-րեոտիպերը ... վերաբերում են վիրբատոյին ու ձայներանգներին (տեմ-բլեներին) (ԳՏ, 1981, № 9, էջ 47): Ներկա փուլում մեկուկեսումանկանի բառերի հոգնակիի եր-ով կազմությունը վերածվել է ընդհանրական կանոնի:

Մեկուկես սկզբնազաղտնամակուլ բառերի հոգնակին ներ-ով է: Տատանումներ նկատվում են սկիզբ բառի հոգնակիի ձևերում՝ սկզբներին|| սկզբերին:

Հոգնակիի կազմության որոշ տատանումներ նկատվում են նաև բն., ոն հնչյունակապակցություններով վերջավորվող երկվանկ բառերում: Չա-նոնականն ու ընդհանրականը սրանց ներ-ով կազմություններն են, սա-կայն հանդիպում են և եր-ով ձևեր: Օրինակներ՝ Փողն է եղեռների մղում (Իս., Երկ., 3, էջ 206): Օ՛ անգոր են քո հանդեպ մահացումները ամեն, Ամեն աղետ ու ավեր ու եղեռները դժխեմ (ՍԿ, Յոթ կայ., էջ 53): Ջուրը փոխադրեցին ցխտեռներով (ՄԳ, 1964, № 7, էջ 92): Կայանը ... բնա-կիչներին ամեն տարի կմատակարարի բալուններով հեղուկ գազ, որը հա-տուկ ցխտեռներով ալյուսեղ կբերվի երկաթուղով (ՍՀ, 21/2, 1959) և այլն: Նման բառերի մեկ ն-ով հոգնակիի ձևերում առկա է բարեհնչու-նության պահպանման միտում, երբեմն էլ՝ նորմայի ոչ հստակ գիտակ-ցում (հնարավոր է, որ հոգնակիում զրստրվող մեկ ն-ն փոխառյալ բառի ն վերջնահնչյունը հզակիում չգիտակցելու ու շղործածելու հետևանք լինի):

ՍՍԱՑԱԿԱՆ ՀՈԳՆԱԿԻԻ ԶՈՒԳԱՁԵՎԵՐԸ

Ստացական հոգնակին առնչվում է ինչպես գոյականի թվի կար-գին, այնպես էլ՝ առկայացման կարգի ցուցաստացականության ենթա-կարգին:

Ստացական հոգնակին իբրև քերականական իրողություն ձևավորվել է նոր հայերենի զարգացման շրջանում: Այն ունի բարբառային-խոսակ-ցական աղունքներ, սակայն աստիճանաբար արմատավորվել է նաև գրական լեզվում²³: Ստացական հոգնակին լայն կիրառություն ունի գեղարվեստական արձակում: Որոշ կիրառություններ առկա են և հրա-

²³ Հմմտ.՝ Հ. Զ. Պետրոսյան, նշված աշխ., էջ 328—329:

պարակախոսական ոճում: Օրինակներ՝ Միթե կարելի է մոռացութեան տալ այն 600000 սովետական մարտիկների հիշատակը, որոնք կյանքները նվիրաբերեցին հանուն Լեհաստանի ազատագրման (ՍՀ, 5/6, 1981): Զպետք է ծուլերի հոգեբանութեամբ հույսներս զնենք լուր արտաքին հրաշքների վրա (ՎՏ, Երկ., էջ 557):

Ստացական հոգնակի են կազմում մարմնի մասերի մի շարք անվանումներ. դրանցից են՝ աչք, բե, դեմք, կողք, կուրծք, ծոց, մազ, մեջք, շուրք, ձեռք, ոտք, վիզ, ուս, սիրտ, շունչ և այլն: Ստացական հոգնակի կարող են կազմել նաև առաջին, երկրորդ կամ երրորդ դեմքերին անմիջականորեն առնչվող այլ առարկաներ ու երևույթներ. դրանցից են՝ խելք, խիզ, միտք, հույս, կյանք, բուն, ուժ, ուշք, գիրք, հաց, շալ, տեղ և այլն:

Ստացական հոգնակին կազմավորվում է միավանկ հիմք-ներ-ստացական հոգ կազապարով. այլ խոսքով ասած, եր հոգնակերտին զուգորդվում են ն-ս, ն-դ, ն-ը (ն) զուգամասնիկները, ինչպես՝ աչք-ն-եր-ս, հույս-ն-եր-դ, ոտք-ն-եր-ը և այլն:

Սակայն կան ստացական հոգնակիի ոչ քիչ թվով այնպիսի կիրառություններ, երբ սովորական միավանկ հիմք-ներ-ս (դ, ը) կազապարի փոխարեն հանդես է գալիս միավանկ հիմք-եր-ս (դ, ը) կազապարը: Այդպիսի դեպքերում տեղի է ունենում եզակի և հոգնակի ըստացականութեան ձևական շեղոքացում: Օրինակներ՝ Գարսոնների հագին բեմական ֆրակներ են, կրծքներին՝ սպիտակ օձիքներ... (ՍԿ, ԽԾ., էջ 460): Ուսուցիչ-ուսուցչուհիները դանդաղ, տեղերից հաղիվ բարձրանալով, նորից գնում են դասարանները (ԵՁ, ԵԺ, 5, էջ 70): Այսպիսի գործառնությունները, սակայն, չեն բացառում մեկ և ավելի անձերի հարաբերութեամբ վերցվող ստացականութեան գիտակցումը: Դա պայմանավորվում է հիմնականում համատեքստից հասկացվելու հանգամանքով:

Ստացական հոգնակիի զուգահեռ կիրառությունների վերաբերյալ նշումներ կան Մ. Արեղյանի մոտ. «Մեր, ձեր, իրենց կամ նրանց հոգնակի դերանունների նշանակութեամբ գործ են ածվում՝ 1) Միավանկ անունների համար հոգնակին՝ երս, երդ, երբ ձևով կամ ներս, ներդ, ներբ...: ...Արեբ, ինչ որ սրտերդ (սրտներդ) կուզի: ...2) Բազմավանկ անունների համար հոգնակին՝ ներս, ներդ, ներբ ձևով... ինչպես՝ պարտեզներս... (մեր պարտեզը): Պարտեզներս սակայն նշանակում է նաև իմ պարտեզները²⁴:

24 Մ. Արեղյան, Եզված աշխ., էջ 520:

Այսպիսով, Ե-ով և առանց Ե-ի կիրառություններն էլ հենց կազմում են միավանկ հիմքով ստացական հոգնակիի զուգահեռ ձևերը: Բեքենք բնագրային համապատասխան վկայություններ:

Մարդիկ ծիծաղից արտասովում էին ու փորձերը բռնում (ՆՁ, 2, էջ 354):

Երեխաները աչքները թարթում են (ՀՄ, Մ, էջ 256):

Հորթերը պոչները տնկած այցի էին գալիս ծերունու ծառերին (ՍՁ, ԵԺ, 1, էջ 332):

Տղաներն իջան, դեմքներն այդ լեռների երկինքն արած (ՄԳ, ՄՍԱ, էջ 118):

Հյուրերը տեղներից շարժվելու միտք չունեին (ՄԳ, 1980, № 6, էջ 91):

... Խաղողով լիքը կողովներն ուսներին դրած գնացքի կողմն էին վազում տասնյակ աղջիկներ (ՀՔ, ՄՏՁ, էջ 86):

Ուսուցիչներն ու ուսուցչուհիները ցույաակները ձեռքներին, շտապում էին իրենց դասարանները (ՆԴ, ԵԺ, 3, էջ 314):

Բերված օրինակներից դժվար չէ ենթադրել, որ ստացական հոգնակիի Ե-ն չի դրսևորվում ք(Ե) հոգերի հետ գործառելու դեպքում, իսկ ս և և դ հոգերի հետ սրպես կանոն Ե-ն կիրառվում է: Օրինակներ՝ Ուշքներդ դեպի պատմողը (ՀՄ, Օգ., էջ 259): Ուզում եք շորներդ հագնել, բայց տեսնում եք, որ ..., քանդվել են ձեր շորերի բոլոր կապերը (ԵՁ, 5, էջ 253): Ծուկիցս եկեք, թե չէ մազներդ կփետեմ (ՄԳ, 1980, № 5, էջ 11): Հազվադեպ ու անսովոր են այն օրինակները, երբ ս, դ, հոգերի հետ

Հատուկենտ կանայք, հնամաշ խալաթները փառերի վրա մի կերպ կոճկած, առևտուր էին անում (ԳԹ, 2/2, 1979):

Աչքերը երկաթգծի հեռուն՝ սրտատրոփ սպասում էին անհամբեր նայիրցիները զնացքի մոտենալուն (ԵՁ, ԵԺ, 5, էջ 171):

Հաճույքից նրանք պոչերը տնկում էին (ՆՁ, 2, էջ 511):

Գալիս անցնում էին կողքովս իմ հւյրենակիցները՝ դեմքերը կըշտապինդ, գոհ, շուրթերին՝ անզլերենը (ՄԿ, ԽՏ., էջ 369):

Մարդիկ լսում էին բրիգադավարների զեկուցումը՝ տեղերից հաճախակի առարկելով (ՆՁ, 2, էջ 65):

Ապարանքատար վագոնների մեջ պառկել էին զինվորներ՝ շինկներըն ուսերին պցած (ՀՔ, ՄՏՁ, էջ 81):

Երկու գերեզմանափոր ռամիկներ բահերը ձեռքներին կանգնել էին սևահողի մոտ (ՍԽ, ՄՍ, էջ 565):

ստացական հոգնակին հանդես չի գալիս: Օրինակ՝ Ես ու Մկրտիչը ոտ-
ֆերիս մատները վրա գնալով, կանգնեցինք դռան ետևը (ՊՊ, ԵԺ, 3,
էջ 418): Գրեքս ձեռք առանք և սկսանք ամեն ոք դասերը բարձրա-
ձայն կրկնել (Ն. տ., էջ 379): Մեր գրաբար կարճ գրությունները տեսավ
և հրամայեց տեղերս նստել (Ն. տ., 381): Խոստանում եք, որ միշտ
դասերդ լավ պատրաստեք (Ն. տ., 381): Մենք նայում էինք բլուրին՝
աչքերս սարսափից շոթ (ԵԶ, Պոեմներ, բանաստեղծություններ, 1984,
էջ 490) և այլն:

Այնպիսի դեպքերում, երբ հնարավոր է եզակի և հոգնակի ստացա-
կանությունների շփոթ, ստացական հոգնակին հանդես է գալիս
միայն միավանկ հիմք+ներ ա/դ, ը/ կաղապարով: Օրինակներ՝ Արի գը-
նանք, արի գործներս վերջացնենք (Շիրվ., ԵԺ, 6, էջ 363): Եկավ կերավ
նացներս (ՀՄ, Օգ., էջ 95): Գործներդ ոնց է գնում (ՀՄ, Մ, էջ 37) և այլն:

Գարձվածներում ստացական հոգնակին հիմնականում հանդես է գա-
լիս ընդունված կաղապարով. հմմտ.՝ աչքներդ լույս, խղճներդ մեռնի,
նույսներդ մի կորցրեմ, խելներդ գնաց, խելներդ թոցրին, թուներդ
ցամաքեց, քթներդ վեր փռեցին, խոսքներդ մեկ արին և այլն: Հանդի-
պում են և առանց ն-ի կաղապարումներ:

Առանց ն-ի կիրառությունները կարելի է համարել ստացական հոգ-
նակիի գրականացման միտումի արտահայտություն: Ժողովրդախոսակ-
ցական ոճը հարազատորեն պահպանող գրողների լեզվին բնորոշ է
ստացական հոգնակիի ընդունված կաղապարով կիրառությունը: Օրին-
ակներ՝ Մնացածները թուրները դնում են Քաջ Նազարի ոտի տակին
(ՀԹ, 3, 1969, էջ 225—226): Պառավ սկեսուրը և հաստլիկ տատմերը
(շալները վերցրած, որ չթրջվեն), առաջ եկան ... (ՍԶ, ԵԺ, 2, էջ 473):
Ելան տեղներից ու, շունչները պահած, ականջ դրին (Ն. տ., էջ 458):
Մեր որթերի արանքով պատները բարակ, վիզները նեղ կարմիր կարաս-
ների շարք էր (ՀՄ, Մ, էջ 305): Նրանք պիտի լինեին... սարում՝ կար-
կոտի տակ կթվոր, գետով փայտ առաքող, մանկամսուրի հավաքարար-
կուրծքները սմբեր երեխաների բերանում, կոնքները մաշվեր խոտի բեռան
տակ, պորտներն ընկներ գերանդլի զոռից, դեմքները կնճռոտվեր հար-
յուր կողմի վրա ժպտալուց ... (Ն. տ., էջ 22): Տարին մեկ-երկու անգամ
մարդիկ կգան, օդները կփոխեն (ԳԹ, 16/4, 1982):

2. Պետրոսյանը գտնում է, որ բոլոր ստացական հոգնակիների հիմ-
քերը անհնչյունափոխ են²⁵: Սակայն այստեղ ևս կան հնչյունափոխված
ու անհնչյունափոխ հիմքերով կաղամավորումներ. օրինակներ՝ կրծքներին

25 Տե՛ս Հ. Զ. Պետրոսյան, *Եզված աշխ.*, էջ 331: Տե՛ս նաև Վ. Գ. Առաքելյան,
Ա. Հ. Խաչատրյան, Ս. Ա. Էլոյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 1, էջ 139:

(ՆԴ, ԵԺ, 1, էջ 59), սրաներում (ՎՓ, Երկ., 1, էջ 292), մտնե՞րում (ԴԴ, ԵԺ, 2, էջ 23) և այլն: Եզակի և հոգնակի ստացականությունը երբեմն դրսևորվում է տարբեր հնչյունափոխությամբ. հմմտ.՝ շրքներ և շուրքներ, դոներդ և դառներդ: Դուռներդ միշտ բաց լինի (ՀԹ, ԸԵ, 1978, էջ 145):

Ստացական հոգնակիի կազմության որոշ տատանումներ նկատվում են ն-ով վերջավորվող միավանկ բառերում: Օրինակներ՝ Գնացեք բաներիդ (ԴԴ, ԵԺ, 2, էջ 165): Բաներս բուրդ է... (Իս., Երկ., 3, էջ 74): Բաները վատ է երևում (ՍԶ, ԵԺ, 4, էջ 19): Հիմա քաշվեցեք տներդ և մտածեցեք... (ԴԴ, ԵԺ, 3, էջ 200): Տներս քանդվեց, լևտն շան (ՆԶ, 2, էջ 445): Տուններս քանդվեց:

Անձնական դերանվան հոգնակի սեռական + գոյական կապակցություններով և գոյական + ն + եր + (ս, դ, ը) կազմավորումները համանիշական և ոչ նույնանիշական շարքեր են կազմում. օրինակներ՝ Նրանք բանջարով լի իրենց փեշերը փորների վրա բռնած՝ վազ տվին դեպի տրակտորը (ՆԶ, 2, էջ 238): Նրանք բանջարով լի փեշները փորների վրա բռնած վազ տվին դեպի տրակտորը: Զայրույթն է եռում մեր կրծքերի տակ (ՄԳ, 1980, № 5, էջ 58): Զայրույթն է եռում կրծքներս տակ: Ստացական հոգնակիի իմաստը սաստկացվում է, երբ միաժամանակ նշում են և՛ անձնական դերանվան հոգնակի սեռականը և՛ գոյական + ներ (ս, դ, ը) ձևաբանական կաղապարը. օրինակներ՝ Մերունին հիմա պատնեշում էր մեր մեջքները (ՀՔ, ՄԳ, էջ 29): Աշխատում էին պարի մեջ քաշել իրենց տեղները... նստած տեղացիներին (ՍԿ, ՔԴՔ, էջ 182): Նման կիրառությունները օրինաչափական չեն:

Ա մ փ ո փ ո լ մ

Գոյականի քերականական կարգերում զուգահեռ ձևերի առկայությունը պայմանավորվում է լեզվում գործող տարբեր, երբեմն՝ հակադիր միտումների փոխներթափանցումներով: Բոլոր կարգերում ամենավճակակներ համաբանության գործոնի ազդեցությունն է: Որոշ դեր ունեն լեզվի տնտեսման միտումը, պարզության, բարեհնչունության հասնելու ձգտումը, ավանդույթի ուժը, որով պահպանվում են հնակազմ և արդի կանոնին չհամապատասխանող ձևերը, հանրալեզվաբանական կարգի գործոնները և այլն:

Ինչպիսի՞ տեղաշարժեր ու միտումներ են նկատվում գոյականի քերականական կարգերում՝ կապված գրական լեզվի նորմայի շրջանակներում գործող զուգահեռության դանազան դրսևորումների հետ:

Հոլովի կարգում որպես կանոն զուգահեռ ձևեր են կազմում այլ հոլովումների պատկանող բառերի ի-ով ձևերը: Դա, անշուշտ, բացատրվում է ի հոլովման համաբանությունով: Իսկ ի հոլովման պատկանում է գոյական բառապաշարի մոտ 68 տոկոսը կազմող բառաշերտը: Գրական լեզվում հոլովական զուգահեռ շունեն նաև ա հոլովման պատկանող -ուքուն ածանցով բառերը, որոնք կազմում են բառապաշարի 18 տոկոսը: Մնացած հոլովումներում զուգահեռ ձևերը բառաշերտն ընդգրկում են մասնակիորեն և գործառում են տարբեր ոճերում: Այլ հոլովումների պատկանող բառերի ի-ով ձևերն ընդհանուր առմամբ կազմում են էական կամ ընդգծված ոճական երանգավորում շունեցող ձևեր: Ոճական ընդգծված երանգավորում ունեն հոլովման հնացած, արխաիկ և բարբառային ձևերը: Դա բացատրվում է ի-ով ձևերի ընդհանրացման ձգտումով: Բայանունների գործառության շրջանակների ընդլայնման ներկա պայմաններում զգալիորեն ավելացել է դրանց ի-ով ձևերի կիրառությունը հատկապես գեղարվեստական գրականության լեզվում: Ի-ի տարածման միտում նկատվում է նորակերտ կամ քիչ գործածվող ու գրքային կազմություններում: Չափածոյում ի-ով ձևերի տարածմանը նպաստում է մասամբ և բարեհնչունության ու պարզության հասնելու ձգտումը, ինչպես և հանգի, ութմի, վանկաքանակի պահպանման պահանջը: Սա վերաբերում է և այլ հոլովումների բառերի զուգահեռ ձևերին: Բայանունների ի-ով ձևերի մեջ իմաստային տարբերակումները քիչ են: Իմաստային տարբերակման անհրաժեշտությամբ առաջացած զուգահեռ թեև քիչ, բայց նկատվում են գրեթե բոլոր հոլովումներում: Այդ տարբերակումը վերաբերում է բառերի ինչպես նոր իմաստներին, այնպես էլ փոխաբերական կիրառություններին:

Այլ հոլովման պատկանող հասարակ գոյականների ի-ով ձևերն, ընդհակառակը, լեզվի զարգացման նախորդ փուլի համեմատությամբ նվազել են և տեղի են տվել ավանդական ու-ով ձևերի առջև: Սակայն ի-ով վերջավորվող օտարազգի հատուկ անունների և փոխառյալ հասարակ գոյականների գործառության սահմանների հետագա ընդարձակումը հանգեցրել է ի-ով ձևերի տարածման նաև այս հոլովման մեջ: Համաբանությունն այստեղ վերաբերում է հատկապես ի-ով վերջավորվող հայոց տեղանուններին, որոնց ավանդական ու-ով ձևերի կողքին հավասարապես գործառում են և ի-ով ձևերը: Տարբեր ածանցներով բառաշարքեր կազմող հայոց անձնանունների ու-ով ավանդական ձևերի պահպանումը բացատրվում է դրական ժառանգորդությամբ և ավանդույթի ուժով: Ելի ածանցով ածականների փոխանվանական կիրառություններում մասամբ համաբանության գործոնի ազդեցությամբ, մասամբ էլ

քերականական համանունութունից խուսափելու պահանջով նկատվում է ի-ով ձևերի տարածման միտում:

Վա հոլովման (ինչպես և իմաստային այլ հոլովումների) պատկանող բառերի ի-ով կամ վա-ով ձևերն ունեն իմաստային կամ ոճական-կիրառական նուրբ տարբերություններ: Լեզվի տնտեսման միտումը նկատվում է այլ հոլովումների բառերի բուն տրականի հոդավոր ձևերում (ծընկին, առավոտին և այլն), որոնք մեկ վանկաքանակով պակաս են:

Ու, վա, աև, ոչ հոլովումների պատկանող բառերի բացառականում նույնպես առկա են զուգահեռ կազմություններ: Այդ զուգաձևությունը բացառական հոլովը ուղղականի կամ սեռական-տրականի հիմքով կազմելու հետևանք է: Այս կամ այն հիմքով կազմությունը մեծ մասամբ ունենում է ոճական-կիրառական, մասամբ էլ իմաստային տարբերակումներ և վերաբերում է ոչ, վա հոլովումների պատկանող ոչ բոլոր բառերին:

Գրական լեզվում լայնորեն գործառում են նաև բայանունների գործիականի ավանդական ք-ով և ընդհանրական ով-ով կազմությունները: Դրանք մրցակցող զուգաձևեր են և կանոնարկման ենթակա չեն, ինչպես, մեր կարծիքով, կանոնարկման ենթակա չեն առհասարակ այն զուգաձևերը, որոնք պայմանավորվում են լեզվի զարգացման ներքին օրենքներով: Մրցակցող ձևերից մեկի կամ մյուսի ընտրությունը հաճախ կատարվում է մեխանիկորեն, լեզվական ավտոմատիզմի ուժով և ձևերից միայն մեկի ընտրությունը, որքան էլ այն լինի ընդհանրականի միտողը, արհեստականորեն համահարթում է լեզուն: Կանոնարկումն անպատճառ պետք է արտացոլի լեզվի իրական նորման, նրա դինամիկությունը, որը թույլատրում է հավասարաթեք կամ մրցակցող և ոճական տարբերակների զուգահեռ գոյությունը: Նորմավորման հասնելու ձգտումը քերականագիտության ու բառարանագրության պրակտիկայում երբեմն հանգեցնում է զուգաձևերի անտեսման կամ մասնակի մատնանշման: Հոլովի կարգում բավական գործուն են հնչյունական զուգաձևերը: Հնչյունափոխված ու անհնչյունափոխ հիմքերով տարբերակները մեծ թիվ են կազմում ի և ու հոլովման պատկանող բառերի թեք հոլովաձևերում: Այստեղ ավանդույթի ուժին ու տնտեսման միտումին հակադրվում է պարզության, բարեհնչունության հասնելու ձգտումը: Մասնակի վիճակագրական քննությունն հաստատում է, որ միավանկ (երկու կողմից փակ) բառերի ավանդական հնչյունափոխված ձևերը գերակշիռ են անհնչյունափոխներից:

Գոյականի թվի կարգում զուգահեռ ձևերն անհամեմատ քիչ են: Զուգաձևեր նկատվում են ստացական հոգնակիի, երբեմնի և հիմքատար-

րով միավանկ բառերի, մեկեկես վերջնագաղտնավանկով բառերի խըմբերում, որոնց մեջ մտնող գոյականների թիվը մի քանի տասնյակից չի անցնում: Ավելի մեծ թիվ են կազմում վերջին միավանկ բաղադրիչով բարդ բառերը. սակայն այստեղ զուգահեռ ձևեր նկատվում են ոչ-անձ նշանակութայն խմբում, որն անձի անվանում կամ մասնագիտություն նշող խմբից քանակով բավական քիչ է: Թվի կարգում ավելի գործուն են եւ և նեւ հոգնակերտների փոխանցումներից առաջացող զուգաձևերը: Դրանց առկայությունը բացատրվում է համաբանության գործոնի ազդեցությամբ, բարդ բառերի բաղադրիչների իմաստների երկակի ընկալմամբ կամ մթազնմամբ, բարդութայն վերաիմաստավորմամբ, ավանդական ձևերի հոգնակիների վերակառուցմամբ և այլն: Համաբանության գործոնի դերը մեծ է գոյական վերջնաբաղադրիչով բարդություններում: Նախածանց + ա հոդակապ + միավանկ գոյական կաղապարով գոյականների, գոյական + միավանկ գոյական կաղապարով բարդությունների, փոխառյալ միավանկ վերջնաբաղադրիչներով բառերի նեւ-ով ձևերը տեղի տվող կամ հնացած են, կամ էլ պահպանվում են ավանդույթի ուժով: Հոգնակիի եւ-ով կազմություն առկա է և ոչ-անձ նշանակութայն բայարմատ բաղադրիչով՝ գործիք, սարք, մեքենա, առարկա մատնանշող այն բառախմբերում, որոնցում երկրորդ բաղադրիչի դերբայական իմաստը մթազնված է կամ առարկայացված: Տատանումներ առկա են այն բառերում, որոնց երկրորդ բաղադրիչը կարելի է ընկալել և՛ որպես բայարմատ, և՛ որպես գոյական (հմմտ. ձեռագործ՝ ձեռքի գործ և ձեռքով գործված, սլաքացույց՝ սլաքացուցիչ և սլաք ցույց տվող, բեռնաթափ՝ բեռնաթափ մեքենա, բեռնաթափիչ և բեռ թափող) և այլն: Գոյականաբար հաճախ կիրառվող միավանկ գոյական բաղադրիչով փոխանուն ածականների հոգնակիի կազմություններում նկատվում է գոյականների նմանողությամբ հոգնակիի եւ-ով կազմության միտում (հմմտ. սագակերպեր, թևալողեր, խեցգետնակերպեր, մերկասերմեր և այլն: Այսպիսի կիրառություններում բարդության իմաստը մղվում է երկրորդ պլան: Ստացական հոգնակիի ձևաբանորեն շնչութավորվող ձևերն արտացոլում են եզակի և հոգնակի ստացականության իմաստների շեղբացման, ստացական հոգնակիի ձևական դրսևորման սահմանափակման միտումները: Դա բացատրվում է ստացական հոգնակիի գրականացնելու պահանջով: Ստացական հոգնակիի միավանկ բառ + ն + եւ + ս, դ, ը կաղապարով հանդես է գալիս բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է իմաստային շփոթ (հմմտ. եկավ կերավ հացներս, մազներդ կպոկեմ և այլն):

Հոգնակիի կազմության ժամանակ վերականգնվում է և-ով վերջաւորվող միավանկ բառերի մեծ մասի հիմքակազմ և-ն (բեռ-ն-եր, դո-ն-

եր, գառ-ն-եր, նռ-ն-եր): մնացած բառերում առկա է ղուգաձևություն (հարսեր||հարսներ, ծովահարսեր||ներ, ծնկներ||ծունկեր, մատներ||մատեր, ցուցամատներ||եր և այլն):

Հ Ա Մ Ա Ռ Ո Տ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

- ԱՐ — Ակսել Բակունց, *Երկեր*, հ. 1, Երևան, 1976:
- Ավանգ. — «Ավանգարդ»:
- Արվ. — «Արվեստ»:
- Բեձ — «Բանբեր Երևանի համալսարանի»:
- Գ — «Գարուն»:
- ԳԹ — «Գրական թերթ»:
- ԳՄ — Գուրգեն Մահարի, *Երկերի ժողովածու*, հ. 2, Երևան, 1967:
- ԳՍ, Բ — Գարեգին Սևունց, *Բեհշրան*, Երևան, 1952:
- ԳՎ, ՊՔ — Գրիգոր Վազցյան, Պատմական քերականություն արևելահայ լեզվի, *Թիֆլիս*, 1906:
- ԳՏ — «Գիտություն և տեխնիկա»:
- ԴԴ — Դեռենիկ Դեմիրճյան, *Երկերի ժողովածու*, հ. 2, 3, Երևան, 1977:
- ԵՁ, ԵԺ — Եղիշ Զարեց, *Երկերի ժողովածու*, հ. 5, 3, Երևան, 1966:
- ԶԴ — Զարգանդ Դարյան, *Ասք նգա*, Երևան, 1983:
- ԷԱ, ԱՀԲԲ — Էդուարդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
- ԷԱ, ԺՀՀԽ — Էդուարդ Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:
- ԺՀԲԲ — Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Երևան, 1969—1980:
- Իս., Երկ. — Ավետիք Իսահայան, *Երկեր*, հ. 3, Երևան, 1959:
- ԽԴ, ՌԿ — Խաչիկ Դաշտենց, Ռանչպարների կանչը, Երևան, 1978:
- ԽՀ — «Խորհրդային Հայաստան»:
- ՀԱ, ԼՔՀԼ — Հրայր Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 3, Երևան, 1957:
- ՀԲ, ՈՒՈՒՏԲ — Հովհաննես Բաբսեղյան, Հայերենի ուղղագրական-ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Երևան, 1973:
- ՀԲ, ՀԽՄՈՒ — Հովհաննես Բաբսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսումնաբեր, Երևան, 1980:
- ՀԹ, ԵԺ — Հովհաննես Թումանյան, *Երկերի ժողովածու*, Երևան, 1949—1951:
- ՀԹ, ԸԵ — Հովհաննես Թումանյան, *Ընտրի երկեր*, Երևան, 1978:
- ՀՀ, Բան. — Հովհաննես Հովհաննիսյան, Բանաստեղծություններ, Երևան, 1937:
- ՀՁ — «Հայրենիքի ձայն»:
- ՀՄ, Օգ. — Հրաեո Մաթևոսյան, «Օգոստոս», Երևան, 1967:
- ՀՄ, Մ. — Հրաեո Մաթևոսյան, *Մառերը*, Երևան, 1978:

- ՀՄ, ՄՎ — Հրանտ Մաքևոյան, Մեր վազըը, Երևան, 1978:
 ՀՄ, ՀՀԶ — Հովհաննես Մելիքեյան, Հեռավոր հողի ձայնը, Երևան, 1973:
 ՀՇ, ՔԶ — Հովհաննես Շիրազ, Քնար Հայաստանի, հ. 2, Երևան, 1964:
 ՀՇ, Սև — Հովհաննես Շիրազ, Սիամանթոն և Խաչեղարի, Երևան, 1955:
 ՀՊ, ԳԹԿԶ — Հրանտ Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972:
 ՀՊ, Գոյ. առ. հայ. — Հրանտ Պետրոսյան, Գոյականի առումները հայերենում, Երևան, 1960:
 ՀՍԶ — Հայրական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, հ. 2, Երևան, 1976:
 ՀՔ, ԸԵ — Հրայր Քոչար, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1975:
 ՀՔ, ՍԳ — Հրայր Քոչար, Սպիտակ գիրքը, Երևան, 1965:
 ՀՔ, ՄՏՁ — Հրայր Քոչար, Մեծ տան զավակները, Երևան, 1959:
 ՂԱ, ԸԵ — Ղազարոս Աղայան, Ընտիր երկեր, Երևան, 1956:
 ՂԱ, Երկ. — Ղազարոս Աղայան, Երկեր, Երևան, 1979:
 ՄԱ, ՀԼՏ — Մանուկ Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
 ՄԳ, ՄՍԱ — Մուշեղ Գալստյան, Մարտի սարի ամպերը, Երևան, 1981:
 ՄՆ, ԸԵ, — Միխայիլ Խարանդյան, Ընտիր երկեր, Երևան, 1945:
 Մուր., ԳՄ — Մուրացյան, Գևորգ Մարգարեանի, Երևան, 1939:
 Մուր., ԵԺ — Մուրացյան, Երկերի ժողովածու, հ. 1—5, Երևան, 1951—1954:
 ՆԲ, ԵԺ — Նար-Նոս, Երկերի ժողովածու, հ. 1—3, Երևան, 1955:
 ՆՋ, Հ — Նաիրի Զարյան, Հացավան, Երևան, 1955:
 Շիրվ., ԵԺ — Ալեքսանդր Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. 4—6, Երևան, 1959:
 Շիրվ., ԵԺ — Ալեքսանդր Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Երևան, 1955:
 ՊՊ, ԵԺ — Պերե Պոռչյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1953:
 Ռ. Իշխ., ԱՀՀԽ — Ռաֆայել Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971:
 ՌՊ, Երկ. — Ռաֆայել Պատկանյան, Երկեր, Երևան, 1950:
 ՍԳ — «Սովետական գրականություն»:
 ՍՋ, ԵԺ — Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, Երևան, 1950—1964:
 Սև, Հ — Սերո Խանզադյան, Հողը, Երևան, 1954:
 Սև, ՄՍ — Սերո Խանզադյան, Միտիթար Սպարապետ, Երևան, 1963:
 ՍԿ, ԽՀՔԳ — Սիլվա Կապուտիկյան, Խճանկար հողու և բարտեղի գույներին, Երևան, 1976:
 ՍԿ, ՔԳԲ — Սիլվա Կապուտիկյան, Քարավանները դեռ բայում են, Երևան, 1964:
 ՍԶ — «Սովետական Հայաստան»:
 ՍՄ — «Սովետական մանկավարժ»:
 ՍՄ, ՀՐՐ — Ստեփան Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944—1945:
 ՍՊ, ՔԼԲ. — Ստեփան Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, Բիֆլիս, 1906:

- ՎԱ, ՀՎՓԲ — Վախրանգ Անանյան, Հին վրանի փոքրիկ բնակիչը, Երե-
վան, 1978:
- ՎԱ, ՄԴ — Վախրանգ Անանյան, Մարտի դաշտում, Երևան, 1946:
- Վ. Թոթ., Երկ. — Վահան Թորոզենց, Երկեր, Երևան, 1957:
- ՎԹ, ԿՀՀՃՎ — Վահան Թորոզենց, Կյանքը հին հոովմեական ճանապար-
հի վրա, Երևան, 1966:
- ՎՊ, ԴԱ — Վարդգես Պետրոսյան, Դեղատուն «Անի», Երևան, 1973:
- ՎՍ — Վիլյամ Սարոյան, Իմ սիրտը լեռներում է, Երևան, 1963:
- ՎՏ, Ե. — Վահան Տերյան, Երկեր, Երևան, 1956:
- ՎՓ, Երկ. — Վահրամ Փափազյան, Երկեր, հ. 1, Երևան, 1979, հ. 2,
Երևան, 1981:
- Վրթ. Փափ. — Վրբանես Փափազյան, Երկերի ժողովածու, հ. 1, 2, Երե-
վան, 1958:
- Ր, ԵԺ — Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3—10, Երևան, 1955—1959: